

ՎԱՍՄ ԱՐԴԱՐՈՒԹԵԱՆ

2/2016

ԲՈՒՄ ՀԱՅՈՑ 4509 ԱՄԻ

For the Sake of **JUSTICE**

2/2016

Gore Armenian 4509

(74)

ՀՐԱՏԱՐԱԿՎՈՒՄ Է ԳՈՐԴՄԻ «ՍՅՈՒՆԻՔ»
ԻՆՍՏԻՏՈՒՏԻ ԳԻՏԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԻ
ԵՐԱՇԽԱՎՈՐՈՒԹՅԱՄԲ:

Գլխավոր խմբագիր
ԳԵՎՈՐԳ ԳԱԳԻԿԻ ՄԱՆՈՒԿՅԱՆ
Իրավաբան

Գիտական խմբագրական խորհուրդ

ՌՈՒԲԵՆ ՀՈՎՍԵՓԻ ԱՎԱԳՅԱՆ
*Իրավաբանական գիտությունների դոկտոր,
պրոֆեսոր*

ՄԱՆՈՒԿ ԱՇՈՏԻ ՄԿՐՏՉՅԱՆ
*Մանկավարժական գիտությունների դոկտոր,
Ֆիզիկա-մաթեմատիկական գիտությունների
թեկնածու, դոցենտ, ՌԴ Սոցիալական և
մանկավարժական գիտությունների
ակադեմիայի
ակադեմիկոս*

ԳԱՐԻԿ ՄԻՇԱՅԻ ՔԵՆՅԱՆ
*Քաղաքական գիտությունների դոկտոր,
պրոֆեսոր*

ՀԵՆՋԵԼ ԳԵՐԱՍԻՄԻ ՄԱՆՈՒՉԱՐՅԱՆ
*Պատմական գիտությունների թեկնածու,
փիլիսոփայական գիտությունների դոկտոր,
պրոֆեսոր*

ԱՐՄԵՆ ՄԵՐՈՋԱՆԻ ՄԱԶՄԱՆՅԱՆ
Իրավաբանական գիտությունների դոկտոր

ՄԱՄՍՈՆ ՄԱՆԹԱՇԻ ՔԱՌՅԱՆ
Պատմական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր

ԳՐԱՎԻԿ ԱՇՈՏԻ ԲԱԲԱՅԱՆ
*Մանկավարժական գիտությունների թեկնածու,
պրոֆեսոր*

ԻԶԱԲԵԼԼԱ ԳՐԱՎԻԿԻ ԲԱԲԱՅԱՆ
*Մանկավարժական գիտությունների թեկնածու,
դոցենտ*

ԶՆԼՖՈՒՂԱՐՅԱՆ ՄԱՐՏԻՆ ՄՍՏՎԵՆ
Իրավաբանական գիտությունների թեկնածու

Խմբագիրներ
ՍՈՃՅԱ ՄԻՄՈՆԻ ԲԱԲԱՅԱՆ
ՌՈՒԲԵՆ ՎԱՉԱԳԱՆԻ ՊԱՐՄԱՍՅԱՆ

Համակարգչային ձևավորող
ԼՈՐԱ ՄԱԹԵՎՈՍՅԱՆ

PUBLISHED ON THE RECOMMENDATION OF
THE SCIENTIFIC COUNCIL OF THE "SYUNIK" IN-
STITUTE OF GORIS

Editor-in-Chief
GEVORK GAGIK MANOUKIAN
Lawyer

Scientific Editorial Board

RUBEN HOVSEP AVAGYAN
Doctor of Law, Professor

MANOUK ASHOT MKRTCHYAN
*Doctor of Pedagogical Sciences, Candidate of Physical
and Mathematical Sciences, Academician of the Russ-
ian Academy of Pedagogical and Social Sciences*

GARIK MISHA KERYAN
Doctor of Politology, Professor

HENZEL GERASIM MANOUCHARYAN
*Candidate of Historical Sciences,
Doctor of Philosophy, Professor*

ARMEN MERUJAN MAZMANYAN
Doctor of Law

SAMSON MANTASH KARYAN
Doctor of Historical Sciences, Professor

GRAVIK ASHOT BABAYAN
Candidate of Pedagogical Sciences, Professor

IZABELLA GRAVIK BABAYAN
*Candidate of Pedagogical Sciences,
associate professor*

MARTIN MATVEY ZILFOUGHARYAN
Candidate of Law Sciences,

Editors
SOFIA SIMON BABAYAN
RUBEN VACHAGAN PARSAMYAN

Designer
LORA MATEVOSYAN

ԱՅՍ ՀԱՄԱՐՈՒՄ

IN THIS ISSUE

ՎԱՉԻԿ ԱՐԱՄԱՅԻՍԻ ԲՐՈՒՏՅԱՆ.

«Մարդու իրավունքների փիլիսոփայական իմաստը և հիմնավորումը»

VACHIK ARAMAYIS BRUTYAN:

”Philosophical Significance and Rationale of Human Rights”

ՅՈՒՐԱ ՎԱԶԳԵՆԻ ՂՈՒԼՅԱՆ.

«Հայ-ադրբեջանական սահմանային խնդիրների պատմությունից»

YURA VAZGEN GHULYAN:

“From the History of the Armenian-Azerbaijani Frontier Issues”

ՍԱՄՍՈՆ ՄԱՆԹԱՇԻ ՔԱՌՅԱՆ.

«Հայ-ֆրանսիական հարաբերությունների պատմությունից»

SAMSON MANTASH QARYAN:

“From the History of Armenian-French Relations”

ԱՐԿԱԴԻ ԳԵՎՈՐԳԻ ԱՀԱՐՈՆՅԱՆ, ԱԼԵՔՍԱՆԴՐ ԽԱՉԱՏՈՒՐԻ ՀԱԿՈԲՅԱՆ.

«Հերբիցիդների անվտանգ օգտագործման էկոլոգիական գնահատումը»

ARKADI GEVORG AHARONYAN, ALEXANDER KHACHATOUR HAKOBYAN:

“Ecological Assessment of Herbicide Safe Uses”

ՌՈՒԲԵՆ ՎԱՉԱԳԱՆԻ ՊԱՐՍԱՄՅԱՆ.

«Թուրքական ծավալապաշտության և էթնիկ գաղմկների քաղաքականության արմատները, վտանգը եվ արդի ըմբռնումները»

RUBEN VACHAGAN PARSAMYAN:

“The Turkish Expansionism and Ethnic Cleansing Policy Roots, Risks and Current Perceptions”

ԱՆԻ ԼԵՎՈՆԻ ԽՈՒՐՇՈՒԴՅԱՆ.

«Ապացույցների թույլատրելիության հիմնախնդիրները քրեական դատավարությունում»

ANI LEVON KHURSHUDYAN:

“The Problems of Admissibility of Evidences in Criminal Law Procedure”

ՄԱԿ-ի էջ

«Միավորված ազգերի կազմակերպության գլխավոր քարտուղար Բան Կի Մունի ուղերձը ՄԱԿ-ի օրվա առթիվ».....

UN page:

“United Nations Secretary General Ban Ki-Moon's message on UN Day”

Սույն համարից սկսած «Վասն արդարության» իրավական գիտամեթոդական հանդեսը հրատարակվում է ԳՈՐԻՍԻ «ՍՅՈՒՆԵՔ» ԻՆՍՏԻՏՈՒՏԻ ԳԻՏԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԻ երաշխավորությամբ: Հավատարիմ իր քաղաքացիական ավանդույթներին, հանդեսը ներառում է Մարդու իրավունքների, իրավունքի, այդ թվում՝ ֆինանսական իրավունքի, քաղաքագիտության և հարակից ոլորտները:

ՄԱՐԴՈՒ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ՓԻԼԻՍՈՓԱՅԱԿԱՆ ԻՄԱՍՏԸ ԵՎ ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄԸ

Իրավունքի փիլիսոփայության տեսանկյունից մարդու իրավունքները իրենցից ներկայացնում են ընդհանրապես իրավունքի ձև: Ըստ երկու այլընտրական տեսություններից մեկի կամքի ազատությունն իր կրողին տալիս է կամքի առավելություններ մյուսի կամքի վրա, որն իր հետ բախման իրավիճակում է: Մեկ այլ շահի տեսության տեսանկյունից իրավունքները ծառայում են դրանք կրողի պաշտպանության կամ շահերի իրականացման համար:

«Իրավունք» և «պարտականություն» հասկացություններն իրավունք երևույթի բացահայտման համար ունեն այնքան մեծ կարևորություն, որ կարող են համարվել իրավունքի մոդուսներ: Ինչպես հայտնի է, մոդուսը (լատ. Modus - չափ, մեթոդ, կերպար, ձև) սուբստանցիայի բացառիկ դրսևորում է, ուստի իրավունքները և պարտականությունները իրավունքի գաղափարի անմիջական և բացառիկ դրսևորումներն են:

Իրավունքի ֆենոմենը սերտորեն կապված է մարդու, նրա էության, մարդկային կեցության իմաստի հետ: «Իրավունքի բոլոր փիլիսոփայական հարցերի պատասխանները, գրում է իրավական էքզիստենցիալիզմի ներկայացուցիչ Է. Ֆեյնները, կանխ-բռնվում են մարդկային կեցության իմաստի հարցի պատասխանով»¹:

Այս արտահայտությունն արտացոլում է իրավունքի հանդեպ մարդաբանական կողմնորոշումը: Իրավունքը ներկայացվում է, մի կողմից, որպես

երևույթ, առանց որի մարդը չի կարող գոյություն ունենալ, մյուս կողմից բացահայտում է մարդկային կեցության կառույցի այնպիսի պահանջներ, որոնք սկիզբ են դառնում իրավական հարաբերությունների: Այս հանգամանքը հնարավոր է դարձնում իրավական մարդաբանության գոյությունը:

Ինչ է իրավական մարդաբանությունը: Ինչպես հայտնի է, փիլիսոփայական մարդաբանություն է կոչվում փիլիսոփայության այն մասը, որում ուսումնասիրվում են մարդը որպես հատուկ գոյություն, մարդկային բնույթի և կեցության հիմնախնդիրները, վերլուծվում են մարդկային գոյության եղանակները:

Փիլիսոփայական մարդաբանությունը ժամանակակից բարոյական և իրավական փիլիսոփայության հիմքն է²: Հենց մարդու էության անդրադարձն է թույլ տալիս հիմնավորել իրավունքի գաղափարը, արդարության չափորոշիչները, այսինքն՝ լուծել իրավունքի փիլիսոփայության հիմնական հարցերը: Տվյալ հանգամանքը թույլ է տալիս փիլիսոփայության շրջանակում առանձնացնել մի բաժին, որն իրավական մարդաբանությունն է:

Իրավական մարդաբանության համար բնորոշ են դրա հիմնադիրներից մեկի Գ. Գրոցիի դատողությունները, ըստ որի՝ մարդու բնույթի մեջ բացահայտված են այնպիսի հակումներ, ինչպիսիք են օգուտի գաղափարից չկախված ձգտումը դեպի հանրակեցությունը: Ըստ Գրոցիի իրավունքի գաղափարը կապված է մարդու առաքե-

¹ Fechner E. Rechtsphilosophie. Tubingeh, 1956, c. 278.

² Рикер П., Торжество языка над насиллием. "Вопросы философии". 1996, N4, c. 28

լուծյան հետ: Ըստ այդ հայեցակետի՝ այն, ինչ համապատասխանում է մարդու էությանը, բարոյական է, իսկ այն, ինչ պահպանում է հանրակեցության անդորրը և կառուցվածքը, օրինաչափ է: Քանի որ ձգտումը դեպի նման հանրակեցություն իրենից ներկայացնում է հակում, որը դրված է մարդկային բնույթի մեջ, այդպես էլ իրավունքի գաղափարը բարոյական է և համարվում է մարդու էության դրսևորումներից մեկը:

Այսպիսով՝ իրավական մարդաբանությունը մատնանշում է մարդու կեցության մեջ իրավունքի հիմքերը: Իրավական մարդաբանությունը կարելի է սահմանել որպես մարդու իրավունքի սուբյեկտի կեցության եղանակների և կառուցվածքի մասին ուսմունք, ավելի հակիրճ՝ իրավունքի ուսմունք մարդկային կեցության եղանակի մասին:

Իրավունքի բոլոր ձևերից փիլիսոփաներին առաջին հերթին հետաքրքրում են մարդու իրավունքները, այսինքն՝ նրանք, որոնք վերաբերում են մարդուն կամ սուբյեկտիվ իրավունքներ են, որն ունենալու համար կարող է հավակնել յուրաքանչյուր մարդ՝ անկախ պայմաններից: Դրանք գտնվում են ժամանակակից քաղաքական նախագծերի կենտրոնում, որոնց էությունն արտացոլվում է իշխանության և արդարության նախնական ու բացառիկ կապի մեջ³:

Իմաստային բովանդակությամբ մարդու իրավունքներն ուրվագծում են մի տարածք, որը յուրաքանչյուր մարդու համար ապահովում է ինքնիրացման պայմաններ, անհատական ինքնավարության տարածք:

Լուսավորության դարաշրջանից սկսած՝ մարդու իրավունքներն անվանել են «բնածին», «սուրբ», «անօտարելի»:

«Բնածին» նատուրալիստական տեր-

մինը մարդու իրավունքների ընկալումն արձանագրում է որպես այնպիսի անհատական իրավագործություններ, որոնք մարդը ձեռք է բերում ծնվելու հանգամանքով իսկ պայմանավորված: «Սուրբ» արտահայտությունն ունի հետևյալ աշխարհիկ իմաստը՝ «անկասկած», «անվիճելի» կամ իրավաբանական լեզվով ասած՝ «վերին» կամ «վերիիրավաբանական», այսինքն՝ դրանք երբևիցե և ոչ ոք չի կարող մարդուց խլել, ինչպես նաև մարդը չի կարող դրանցից հրաժարվել⁴:

Ավանդաբար մարդու իրավունքները ըմբռնվում են որպես անհատների այնպիսի իրավունքներ, որոնք նրանց հնարավորություն են տալիս պաշտպանվելու իրենց ազատությունների դեմ պետական իշխանության կառույցների ոտնձգություններից: «Քաղաքացին ընդդեմ իշխանության» բանաձևում արտացոլվում է մարդու իրավունքների հակավտորիատոր իմաստը կամ, ըստ էության, բացասական իմաստը, որը ցույց է տալիս «ազատությունը ինչ-որ բանից» և դրա խստիվ պահպանումը որպես ժամանակակից դարաշրջանի անհրաժեշտ պահանջ:

Մարդու իրավունքների նշանակությունը որպես ժամանակակից իրավակարգի օրինականացման կարևոր սկզբունք, պահանջում է այդ իրավունքների ավելի խոր ուսումնասիրություն, այսինքն՝ անցում անմիջապես խնդրին՝ մարդու իրավունքների, գաղափարների փիլիսոփայական-մարդաբանական հիմնավորմանը և այդ իրավունքների ակունքների բացահայտմանը:

Ժամանակակից իրավական մարդաբանության տեսանկյունից, որը քաղաքական մարդաբանության մի մասն է, հաստատելով մարդու բնածին, սուրբ և անքակտելի իրավունքները՝ արտացոլ-

³ Хёффе О., Политика. Право. Справедливость. М., Гнозис; Логос. 1994. 328 с., с. 248, 289.

⁴ Соловьев Э. Ю., Чтобы мир до времени не превратился в ад (Религия прогресс и идеал правового государства) // Знание – сила. 1995, N7, с. 14

ված ժամանակակից մարդասիրական հայեցակարգում՝ դրանք պետք է դիտարկել գոյաբանության տեսանկյունից որպես մարդկային գործողության պայման:

Այդ ամենի համար անհրաժեշտ է տարբերել առավելագույն և նվազագույն մարդաբանությունները: Առաջինը շեշտը դնում է մարդու փոփոխությունների և բարեփոխումների ունակությունների վրա: Երկրորդն ընդունում է մարդու իր ինքնությունը պահպանելու անհրաժեշտությունը:

Առավելագույն մարդաբանությունը փորձում է բացահայտել, թե որն է մարդու կեցության լավագույն ձևը. այն կողմնորոշվում է դեպի մարդու վեհ կերպարը, բայց, որպես կանոն, անտարբեր է իրավունքի և մարդու իրավունքների նկատմամբ: Այդպիսին էր մարդու կերպարը Նիցշեի և Հայդեգերի մոտ, ռոմանտիկ մարդու կերպարը պլավոնների մոտ և մարքսիզմի գաղափարախոսության մեջ (բազմակողմանի զարգացած անձ):

Նվազագույն մարդաբանությունը հրաժարվում է տարբեր ֆելեոլոգիաներից (ուսմունք մարդու նպատակային առաքելության մասին): Այն, թե ինչպիսին պետք է լինի մարդը, կախված է հենց այդ մարդու որոշումից: Այսինքն՝ մարդը որոշվում է այն նվազագույն պայմաններով, որոնք անհրաժեշտ են մարդուն, և որը մարդուն մարդ է դարձնում: Հենց այդպիսի բնորոշում է տալիս մարդու իրավունքներին ֆրանսիացի փիլիսոփա Ա. Գյուլյամանը:

«Մարդու իրավունքների գաղափարը իր որոշակի ուրվագիծն է ստանում ոչ այն պատճառով, որ մենք գիտենք, թե ինչպիսին պետք է լինի իդեալական մարդը, ինչպիսին պետք է լինի ըստ իր բնույթի կամ որպես կատարյալ նոր մարդ, ապագայի մարդ և այլն: Ո՛չ,

մարդու իրավունքի գաղափարը որոշակիություն է ստանում այն պատճառով, որ մենք լավ ենք պատկերացնում, թե մարդը ինչպիսին չպետք է լինի...»⁵:

Ուստի իրավական մարդաբանությունը մարդու սահմանման գործում շեշտը դնում է նրա վրա, թե ինչին պետք է ձգտի մարդը՝ երջանկությանը, ինքնիրացմանը կամ գոյության իմաստավորմանը, և այն նախնական պայմանների վրա, որոնք մարդուն մարդ են դարձնում: Մրանք բնածին են, անօտարելի, ուստի կրում են մարդաբանական բնույթ: Դրանք մարդկության գոյության հնարավորությունների պայմաններ են: Իսկ մարդու իրավունքները այդ պայմանների ապահովման սկզբունքներն են:

Մարդաբանության տեսանկյունից մարդու իրավունքների հիմնավորման սկզբունքը արտահայտվում է հետևյալում. «որպես մարդ մարդը պետք է ունենա իրավունք»: Այդ իրավունքը նա պետք է ունենա, որպեսզի առօրեական ճահճի մեջ չխրվի: Ընդ որում՝ նա այդ իրավունքը պետք է ունենա որպես մարդ, ոչ թե որպես «աստվածակերպ էակ», որպես «գերմարդ», այլ ուղղակի որպես մարդ, հետևաբար՝ ոչ կատարելագործված «հողեղեն» էակ, որը միջին դիրքեր է գրավում «բարության կատարելագործման» և «չարության նսեմության», սրբի և գազանի միջև: Այս իրավունքն իրեն չի ապահովում երաշխավորված շարժմամբ դեպի նորը, այլ միայն թույլ չի տալիս իջնել այն որոշակի սահմաններից ցած, որից հետո ավարտվում է մարդկայինը: Մարդու իրավունքներն ունեն մարդաբանական հիմքեր նաև մարդու ներքին ձգտումներում՝ դեպի ռիսկը և նորարարությունը, որը բացահայտվում է սեփական անձը, իր էքզիստենցիան պահպանելու ձգտման մեջ: Բարոյականության տե-

⁵ Соловьев Э. Ю., Чтобы мир до времени не превратился в ад (Религия прогресс и идеал правового государства) // Знание – сила. 1995, N7, с. 19.

սանկյունից այս ձգտումների պահպանումն ավելի բարձր է, քան նվաճած հաջողությունները նոր կյանքի բարձունքներում: Մարդու կոռուպտիվ-բախումնային բնույթի դրույթներից է բխում այն, որ մի կողմից մարդը «դրական, սոցիալական էակ է», և դա նշանակում է, որ մարդիկ ընդունակ են միմյանց օգնել և լրացնել: Նա ապրում է ոչ միայն «իր համար», այլ նաև՝ «ուրիշների», ընդունակ է այլ մարդկանց հետ հարաբերություններում կարգուկանոն հաստատել:

Միևնույն ժամանակ, այն իրավիճակներում, որտեղ արտացոլվում է մարդու դրական բնույթը, մարդու իրավունքներն այլևս պետք չեն լինում, ուստի անհրաժեշտ է հաշվի առնել, որ մյուս կողմից՝ մարդը «բացասական սոցիալական էակ է», որն իր հակադրություններով այլ մարդկանց համար վտանգ է ներկայացնում, իսկ դա ձևավորվում է մարդու բախումնային էությունից և պահանջում է մարդու իրավունքների պաշտպանություն:

Այն, որ մի մարդը մի այլ մարդու համար վտանգ է ներկայացնում, նշանակում է, որ մարդը միաժամանակ և՛ պոտենցիալ հանցագործ է, և՛ պոտենցիալ գոհ:

Մարդու իրավունքներն այստեղ հանդես են գալիս որպես անվտանգություն ձեռք բերելու նպատակով բռնությունից հրաժարվելու փոխանակման արդյունք, ընդ որում հրաժարվելու և ձեռք բերելու միջև հարաբերակցությունը գրեթե հավասար է:

Ընտրության իրավիճակն արտացոլվում է հետևյալ երկրնտրանքի մեջ՝ ո՞րն է գերադասում մարդը՝ լինել միաժամանակ և՛ հանցագործ, և՛ զոհ, թե՛ ոչ մեկը, ոչ մյուսը: Քանի որ հնարավոր չէ ընտրել որևէ մեկը կա՛մ բռնությունն ուրիշների հանդեպ, կա՛մ բռնության վտանգը սեփական անձի հանդեպ, ապա մարդն ընտրում է բռնության մերժման տարբե-

րակը, և այս ընտրության մեջ արտացոլվում է մարդաբանական հիմնական հետաքրքրությունը՝ պահպանել սեփական ես-ը, սեփական էքզիստենցիան: Մարդը որպես մարդ կարող է գործել հրաժարման, ինքնասահմանափակման հիման վրա: Սպանելու, թալանելու կամ միմյանց հետապնդելու ընդհանուր մերժումից ստեղծվում է կյանքի, սեփականության և ազատության իրավունքը:

Մարդու այս երեք հիմնարար իրավունքներում, որն արտացոլում է մարդաբանական հիմնական շահը, այսինքն՝ սեփական ես-ի պահպանումը, արտահայտվում են նաև տրանսցենդենտալ շահերը՝ նրանք, որոնցից մարդը չի կարող հրաժարվել. մարմնի և կյանքի ամբողջության պահպանման շահը որպես կենդանի մնալու պայման, սեփականության պահպանման շահը որպես առավել որակյալ կեցության պայման, և, ի վերջո, ազատության շահը որպես որակի մեծագույն գոյության պայման:

Այսպիսով՝ կարելի է եզրակացնել, որ մարդու ձգտումներից առավել հիմնարարը սեփական ես-ի, սեփական էքզիստենցիայի, սեփական նույնականության պահպանումն է, և այս ձգտումը մարդաբանական ամենակարևոր շահն է: Այս շահի իրականացման նվազագույն պայման է բռնությունից հրաժարվելու պահանջը: Այս պահանջի իրականացումն այն նվազագույն պայմանն է, որը մարդուն մարդ է դարձնում. դա այլ մարդու իրավունքների, նրա արժեքների և արժանապատվության ճանաչման պահանջն է:

Իրավական մարդաբանության համատեքստում իրավունքի փիլիսոփայության հիմնական հարցը համարվում է ընդհանուր փիլիսոփայական «ով է մարդը» հարցի կոնկրետացումը և հանդես է գալիս նաև որպես հարց այն մասին, թե՛ «ով է իրավաբանական մարդը»⁶:

⁶ Философия права. Учеб. / Под. ред. О.Г. Данильяна. М., «ЭКСМО», 2006, 416 с., с. 246.

Քանի որ փիլիսոփայական մարդաբանությունը մարդուն բնորոշում է որպես ընդունակ մարդու⁷, ապա իրավական մարդաբանությունը ևս կարող է ունենալ նույն մոտեցումը դեպի իրավունքը և այն դիտարկել մարդկային ընդունակությունների տեսանկյունից: Մարդկային բազմաթիվ ընդունակություններից առանձնացվում է նաև կեցության ընդունակությունը իրավական իրողության պայմաններում, որի հիման վրա մարդն ստանում է «մարդ իրավաբանական» (homo juridicus) անվանումը: Այս անվանման ընդունումը հիմնավորելու նպատակով իրավունքի ֆրանսիացի սոցիոլոգ Ժ. Կարբոնյեն նշում է, որ կենդանի բոլոր արարածներից միայն մարդն է, որ «օժտված է իրավաբանական էակ լինելու հատկությամբ», և միայն նրան է բնորոշ «իրավաբանականն ստեղծելու և ընկալելու» ունակությունը: Մարդու հենց այս ունակությունն է պահպանում նրա մտածողական մեխանիզմը, ուստի այն պետք է դառնա իրավաբանական մարդաբանության առարկա⁸:

Իսկ ի՞նչ է «իրավաբանական մարդը»: Մարդն իրավունքի համակարգում, այսինքն՝ իրավական մարդը, նախևառաջ սուբյեկտ է, որոշակի գործողությունների գործակալ և դրա կրողը, ուստի իրավական մարդաբանության կարևորագույն հարց է համարվում «ո՞վ է իրավունքի սուբյեկտը» կամ «ի՞նչ է նշանակում լինել իրավունքի սուբյեկտ և ոչ ուղղակի բարոյական պարտավորվածության սուբյեկտ կամ քաղաքացի»⁹: Այլ խոսքով՝ այս հարցը վերաբերում է նրան, թե ո՞ր ընդունակությունների շնորհիվ ենք մենք նույնականացնում իրավունքի սուբյեկտին և մարդկային կեցության ո՞ր կողմերն են այդ իրա-

վունքը հնարավոր դարձնում:

Իրավունքի սուբյեկտի հիմնախնդիրը խիստ հանգուցային է նրա իմաստի բացահայտման համար: XX դարի սկզբների իրավունքի ռուս փիլիսոփա Ն. Ալեքսենի հայեցակարգում սուբյեկտին հատկացվում է «իրավական կառուցվածքի առավել խոր տարրի»¹⁰: Այս եզրակացությունը ներդաշնակվում է հայտնի խորհրդային իրավաբան Ե. Պաշուկանիսի դրույթի հետ այն մասին, որ սուբյեկտը հանդես է գալիս որպես իրավաբանական տեսության ատոմ, այսինքն՝ չտրոհվող պարզագույն ատոմ»¹¹:

Իրավունքի նպատակային առաքելության հերմենևտիկական փիլիսոփայությունը օբյեկտիվ իրավունքի վերացական ձևերից դուրս ձգտում է նշմարել կենդանի սուբյեկտին՝ իրական իրավագիտակցության կրողին: Նման սուբյեկտի կերպարում տրանսցենդենտալականը (համապարփակ) և էմպիրիկականը (եզակի) ներկայացված են ամբողջության մեջ որպես էության և գոյության ամբողջություն: Նման սուբյեկտի սահմանումն առավելապես համապատասխանում է գործունեության մասին իրավաբանական ուսմունքին: Այն բնական ընդունակություն ունի արժեքային-կողմնորոշման բնույթ ունեցող գործունեության հանդեպ: Արժեքային-կողմնորոշված ակտերից (սեր, ատելություն և այլն) տարբերվում են այնպիսիները, որոնք արտահայտում են իրավունքի իմաստը: Դրանք ճանաչման ակտերն են¹²:

Ճանաչման ակտերը հատուկ ինտենցիոնալ ակտեր են, որոնք արտահայտվում են ուրիշին ուղղվածության մեջ, ընդ որում՝ այդ ուրիշը դիտարկվում է որպես արժեք անկախ նրա արժանիք-

⁸ Карбонье Ж., Юридическая социология. М., «Прогресс», 1986. 351 с., с. 61.

⁹ Рикер П., Торжество языка над насилием. «Вопросы философии». 1996, N4, с. 27

¹⁰ Алексеев Н. Н., Основы философии права. СПб, Изд-во «ЛАНЬ», 1999. 256 с., с. 76

¹¹ Пашуканис Е. Б., Избранные произведения по общей теории права и государства. М., «Наука», 1980. 270 с., с. 102.

¹² Алексеев Н. Н., Основы философии права. СПб, Изд-во «ЛАНЬ», 1999. 256 с., с. 76.

ների, արժեք, որն արժանի է իրավունքի կողմից պաշտպանության երաշխիքներին:

Հեգելը ճանաչումն ընդունում է որպես սուբյեկտի հոգու ոլորտ և նրան ներկայացնում է որպես ինքնագիտակցության հատուկ վիճակ, երբ դրա կրողն իրեն համեմատում է այլ սուբյեկտի հետ՝ ձգտելով սեփական անձը ներկայացնել որպես ազատ ինքնություն: Եվ հենց ճանաչման պահանջումն է պայմանավորված մարդու բնույթի երկվորյամբ, մի կողմից բնական մարմնային սուբյեկտ, մյուս կողմից՝ ազատ սուբյեկտ:

«Այդ հակասությունների հաղթահարման համար,- գրել է Հեգելը,- անհրաժեշտ է, որ այդ երկու իրար հակադիր ինքնությունները ճանաչեն միմյանց ոչ միայն որպես բնույթ, այլև որպես ազատ էակներ»¹³: Ընդ որում՝ իսկական ազատությունը նվաճվում է սույն ճանաչման շնորհիվ. «Ես միայն այն ժամանակ եմ իսկապես ազատ, երբ ուրիշը նույնպես ազատ է և իմ կողմից ընդունվում է որպես ազատ»¹⁴:

Իրավունքի ռուս փիլիսոփա Ի. Իլյինը նույնպես նշում է, որ «իրավահարաբերությունները հիմնված են մարդկանց փոխադարձ ճանաչման վրա»¹⁵:

Նա ընդգծում է, որ մարդկանց միջև հենց այդ կենդանի հարաբերություններն են իրավունքը դարձնում հնարավոր, իսկ ճանաչման ակտերում տեղի է ունենում մարդու՝ որպես իրավական սուբյեկտի հաստատում¹⁶:

Ճանաչման շնորհիվ, որն իրականացվում է որոշակի կանոնների, սոցիալական կապերի միջոցով և հիմնված է պայմանագրերի, տարբեր ձևերի փոխադարձ պարտավորությունների,

իրավաբանական ձև ունեցող միմյանց տրվող խոստումների փոխվստահության վրա: Տվյալ դեպքում ճանաչման կանոնները ներկայացված են հետևյալ սկզբունքով՝ «Պարտավորությունները պետք է կատարվեն»: Այս կանոնը տարածվում է յուրաքանչյուրի վրա, ում ուղղված են տվյալ իրավական համակարգի օրենքները, կամ ողջ մարդկությանը, երբ խոսքը միջազգային իրավունքի մասին է: Այս դեպքում հարաբերությունների մասնակիցը արդեն բարոյականության սուբյեկտ չէ («դու»), այլ իրավունքի սուբյեկտ է (յուրաքանչյուրը):

Հենց այսպես հերմենևտիկ փիլիսոփայության լեզվի վերլուծությանը կողմնորոշված, այսինքն՝ համապատասխան դերանունը գտնելու միջոցով, որն ավելի համարժեք կարող է արտահայտել իրավական իմաստը, Պ. Ռիկյորը հետևյալ կերպ է սահմանում իրավունքի սուբյեկտի հասկացությունը. «Իրավունքի սուբյեկտը յուրաքանչյուրն է: Ես յուրաքանչյուր եմ բոլորի հանդեպ: Մենք մտնում ենք իրավաբանական տարածք, երբ դիտարկում ենք մեզ որպես «յուրաքանչյուր» մնացած բոլոր յուրաքանչյուրներից»¹⁷: Ընդ որում՝ «յուրաքանչյուրը» ո՛չ այն խոր անձնական «դու»-ն է և ո՛չ անանուն «ոչ մեկը»: Այս դերանվամբ արտահատվում է փիլիսոփայական կառուցվածքը, որն իր էությանը իրավական է:

Է. Սոլովյովի առաջարկած հայեցակարգում մարդու անհատական կեցության էությունը և հիմնական ձևերի հարաբերակցումը բացահայտվում է հաստատված որոշակի նորմերի միջոցով՝ պարտավորություններ, հակումներ, իրավունքներ¹⁸:

¹³ Гегель Г., Энциклопедия философских наук. Т. 3, Философия духа. М., «Мысль», 1977. 471 с., с. 241.

¹⁴ Гегель Г., Энциклопедия философских наук. Т. 3, Философия духа. М., «Мысль», 1977. 471 с., 217.

¹⁵ Ильин И. А., О сущности правосознания // Соч. в 2 т., т. 1, М., «Наука», 1993. 235 с., с. 256

¹⁶ Ильин И. А., О сущности правосознания // Соч. в 2 т., т. 1, М., «Наука», 1993. 235 с., с. 261.

¹⁷ Рикер П., Торжество языка над насилем. Герменевтический подход к философии права. 1996, N4, с.30.

¹⁸ Соловьев Э. Ю., Чтобы мир до времени не превратился в ад (Религия прогресс и идеал правового государства)

// Знание – сила. 1995, N7, с. 48-55

Այսպես՝ անհատը «մարդ» ցեղի առանձին ներկայացուցիչն է «մեկը բազմաթիվ մարդկանցից» և այդ որակում հասարակության արդյունքն է, հասարակական հարաբերությունների օբյեկտը: Նա նաև պարտավորությունների սուբյեկտն է (կրողը), առանց որի անհնար է որևէ հասարակություն, որի հանդեպ կիրառելի են մեղքի և պատասխանատվության հասկացությունները: Անհատի համար բնորոշ է սոցիալական հարմարվողականությունը գոյություն ունեցող պայմաններին: Մարդկային կեցության համար՝ որպես հասարակական հարաբերությունների սուբյեկտի կիրառվում են «անհատականություն» և «անձ» հասկացությունները:

Է. Մոլոժյովն ընդգծում է, որ անհատականության մեջ մենք արժևորում ենք նրա ինքնակայությունը, իսկ անձի մեջ՝ ինքնուրույնությունը կամ ինքնավարությունը¹⁹:

Անհատականությունը հակումների սուբյեկտ է կամ իրավիճակ, երբ իրավունքը վերափոխվում է պարտավորության և նրա համար բնորոշ է ինքնիրացման կողմնորոշումը: Դա անհատ է, որն ավելի սոցիալական է առկա սոցիումից: Արտաքին հեղինակությունն այստեղ հակադրվում է վերանձնական խղճի, հավատի և ճաշակի պարտադրանքին: Անձը ձևավորվում է անհատականության հիման վրա: Դա իրավունքի սուբյեկտ է և հետևաբար ազատության սուբյեկտ: Նրա բնավորության տարբերիչ գիծը ձգտումն է և ուրիշի՝ անկախության հանդեպ հարգանքը: Մարդու՝ հենց անձի կերպարի հետ է ճշգրտվում իրավունքը: Թեպետ իրական անհատները կարող են չտիրապետել ինքնավար սուբյեկտի հատկանիշներին, սակայն իրավունքի էությունը կայանում է նրանում, որ

յուրաքանչյուր մարդու մեջ ենթադրվեն այդ հատկանիշները, ուստի իրավունքը կողմնորոշվում է դեպի մարդու որպես անձի կերպարը: Անձի՝ որպես իրավունքի սուբյեկտի գաղափարը հանդիսանում է «անհրաժեշտ» իդեալ իրավունքի համար: «Իրավունքի իդեալը, գրում է ռուս փիլիսոփա Բ. Վիշեպլավցևը,՝ դա ազատ սուբյեկտն է (homo sui iuris), ինքնավար անձը, որն ինքն է մտորում, ինքն է գնահատում և ինքն է ընտրում գործողությունների ուղղությունը»²⁰:

Այսպիսով՝ լինել իրավական սուբյեկտ դեռ չի նշանակում լինել կենդանի անձնավորություն, իրական իրավագիտակցության կրող: Իրավական սուբյեկտի գաղափարում դրված է գիտակցված վարքագծի գաղափարը: Գիտակցված գոյության գործնական և կենսական սահմանները արտահայտված են գործունակության գաղափարի մեջ:

Իրավական սուբյեկտը ոչ այնքան անձի ներքին հոգեբանական կառուցվածքն է, որքան այն, թե ինչպիսին է անձը հանդես գալիս ուրիշների առջև: Դա հնարավորություն է տալիս փոխկապակցվել արտաքին աշխարհի հետ՝ արտացոլելով այն դերը, որ մարդը խաղում է նրանում: Դա դեմք է, անհատ, անձը անհատի դերում ոչ թե ատոմային անհատ է, այլ մարդ՝ այլ մարդկանց հետ իր փոխհարաբերություններով: Այս անձը ճանաչվում է այլոց կողմից, բայց ոչ օբյեկտիվ իմաստով, այլ այն իմաստով, որ գիտակցում է իրեն այլոց հետ հարաբերությունների մեջ, և ըմբռնվում է իր դերը այլոց կողմից: Դա հարաբերությունների և նրա կրողի (իրավախախտումներ և իրավունքի սուբյեկտներ) կառուցվածքային ամբողջությունն է: Դա նշանակում է, որ իրավունքն ստեղծվում է այնպիսի հարաբերու-

¹⁹ Соловьев Э. Ю., Личность и право. // Вопросы философии. N8, 1995.

²⁰ Вышеславцев Б. П., Кризис индустриальной культуры. Марксизм. Неосоциализм. Неoliberalизм. Нью-Йорк. 1953, с. 229.

թյունների շնորհիվ, որում մարդը մասնակցում է որպես անհատ, դրանք ճանաչման հարաբերություններն են:

Այսպիսով՝ «իրավունքի սուբյեկտ» հասկացությունը ոչ միայն կարևոր դեր է խաղում իրավունքի ֆենոմենի բացահայտման գործում, այլև հենց ինքը՝ իրավունքն է հիմնավորվում մարդու որպես անձի գաղափարով:

Հաշվի առնելով նշված պայմանները՝ իրավունքը իր չափումներից մեկում՝ մարդաբանականում, կարող է սահ-

մանվել որպես մարդկային փոխհարաբերությունների մեթոդ, որ հնարավոր է մարդու ինքնավար սուբյեկտ լինելու շնորհիվ, որը ևս սուբյեկտ է ճանաչում յուրաքանչյուր այլ մեկի կամ այլոց: Տվյալ ունակության կրողն իրենից ներկայացնում է այլոց կողմից ճանաչված անձ կամ անհատ, իսկ նրա իրացումը և վերարտադրությունը քաղաքական-իրավական ինստիտուտների խնդիրն է:

ՄԱՐԴՈՒ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ՓԻԼԻՍՈՓՈՅԱԿԱՆ ԻՄԱՍՏԸ ԵՎ ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄԸ

ՎԱՉԻԿ ԱՐԱՄԱՅԻՄԻ ԲՐՈՒՏՅԱՆ

Մանկավարժական գիտ. թեկն., դոցենտ

ԱՍՓՈՓՈՒՄ

Հոդվածում հեղինակը քննարկում է Մարդու իրավունքների հասկացությունը փիլիսոփայական տեսանկյունից, դիտարկելով այն որպես ընդհանրապես իրավունքի ձև: Վերլուծելով նախորդ դարերի ճանաչված փիլիսոփաների և իրավագետների աշխատություններն իրավունքի և փիլիսոփայության ոլորտում, ներկայացնելով Մարդու իրավունքների ուսմունքի տարբեր տեսանկյուններ, հեղինակը դրանք վերլուծում է ժամանակակից իրավական մարդաբանության տեսանկյունից:

Դիտարկելով անհատի՝ որպես իրավունքի սուբյեկտի հասկացության բովանդակությունը, հեղինակը գալիս է այն եզրակացության, որ մարդկային անհատն ինքը հենց իրավունքի ֆենոմենի հայեցակարգի բացահայտման բանալին է:

Բանալի բառեր. Բրուտյան Վաչիկ Արամայիսի, Մարդու իրավունքներ, իրավական մարդաբանություն, իրավունքի սուբյեկտ:

ФИЛОСОФСКОЕ ЗНАЧЕНИЕ И ОБОСНОВАНИЕ ПРАВ ЧЕЛОВЕКА

ВАЧИК АРАМАЙСОВИЧ БРУТЯН

Кандидат педагогических наук, доцент

PHILOSOPHICAL SIGNIFICATION AND RATIONALE OF HUMAN RIGHTS

VACHIK ARAMAYIS BRUTYAN

*Doctor of Pedagogical Sciences,
Doctor of Physical and Mathematical Sciences, Associate Professor, Academician of the Russian Federation Academy of Pedagogical and Social Sciences*

РЕЗЮМЕ

В статье автор обсуждает значение Прав Человека с философской точки зрения, рассматривая его в целом как форма права. Анализируя работы в области философии и права известных философов и правоведов прошлых веков, представляя разные точки зрения об учении Прав человека, автор анализирует их с точки зрения современной правовой антропологии. Рассматривая содержание понятия субъекта права (индивида), автор приходит к заключению, что человеческий индивид сам является ключом для выявления концепции феномена права.

Ключевые слова: *Брутян Вачик Арамаи-сович, Права человека, правовая антропология, субъект права.*

SUMMARY

The author discusses the notion of Human Rights from the philosophical point of view, considering it as a whole as a form of law. Analyzing the work in the field of philosophy and law of famous philosophers and jurists of past centuries, representing different points of view of Human Rights concept, the author analyzes them from the perspective of a modern legal anthropology.

Considering the content of the notion of the individual as the subject of the Law, the author comes to the conclusion that the human individual himself is the key clue to the phenomenon of law concept.

Key words: *Vachik Aramais Brutyan, Human Rights, Legal Anthropology, the Subject of Law.*

ՀԱՅ-ԱՂԻՐԲԵԶԱՆԱԿԱՆ ՄԱՀՄԱՆԱՅԻՆ ԽՆԴԻՐՆԵՐԻ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Անդրկովկասի Ռուսաստանին անցնելուց ի վեր ցարական կառավարությունը երկրամասում սահմանափակումը կատարելիս աչքի առաջ չի ունեցել ոչ միայն էթնիկական, այլև տեղագրական ու տնտեսական պայմանները, նույնիսկ վարչական կառավարման արդյունավետության խնդիրը: Մեկը մյուսին հաջորդած վարչական բաժանումների արդյունքում հայկական տարածքները հայտնվեցին տարբեր վարչական միավորումների կազմում՝ մեկ Վրացա-իմերեթական նահանգի ու Կասպիական մարզի, մեկ էլ 1846 թվականին երկրամասում ստեղծված նահանգների: 1867թ. դեկտեմբերի 9-ին Ալեքսանդր երկրորդ ցարը ստորագրեց մի կանոնադրություն («Կովկասյան և Անդրկովկասյան երկրամասի կառավարման բարեփոխումների մասին»), որը գործողության մեջ դրվեց 1868թ. հունվարի մեկից: Այդ կանոնադրության համաձայն Անդրկովկասում ստեղծվեց մի նոր նահանգ: Հին Գանձակը վերանվանվեց Ելիզավետպոլ, որի անունով էլ կոչվեց նոր նահանգը: Նրա մեջ մտան Արցախը, Զանգեզուրը և այլ հայկական գավառներ: Կանոնադրությամբ գավառների սահմանագծման հիմքում դրված սկզբունքի հիման վրա նրանցից ոչ մեկը իր գրաված տարածությամբ չպետք է գերազանցեր 6500 քառ. վերստից, իսկ բնակչությամբ՝ 10000 տնտեսությունից կամ 80 000 մարդուց²¹:

Իշխանություններին, այդ թվում Կովկասյան փոխարքայություններին, ձեռնադրվեցին, որ բազմազգ երկրա-

մասի այս կամ այն նահանգում կամ գավառում արմատական բնակչությունը մյուս ազգությունների նկատմամբ բացարձակ մեծամասնություն չկազմի: Դա մասնավորապես վերաբերում է հայաբնակ գավառներին: Որպեսզի հայերն այս կամ այն վարչական տարածքում բացարձակ մեծամասնություն չկազմեն, շատ հաճախ տվյալ հայաբնակ գավառից անջատել են առանձին մասեր և միացրել հարևան թուրքական վարչական տարածքներին:

Ցարիզմի օրոք անցկացված վարչական-ադմինիստրատիվ բաժանումներն կատարվել էին կամայականորեն, որոնք չէին տեղավորվում նորմալ տրամաբանության շրջանակներում: Հասկանալի է, որ ցարիզմը երկրամասում իր գաղութային ծրագրերի հաջողության տեսակետից, այն բաժանել էր՝ անտեսելով էթնիկական սկզբունքը, դրա հետ միասին, շատ դեպքերում անտեսելով նման միավորումների ստեղծման աննպատակահարմարությունները: Այսպես, Ղազախի գավառը ավելի շատ կապ ուներ Թիֆլիսի նահանգի, քան Ելիզավետպոլի նահանգի հետ: Այդ գավառի բարձրադիր մասի բնակչությունը, որի տնտեսության մեջ անասնապահությունը բավականին մեծ դեր էր խաղում, մեծ կապեր էր պահպանում Երևանի նահանգի Նոր-Բայազետի գավառի, քան իր նահանգի մյուս գավառների հետ²²:

Ղարաբաղը, որն իր ինքնավարությունը վերականգնելու հույսեր էր փափայում ռուսական իշխանության հաս-

²¹ Աբրահամյան Հ., Արցախյան գոյամարտ, Եր., 1991, էջ 4:

²² Ղուլյան Յու., «Մի քանի հարցեր հայ-ադրբեջանական հարաբերությունները (քոչի խնդիրը 1919թ.), «Բանբեր Հայաստանի արխիվների», թիվ 2, Եր., 2008, էջ 225:

տատումով, հաջորդաբար կուլ գնաց վարչական ավելի խոշոր միավորումների և վերջում էլ Ելիզավետպոլի նահանգի մեջ: Փաստորեն, հայ ժողովրդի ազգային բաղձանքները, որ կապվում էին պարսկական լուծը թոթափելու հետ, ի չիք դարձան:

Զանգեզուրի վարչական սահմաններն էլ արհեստական կերպով գծված էին այնպես, որ ո՛չ մի ժողովուրդ նրա մեջ զգալի մեծամասնություն չէր կազմում: Զանգեզուրի գավառը, որը ցարական իշխանության օրով, կազմում էր Ելիզավետպոլի՝ Գանձակի նահանգի մեկ գավառը՝ Ղարաբաղի ու Պարսկաստանի միջև՝ արևմուտքից ունենալով Նախիջևանն ու Դարալագյազը, իսկ արևելքից Կարյազինի գավառը, բռնում էր 6743 քառ. վերստ տարածություն և 1916թ. ուներ 226 398 բնակիչ, որից հայ՝ 95 054, թուրք շիա՝ 110 637, թուրք սուննի՝ 8 966, քուրդ՝ 3 638, ռուս՝ 1 709 և այլն:

Առաջին աշխարհամարտի նախօրյակին նահանգի մեջ մտած Ջեբրայիլի, Շուշիի, Կարյազինոյի, Զանգեզուրի և Ելիզավետպոլի գավառներում հայ բնակչության թիվը հասնում էր 300 հազարի և կազմում էր բացարձակ մեծամասնություն՝ աղբբեջանցիների և մյուս էթնիկական խմբերի համեմատությամբ: Ազգագրական փոփոխությունն այնքան համատարած էր, որ 1916թ. Ախալքալաքի 107 000 բնակիչներից 83.000-ը հայեր էին, մինչդեռ ռուսները, վրացիները, հույները և մահմեդականները կազմում էին մնացյալ 24.000-ը:

1905թ. սկսած՝ զեմստվոյական համակարգին առնչվող խորհրդածողովներում հայերը փորձում էին անջատել լեռները Ելիզավետպոլի հարթավայրերից, առաջարկելով ստեղծել մի առանձին զեմստվո-նահանգ միայն լեռնատանի համար: Նախագծվող նահանգի

529.000 բնակիչներից 365.000-ը լինելու էին հայեր²³, 134.000-ը՝ մահմեդականներ և 28.000-ը՝ այլ ազգություններ: Ծրագիրը, թեև հավանության արժանացավ ռուսական փոխարքայի և որոշ վերապահումներով, ժամանակավոր կառավարության հատուկ հանձնախմբերի կողմից՝ 1917թ., այդպես էլ չհաստատվեց:

1915 և 1916 թվականներին, Անդրկովկասում «զեմստվո» անունով սահմանափակ ինքնակառավարվող ազրային վարչական միավորումներ հիմնելու վերաբերյալ հայտնի խորհրդածողովներում հայոց ներկայացուցիչները կողմնակից էին գոյություն ունեցող նահանգական սահմանների վերափոխմանը՝ նախագծված մի քանի զեմստվոների սահմաններին համապատասխանեցնելու համար: Ըստ այս ծրագրի, Թիֆլիսի նահանգում Լոռին և Ախալքալաքը, Երևանի նահանգի Ալեքսանդրապոլի գավառը և Կարսի երկու գավառները միացվելու էին Շիրակ կոչվող մի զեմստվո-նահանգի մեջ: Այս խորհրդածողովները չհանգեցրին ո՛չ զեմստվոյական համակարգի ընդունման և ո՛չ էլ նահանգական սահմանների կարգավորման, բայց և այնպես, հայոց ներկայացուցիչները խրախուսված էին վրացական մենշևիկ դեկավարների հայտարարություններից, որոնք Անդրկովկասի ապագա ներքին սահմանները որոշելիս պաշտպանում էին ազգագրական սկզբունքը՝ հաշվի առնելով աշխարհագրական և տնտեսական գործոնները²⁴:

Անդրկովկասի սահմանային բաժանման հարցի քննարկումները վերսկսվեցին 1917թ. փետրվարյան հեղափոխությունից հետո, երբ ռուսական կայսրությունը թևակոխեց զարգացման ժողովրդավարական փուլ: 1917թ. գարնանը և ամռանը վրաց մենշևիկները գտնում

²³ Հովհաննիսյան Ռ., Հայաստանի Հանրապետություն, էջ 86:

²⁴ Հովհաննիսյան Ռ., նշվ. աշխ., էջ 75:

էին, որ Անդրկովկասի տարածքային բաժանման հարցում պետք է առաջնորդվել ազգագրական սկզբունքով, այսինքն՝ որտեղ գերակշռում է տվյալ էթնոսը, այդ տարածքը պետք է միացնել տվյալ վարչամիավորին, ընդ որում, վիճելի տարածքների խնդրում անհրաժեշտ էր նկատվում հանրաքվեն: Այս ժողովրդավարական դիրքորոշումը ընդունելի էր նաև վրացական այլ կուսակցությունների համար:

Ազգագրական սկզբունքով առաջնորդվող հայ և վրաց քաղաքական շրջանակների մոտեցման կիրառման դեպքում անխուսափելի կդառնար Թիֆլիսի նահանգի կազմում եղած հայկական և գերազանցապես հայերով բնակեցված Բորչալուի՝ Լոռու հետ միասին ու Ախալքալաքի գավառների և Ելիզավետպոլի նահանգի հարավարևմտյան հատվածի՝ Ղարաբաղի և Ջանգեզուրի վարչական վերաենթարկումը Երևանի նահանգին կամ նոր ստեղծվելիք Ալեքսանդրապոլին:

Ժամանակավոր կառավարությունն ի թիվս այլ հարցերի զբաղվեց երկրում, այդ թվում՝ Անդրկովկասում, սահմանափոխության հարցով: Անդրկովկասի սահմանափոխության ծրագրի նախագիծը կազմելիս կառավարությունն առաջին հերթին հիմք էր ընդունում էթնիկական սկզբունքը և դրանից ելնելով նախատեսել էր երկրամասում կազմել վարչական երեք խոշոր մասեր՝ վրացական, հայկական և թուրքական: Առաջնությունը տալով էթնիկական սկզբունքին, միաժամանակ կառավարությունը ելնում էր նրանից, որ այդ բաժանումը պետք է համապատասխանի նաև երկրամասի տնտեսական, հողային, դասակարգային, տեղագրական և մյուս պայմաններին: Նախնական ծրագրով, հայկական մասը

բաղկացած էր լինելու երեք նահանգներից՝ Երևանի (Նախիջևանի գավառով հանդերձ), Ալեքսանդրապոլի (նրա մեջ մտնելու էին նաև Ախալքալաքի ու Լոռվա գավառները) և Գանձակի²⁵:

Ժամանակավոր կառավարության որոշմամբ 1917թ. գարնանից Պետերբուրգում, ներքին գործերի նախարարությանը կից սկսեց գործել հատուկ հանձնաժողով իրավաբան Ջուրաբ Ավալովի գլխավորությամբ՝ Անդրկովկասի վարչական վերաբաժանման և տեղական ինքնակառավարման խնդիրը քննարկելու համար: Այդ հանձնաժողովի կազմում Ջ.Ավալովի հետ ընդգրկված էին Գ. Լորդկիպանիձեն, Ս.Ավալիանին՝ վրացիներից, Ալ. Խատիայանը և Ա.Շահխաթունյանը՝ հայերից, Խան Խոյսկին և Ա.Շելխուլիսլանովը՝ թաթարներից, Վ. Ջարաթիևը և Ա.Նամիտովը՝ լեռնականներից: Այդ հանձնաժողովը որոշում ընդունեց Բորչալուի՝ Լոռու տարածքի չորս հինգերորդը և Ախալքալաքի գավառը Թիֆլիսի նահանգից հանելու և նոր ստեղծվելիք Ալեքսանդրապոլի նահանգին միացնելու մասին: Եղավ նաև ենթահանձնաժողովի առաջարկը՝ Ղարաբաղի և Ջանգեզուրի գավառները՝ իբրև գերազանցապես հայերով բնակեցված տարածքներ Ելիզավետպոլի նահանգի կազմից հանելու մասին: Սակայն ենթահանձնաժողովի մահմեդական ներկայացուցիչները հրաժարվեցին այդ փաստաթղթի տակ ստորագրել՝ իրենց քայլը պատճառաբանելով լիազորություններ չունենալու հանգամանքով²⁶:

Ցարիզմի տապալումից հետո երկրամասում ստեղծվեց կառավարման նոր օրգան՝ Անդրկովկասյան Հատուկ կոմիտե: Երկրամասի սահմանագծման մասին հարցի մշակման համար նրա կողմից կազմված հատուկ հանձնա-

²⁵ Գանձակի նահանգը բաժանվելու էր երկու մասի՝ դաշտային(թուրքական) և լեռնային (հայկական): Լեռնային մասը Ղարաբաղի և Ջանգեզուրի հետ կազմելու էին Հայկական Գանձակի նահանգը:

²⁶ Մեքրոնյան Ա., Ջավախքը 19-րդ դարում և 20-րդ դարի առաջին քառորդին, Եր., 2003, էջ 267:

ժողովը, կազմված 15 անդամներից՝ հնգական ամեն ազգությունից, ներկայացնում էին առավել ազդեցիկ կուսակցությունները: Այդ հանձնաժողովը կոչված էր մշակել երկրամասի բաժանման նախագիծը, որի հիմքում պետք է դրված լինեին այն սկզբունքները, որոնք Ներքին գործերի նախարարությանը կից Պետրոգրադյան խորհրդակցության ժամանակ ճանաչում էին էթնոգրաֆիական հանգամանքի առաջնային նշանակությունը, հաշվի առնելով նաև տնտեսական և աշխարհագրական գործոնների դերը:

Հայերի և կովկասյան թուրքերի միջև սահմանափոխության հարցում հենց սկզբից լուրջ տարաձայնություններ առաջացան: Հայկական կողմին հատկապես հուզում էր հայ գյուղացիների սակավահողության խնդիրը, թուրքական կողմին՝ յայլադների հարցը²⁷: Սակայն հանձնաժողովն այդպես էլ չկարողացավ հանգել մեկ ընդհանուր որոշման: Հայկական ներկայացուցիչներն իրենց վերաբերմունքը փորձեցին պատճառաբանել իրենց անտեղյակությամբ ու լիագործությունների բացակայությամբ, իսկ նրանցից ոմանք էլ հանդես եկան բաժանման նոր առաջարկներով, որը հանձնաժողովը միաձայն ճանաչեց բացարձակ անընդունելի՝ ինչպես աշխարհագրական ու էթնոգրաֆիական, այնպես էլ ֆինանսական տեսակետից²⁸:

Չեմստվոյական խորհրդակցությունում թաթար պատվիրակները հանձնաժողովի աշխատանքների ընթացքում փորձում էին ոչ միայն հակառակվել ու հրաժարվել հայկական կողմի ներկայացրած առաջարկներն ընդունելուց, որոնք հիմնավորվում ու փաստարկվում էին բոլոր առումներով, այլև հան-

դես էին գալիս այնպիսի առաջարկություններով, որտեղ ակնհայտորեն դրսևորվում էր թաթարական կողմի՝ հայկական լեռնային գավառները թաթարական շրջանների մեջ ընդգրկելու ձգտումը:

Նման առաջարկություններով թաթարները հետապնդում էին ինչպես քաղաքական, այնպես էլ տնտեսական շահեր, որպիսին հանդիսանում էր հայկական լեռնային արոտավայրերին տիրանալը: Այսպես, նրանք առաջարկում էին «Ելիզավետպոլի նահանգի՝ Ղազախի, Ելիզավետպոլի և Ջիվանշիրի գավառների մաքուր արոտավայրային, յայլադային շրջաններից ստեղծել հատուկ գավառ, կամ էլ, ինչպես նրանք էին անվանում, կանտոն, առանձնացնելով այն հայկական լեռնային շրջանից»²⁹: Ըստ Շահխաթունու, այդպիսի հատուկ զեմստվոյական շրջանի ստեղծման անհնարինությունը պարզ էր, հատկապես, որովհետև «այնտեղ չկար ոչ մի համախմբված բնակչություն, որը հայտնվում էր միայն ամռանը մի քանի ամսով»³⁰: Հանձնաժողովի հետագա նիստերում հաջողվեց այդ առաջարկության հեղինակներին համոզել նրանում, որ մուսուլման քոչվորների շահերը կարող են երաշխավորվել օրենսդրությամբ և որ պետական արոտավայրային հողային ֆոնդերի տնօրինելու իրավունքը չի կարող տրամադրվել զեմստվոյին, որ ընդհանրապես բոլոր հարցերը, որոնց լուծման մեջ հետաքրքրված են միաժամանակ տարբեր գավառներ ու նահանգներ, պիտի կարգավորվեն անդրկովկասյան երկրային իշխանության կողմից, այլ ոչ թե առանձին զեմստվոյների³¹:

Այսպիսով, սահմանափոխության հարցում հենց սկզբից լուրջ տարաձայ-

²⁷ Միմոյան Հ., Անդրանիկի ժամանակը, հ.1, Եր., 1996, էջ 610:

²⁸ Шахатунян А., "Административный передел Закавказского края", Тифлиси, 1918, ст. 137.

²⁹ Шахатунян А., նշվ. աշխ., էջ 137:

³⁰ Նույն տեղում:

³¹ Նույն տեղում:

նություններ էին ծագել հայերի և կովկասյան թուրքերի միջև³²:

Հետագայում, Թիֆլիսում կայացան նաև այլ խորհրդակցություններ, որոնցում հայերի շահերը կրկին ներկայացնում էին Ալ. Խատիսյանը և Ավ. Շահխաթունյանը: Վերջինս մեկ տարի անց հրատարակեց մի աշխատություն, որում հիմնավորում էր ազգագրական սկզբունքով Անդրկովկասի վերաբաժանման նպատակահարմարությունը:

Փաստորեն, ժամանակավոր կառավարությունը հավանություն տալով հայության նվազագույն պահանջներին, արդարացի գտավ Անդրկովկասի նախագծված վարչական նոր բաժանումը, ըստ որի Արցախը, Գանձակը, Ախալքալաքը և Շարուր-Նախիջևանը ճանաչվեցին որպես հայկական տարածքներ³³:

Պետրոգրադում ծրագրված այդ սահմանափոխությունն ինչ-որ չափով լուծում էր նաև Անդրկովկասի երեք խոշոր ազգերի տարածքային տեղաբաշխման խնդիրը: Հայկական կողմին հատկապես հուզում էր հայ գյուղացիների սակավահողության խնդիրը, թուրքական կողմին՝ յայլաղների հարցը:

Երկար վեճերից հետո Անդրկովկասի սահմանափոխության ծրագիրը հիմնականում ընդունվեց և Պետրոգրադից ուղարկվեց Թիֆլիս՝ Անդրկովկասյան հատուկ կոմիտեին (ՕԶԱԿՈՄ)³⁴՝ քննարկելու և վերջնական եզրակացություն տալու համար: Քննարկելով սահմանափոխության կառավարական ծրագրի նախագիծը, ՕԶԱԿՈՄ-ը երեք ազգերի ներկայացուցիչներից կազմեց մի հատուկ հանձնախումբ՝ Ն.Ժորդանիայի ղեկավարությամբ: Ծավալվեցին երկարատև և բուռն վեճեր, նորից անգիջում էին թուրքերը: Վերջապես, փոխադարձ զիջումների միջոցով կայացավ երկրամասի սահմանափոխության մա-

սին համաձայնությունը:

Ժամանակավոր կառավարությունը սահմանաբաժանման ահա այսպիսի ժառանգություն էր ստացել նախորդ ռեժիմից: Նման վիճակը խիստ դժվարացնում էր ժողովրդավարական կարգախոսներով իշխանության եկած կառավարության գործը: Բայց, չնայած դրան, այդ կառավարությունը, ի տարբերություն ցարական վարչակազմի, փորձում էր գեմստվոյական կառավարում մտցնել լեզվի, դատարանի, հողաբաժանության, դպրոցների և այլ հարցերում, դրանով իսկ, ըստ էության, նպաստելով ազգային տարածքների համախմբմանը: Ձեմստվոյական հիմնարկների ստեղծումն իր հետևից անհրաժեշտաբար և անխուսափելիորեն առաջ էր բերում սահմանափոխության խնդիրը:

Անդրկովկասյան հատուկ կոմիտեի կողմից հրավիրվեց խորհրդակցություն Անդրկովկասում գեմստվո մտցնելու մասին: Անմիջապես հարց դրվեց երկրամասի սահմանագատման մասին: Այն արդեն վերաբերում էր ոչ միայն Ելիզավետպոլի ու Երևանի, այլ նաև Թիֆլիսի նահանգին ու Կարսի մարզին: Լսվեցին անհամաձայնություններ ոչ միայն թաթարների, այլ նաև վրաց ազգայնականների կողմից: Վրացական սոցիալ-դեմոկրատների միջամտությունը որոշ չափով մեղմեց հարցի սրությունը: Բայց գործը առաջ չէր գնում: Նույն ժամանակ Պետրոգրադում բացվեց կենտրոնական խորհրդակցություն Սահմանադիր ժողովի ընտրությունների առիթով³⁵:

Ձեմստվոյական խորհրդակցությունն օգտվեց Պետրոգրադում Անդրկովկասի ներկայացուցիչների ներկայությունից դրանք Սահմանադիր ժողովի ընտրությունների առիթով խորհրդակցության անդամներն էին և նրանց

³² Միմոնյան Հ., նշվ. աշխ., էջ 609:

³³ Шахатунян А., նշվ. աշխ., էջ 137:

³⁴ Особый Закавказский комитет

³⁵ Шахатунян А., նշվ. աշխ., էջ 120:

հրավիրեց մասնակցել զեմստվոյական հանձնաժողովում, հարց դնելով Անդրկովկասում զեմստվոյի մասին: Այդ հարցի քննարկմանը մասնակցում էին երկրամասի գրեթե բոլոր կուսակցությունների, բոլոր ազգությունների ներկայացուցիչները՝ վրացական սոցիալ-դեմոկրատները, սոցիալիստ-ֆեդերալիստները, վրաց սոցիալիստ-հեղափոխականները, հայ սոցիալ-դեմոկրատները, սոցիալիստ հեղափոխականները, դաշնակցականները և անկուսակցականներ: Թաթարները նույնպես ունեին ձայների համապատասխան քանակ: Ամեն մի ազգությունից հրավիրվեց 7-ական ներկայացուցիչ, որոնք տեղական հիմնարկության ներկայացուցիչների հետ ձեռնամուխ եղան զեմստվո մտցնելու հարցի քննարկմանը: Նախարարությունն ինքը հարց դրեց բաժանման մասին, այսինքն այն մասին, թե արժե՞ արդյոք մտցնել զեմստվոյական հիմնարկություն գոյություն ունեցող ադմինիստրատիվ բաժանումների սահմաններում, կամ էլ անհրաժեշտ է անցկացնել երկրամասի նոր սահմանագծում: Ոմանք առաջարկում էին չքննարկել երկրամասի բաժանման հարցը և այդ գործը հանձնել անդրկովկասյան հատուկ կոմիտեին, որը և կկազմակերպի հանձնաժողով, լուծելու և կյանքի կոչելու համար երկրամասի նոր ադմինիստրատիվ բաժանումը: Բայց մեծամասնությունը օգտակար է գտնում օգտագործելով Պետրոգրադում Անդրկովկասի ներկայացուցիչների ներկայությունը, մշակել նախագիծ և այն եզրակացությամբ ուղարկել տեղական իշխանություններին ու քաղաքական կազմակերպություններին:

Բաժանման հակառակորդներից ոմանք նույնիսկ հայտարարում են, որ իրենք իրավասու չեն այդ հարցում, և որ

չունեն բավարար նյութեր: Հարթելով այդ արգելքը, ստեղծված գերատեսչությունը հանդես եկավ հայտարարությամբ, որով իր վրա վերցրեց բաժանման նախագծի հեղինակը լինելու պատասխանատվությունը և պատասխանատվությունը օգտագործել այն տվյալներն ու հետևությունները, որոնք կներկայացվեն հանձնաժողովի մասնակիցների կողմից: Արդյունքում, ենթահանձնաժողովը ձեռնարկում է հարցի ըստ էության քննարկումը³⁶: Ի դեպ, հայերի ներկայացուցիչներն ունեին երկրամասի բաժանման բավականաչափ մշակված նախագիծ, որի շուրջ էլ ծավալվում են քննարկումները: Անհամաձայնությունները անփոփոխ այն էին, ինչ որ նախկինում էր: Վրացիների ներկայացուցիչները և գրեթե հանձնաժողովի մյուս անդամները ընդհանուր առմամբ հավանություն են տալիս առաջարկված նախագծին և այդ տեսքով, բոլոր դեմ ու կողմ կարծիքներով, այն մտնում է նախարարություն: Շուտով հայտնի է դառնում, որ նախարարությունը նույնպես աննշան փոփոխություններով հավանություն է տվել բաժանման նախագծին: Այսպիսով, գերատեսչությունը Կովկաս ուղարկեց արդեն բաժանման նախագիծը, որպեսզի այն կենսագործվի երկրամասային վարչության՝ ՕԶԱԿՈՄ-ի կողմից:

Նախարարությունը գտնում էր, որ հարցի ամենից հաջողված լուծումը կլիներ առաջին հերթին դաշտային մասերից լեռնային մասերի անջատումը: Նրա կարծիքով, այդպիսի բաժանումը արդարացվում էր այն ժողովուրդների պատմական, էթնիկական, տնտեսական ու կենցաղային պայմաններով, որոնք ապրում էին հիշյալ մասերում³⁸:

Ելիզավետպոլի նահանգը երկու նա-

³⁶ Шахатуния А., նշվ. աշխ., էջ 121:

³⁷ Նույն տեղը, էջ 122:

³⁸ Նույն տեղը, էջ 128:

հանգների բաժանման դեպքում լեռնայինի՝ գերազանցապես հայկական և դաշտայինի՝ մահմեդական, Ելիզավետպոլ քաղաքը, որն ընկած է այդ երկու գոտիների սահմանում, բաժանվում է երկու մասի Գանջինկա գետով՝ հայկականի և մահմեդականի³⁹:

Ներկայացվող փոփոխությունները հնարավոր կդարձնեն էթնիկական առումով միատար միավորումների ստեղծումը՝ տնտեսական պայմաններով: Այդ առաջարկների հետ կապված տեսակետ է արտահայտում մուսուլմանների ներկայացուցիչ Շեյխուլիսլամովը: Սկզբունքորեն ընդունելով բաժանման հիմնավորումը, նա անհրաժեշտ էր համարում մեծ էթնիկական միատարրություն ստեղծելը: Շեյխուլիսլամովն առաջարկում էր Քարվանսարայի, Ելիզավետպոլի, Ջիվանջիբի և Նոր-Բայազետի լեռնային գյուղերից ստեղծել մեկ մուսուլմանական կանտոն: Հատկանշականն այն է, որ երբ հարց է դրվում հայ-թաթարական սահմանաբաժանման մասին, թաթարներն ամեն կերպ խուսափում են դրանց ընթացք տալուց, բայց երբ քննարկվում է առանձին շրջանների կազմավորման մասին հարցը, մասնավորապես քրդերով բնակեցված, նրանք համառորեն դեմ են հանդես գալիս այդ առաջարկներին: Այսպես, երբ քննարկում է ընթանում Կուլպինսկի գավառի կազմավորման նախագծի շուրջ, թաթարների ներկայացուցիչ Շեյխուլիսլամովը ավելորդ է համարում այդ գավառի կազմավորումը, գտնելով, որ քրդերին՝ որպես մուսուլմանների, պետք է դասել թաթարների շարքը, նրանց չբաժանելով առանձին ազգային խմբի: Հանձնաժողովը, որը սահմանային բաժանման հարցում էլնում էր էթնոգրաֆիկական ու տնտեսական սկզբունքներից այդ տեսակետը մերժում է³⁹:

Ձեմսովոյական հիմնարկներ մտցնելով հնարավորություն էր ստեղծվում երկրամասի երեք հիմնական ժողովուրդների միջև համատեղ գործունեության համար, հիմնականում հայերի ու թաթարների: Հայերը ձգտում էին ստեղծել շրջաններ, որտեղ իրենք մեծամասնություն էին կազմում և որտեղ նրանք կարող էին ապահովել իրենց շահերը այնպես, ինչպես ապահովված էին թաթարների ու վրացիների շահերը մյուս ադմինիստրատիվ միավորներում: Խոսքն այստեղ գնում էր ոչ թե թաթարական մեծամասնությունից հայկական փոքրամասնության շահերի պաշտպանության մասին, այլ հայկական մեծամասնության, որն անհաջող ադմինիստրատիվ բաժանման շնորհիվ հայտնվել էր փոքրամասնության դրության մեջ⁴⁰:

Նախագիծն ստանալով ՕԶԱԿՈՍ-ն իր հերթին մանրամասները մշակելու համար նշանակեց 15 հոգուց կազմված հանձնախումբ, բայց հայ և մահմեդական անդամների միջև առկա արմատական տարաձայնությունների պատճառով հարցը փակուղի մտավ: Այս քննարկումների ընթացքում վրաց մենշիկները կրկին համաձայնեցին, որ Լոռին և Ախալքալաքը պետք է մտցվեն մի հայկական նահանգի մեջ, եթե հաստատվեր զեմսովոյական համակարգ, չնայած, որ ընդդիմադիր վրացական Ազգային-դեմոկրատական կուսակցությունը պնդում էր, որ Թիֆլիսի ամբողջ նահանգը, վրացական է և պետք է մնա այդպիսին:

Ինչ վերաբերում է վրաց մյուս կուսակցություններին, ապա Սոցիալ-դեմոկրատները՝ մենշիկները, հայտարարել էին, որ ինքնակառավարման տերիտորիալ սահմանները պետք է որոշվեն ըստ այդ շրջաններում մեկ կամ այլ ազգերի բնակչության տոկոսային

³⁹ Шахатунян А., նշվ. աշխ., էջ 144:

⁴⁰ Նույն տեղը, էջ 171:

հարաբերության՝ միաժամանակ հաշվի առնելով նաև այդ ազգերի տնտեսական ու մշակութային պայմանները: Իսկ երբ սահմանները որոշվեն, ապա այն պետք է հաստատվեր այդ շրջաններում բնակվող ժողովուրդների հանրաքվեի միջոցով: Վիճելի տարածքային հարցերը նման ժողովրդավարական սկզբունքով լուծելու հարցում հայ և վրաց քաղաքական հոսանքների միջև այդ ժամանակաշրջանում տիրում էր կատարյալ համաձայնություն և փոխըմբռնում:

Նույն միահամուռ մոտեցումը պաշտպանվեց 1917թ. սեպտեմբեր-հոկտեմբերին Թիֆլիսում գումարված համահայկական խորհրդածողովում, որի ժամանակ կազմվեց *Արևելահայերի ազգային խորհուրդը*՝ հայ քաղաքական կյանքի գլխավոր ղեկավար մարմինը: Սահմանափոխության հարցը քննության առնվեց հոկտեմբերի 6-ին, 8-րդ նիստում, որի ընթացքում որոշվեց հավանություն տալ ժամանակավոր կառավարության կազմած նախագծին՝ ըստ էթնիկական սկզբունքի Անդրկովկասում վրացական, հայկական ու թուրքական վարչական խոշոր միավորներ ստեղծելու մասին: Ըստ այդ նախագծի՝ հայկական մասը պիտի բաղկացած լիներ Երևանի, Ելիզավետպոլի՝ Գանձակի և Ալեքսանդրապոլի նահանգներից: Հավանություն տալով այս նախագծին՝ փաստորեն, հայ քաղաքական շրջանակները պաշտոնապես պաշտպանում էին ժամանակավոր կառավարության ազգային և վարչատարածքային քաղաքականությունը, որի հիմքում ընկած էր արդարացի ու ժողովրդավարական էթնիկ-ազգագրական սկզբունքը: Հատկանշական է, որ վերոհիշյալ քննարկումների արդյունքում ձեռք բերված հայ վրացական ընդհանուր մոտեցումը՝

ազգագրական սկզբունքով առաջնորդվելու վերաբերյալ, չնայած թղթի վրա և քննարկվեց ու հավանության արժանացավ նաև Կերենսկու կառավարության կողմից⁴¹:

Հայոց համախորհրդակցությունում Անդրկովկասի սահմանափոխության հարցի քննարկման ընթացքում պատգամավորները մշտապես վկայակոչում էին կառավարության առաջարկած և ՕԶԱԿՈՍ-ի հավանությունը ստացած նախագիծը, բայց քննարկումն ընդհանուր առմամբ ընթանում էր նոր գաղափարների արծարծման և նոր հարցադրումների ճանապարհով: Հարցի քննարկումը նախապատրաստել էր անկուսակցական պատգամավոր Ստ. Կամսարականը, որը Միք. Պապաջանյանի խորհրդով տնական ժամանակ ուսումնասիրել էր այդ խնդիրը: Սահմանափոխության հարցով մտիկից զբաղվել էին նաև Գրիգոր Խատիսյանն ու Արշո Շահխաթունին⁴²: Անդրկովկասի վարչական տարածքների սահմանափոխության վերաբերյալ համախորհրդակցությանը ներկայացրած իր նախագծում Ստ. Կամսարականը նկատի չէր ունեցել քաղաքական դիտարկումները, այլ հիմք էր ընդունել տնտեսական և էթնիկական սկզբունքները: Նախագծի համաձայն, Անդրկովկասի հայերով խիտ բնակեցված տարածքներից կազմվում էր հայկական մի նահանգ, որի մեջ պետք է մտնեին ամբողջ Երևանյան նահանգը, Կարսի շրջանից՝ երկու գավառ, Թիֆլիսի նահանգից 2 գավառ և Գանձակի նահանգից՝ նրա լեռնային մասը: Հայկական այս նահանգի տարածությունը լինելու էր 60 հազար քառ. վերստ՝ 2 միլիոն բնակիչներով, որոնցից հայերը կազմելու էին 1 միլիոն 200 հազար կամ նահանգի բնակչության ընդհանուր թվի 60 տոկոսը⁴³:

2 / 74 2016

ՎԵՍՏ
ԱՐԳՄԵՆԻԱ

⁴¹ Մեյրոնյան Ա., Ջավախքը 19-րդ դարում և 20-րդ դարի առաջին քառորդին, Եր., 2003, էջ 268:

⁴² Միմոնյան Հ., նշվ. աշխ., էջ 610:

⁴³ <<Բանբեր Հայաստանի արխիվների>>, թիվ 1-2, 1992, էջ 60:

Այսպիսով, համախորհրդակցության պատգամավորները գործ ունենին հայաբնակ տարածքներում վարչական միավորներ ստեղծելու երկու տարբերակի հետ՝ կառավարության առաջարկած և ՕԶԱԿՈՄ-ի հավանությանն արժանացած տարբերակի, որը նախատեսում էր ստեղծել հայկական երեք նահանգ և Ստ. Կամսարականի կազմած և համախորհրդակցության՝ նահանգների ու գավառների սահմանագծերի փոփոխության և զեմստվոյի հարցերի սեկցիայի հավանությանը արժանացած տարբերակի, որը նախատեսում էր նույն տարածքների վրա կազմակերպել հայկական մեկ նահանգ: Բուռն վիճարանությունների ու հայ քաղաքական կուսակցությունների տարբեր դիրքորոշումների պատճառով հնարավոր չէր սահմանափոխության մասին որոշում կայացնելը, ուստի և համախորհրդակցությունն անհրաժեշտ գտավ այդ հարցի մասին բանաձևի ընդունումը թողնել հետագա նիստերից մեկին:

Երկրամասի սահմանագատման խնդիրը քննարկման նոր փուլ մտավ 1917թ. աշնանը: Նոր իշխանությունն ի դեմս Անդրկովկասյան կոմիսարիատի հանդես եկավ Անդրկովկասում ազգամիջյան հարաբերությունների մեղմացման, ազգային հարցի լուծման խոստումներով: Ազգային հարցի ու ազգամիջյան հարաբերությունների առնչությամբ Անդրկովկասյան կոմիսարիատը թեև հայտարարում էր, որ կանգնած լինելով ռուսական հեղափոխության հայտարարած ազգությունների կատարյալ ինքնորոշման տեսակետի վրա, միջոցներ ձեռք կառնի շուտափույթ և արդարացի կերպով վճռելու Անդրկովկասի ազգային խնդիրը, բայց նրա առաջին իսկ քայլերը նոր բարդություններ առաջ բերեցին: Նոյեմբերի 27-ին հրապարակվեց մի դեկրետ, որով

Անդրկովկասում մտցվում էին զեմստվոներ՝ ինքնակառավարման տեղական մարմիններ: Այդ հարցը վաղուց էր արծարծվում Կովկասում, սակայն ամեն անգամ դրա լուծումը ձգձգվում էր, քանի որ այն անխուսափելիորեն հանգում էր երկրամասի երեք հիմնական ժողովուրդների միջև սահմանների որոշման դժվարին հարցին, զեմստվային միությունների սահմանների գծելու խնդրին: Սահմանների տեսակետից դեկրետով վիճելի էր ճանաչվում Երևանի նահանգը, Գանձակի նահանգի Գանձակի, Ղազախի, Ջիվանշիրի, Շուշու, Ջանգեզուրի և Կարեազի նոյի գավառները, Թիֆլիսի նահանգի Ախալքալաքի և Բորչալուի գավառները»⁴⁴: Գլխավոր վիճելի շրջանները Ախալքալաքի և Լոռվա շրջաններն էին հայերի ու վրացիների միջև, և Ղարաբաղի ու Ջանգեզուրի գավառները՝ հայերի ու ադրբեջանցիների միջև: Պատմական, մշակութային և մանավանդ ազգագրական տեսակետից այդ շրջանները՝ բնականաբար, պիտի միանային զեմստվոյի հայկական միությանը, մինչդեռ երկու հակառակ կողմերը պնդում էին, թե այդ տարածքներն իրենցն են:

Ձեմստվոներ պետք է մտցնեն այն նահանգներում ու գավառներում, որտեղ ազգային հատկանիշով սահմանների վերանայման խնդիր չկար: Դեկրետը վարչական սահմանների տեսակետից անվիճելի էր ճանաչում Բաքվի, Քութայիսի և Սև ծովի նահանգները, Բաթումի և Դադստանի շրջանները, Սուխումի և Ջաքաթալայի գավառները, Թիֆլիսի նահանգի Թիֆլիսի, Սոնադի, Թելավի, Թիոնեթի, Դուշեթի, Գորու և Ախլցխայի գավառները, Գանձակի նահանգի Արեշի և Նուխու գավառները, Կարսի շրջանի Արդահանի և Օլթիի գավառները:

1917թ. աշնանը, հետևելով թաթարների օրինակին, տարածքային սահմա-

⁴⁴ Չոհրաբյան Է., Ազգամիջյան կռիվները Երևանի նահանգում, Եր., 2000, էջ 14:

նագատման սկզբունքների հարցում իրենց դիրքորոշումն արմատապես փոփոխեցին նաև վրաց քաղաքական շրջանակները⁴⁵:

Դեկրետում նշվում էր, որ հրատարակման օրից մեկ ամսվա ընթացքում Անդրկովկասյան Կոմիսարիատը կատարում է վարչական սահմանների բաժանում վիճելի նահանգներում և գավառներում, զեմստվային հաստատությունների նոր հաստատված սահմանների մեջ:

Նոյեմբերի 27-ի դեկրետով Անդրկովկասյան Կոմիսարիատը չէր լուծում սահմանային կնճռոտ խնդիրը: Այն նահանգներում, շրջաններում և գավառներում, ուր սահմանների խնդիր չէր ծագում, զեմստվային հաստատությունները պետք է մտցվեին անհապաղ, իսկ վիճելի տարածքների հարցը թողնվում էր ապագային:

Դեկրետի տակ դրված էր ոչ թե Անդրկովկասյան կոմիսարիատի նախագահ Գեգեչկորու, այլ ներքին գործերի կոմիսար Զիսենկելու ստորագրությունը: Մտացվում էր, որ Անդրկովկասում անվիճելի հայկական տարածք չկար՝ նույնիսկ Երևանի նահանգում, որն ամբողջությամբ վիճելի էր հայտարարված: Վիճելի էին հայտարարված նաև մյուս նահանգների բոլոր այն գավառները, որոնցում հայերը բացահայտ մեծամասնություն էին կազմում՝ Ախալքալաք, Բորչալու, Զանգեզուր և այլն⁴⁶:

Զեմստվային երեք միությունները ստեղծելիս պետք էր այնպես արվեր, որ չխախտվեին երեք ժողովուրդներից ոչ

մեկի իրավունքները՝ պատմական, ազգագրական և մշակութային առումներով: Բայց դա՝ իբրև տեսություն: Իսկ գործնականում հարցեր էին առաջանում, թե երկրամասի որ տարածքը որ զեմստվայի մեջ պետք է մտնի: Սկսվում էին վեճերը, որոնք անարդյունք էին և անվերջ:

Այսպիսով, վրացական և թուրքական մասերում մտցվում էր զեմստվո, իսկ հայկական մասերում՝ ոչ, որովհետև հայկական ամբողջ մասը համարվում էր վիճելի:

Միտումը պարզ էր՝ վրաց-ադրբեջանական բլոկը ձգտում էր տիրապետող դիրք ձեռք բերել Անդրկովկասում, այն բաժանել իրենց միջև, իսկ հայերի տարածքային իրավունքները հավասարեցնել գրոյի: Պարզ է նաև, որ այս դեկրետը նոր վեճերի դուռ պետք է բացեր, էլ ավելի սրեր հայ-վրացական ու հայ-ադրբեջանական հարաբերությունները: Զեմստվային համակարգը գործնական կիրառում չգտավ, քանզի ինքնաբերաբար հանգեցրեց Անդրկովկասի նույն՝ էթնիկ վերաբաժանման ցավոտ խնդրին: Անդրկովկասյան Կոմիսարիատի այս դեկրետը նոր հակասությունների դուռ բացեց: Վեճերը շարունակվում էին նոր թափով, և դեկրետը, ըստ էության, չհասավ իր նպատակին⁴⁷: Կոմիսարիատին փոխարինած Անդրկովկասյան սեյմը՝ սկսված թուրքական արշավանքի, ընդհանուր անարխիայի պայմաններում, ներքին ազգային սահմանափոխումների խնդիրը մոռացության տվեց:

⁴⁵ Մելքոնյան Ա., նշվ. աշխ., էջ 269:

⁴⁶ Զոհրաբյան Է., նշվ. աշխ., էջ 15:

⁴⁷ Սիմոնյան Հ., նշվ. աշխ., էջ 648:

ՀԱՅ-ԱՂԴԲԵԶԱՆԱԿԱՆ ՍԱՀՄԱՆԱՅԻՆ ԽՆԴԻՐՆԵՐԻ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ

ՅՈՒՐԱ ՎԱԶԳԵՆԻ ՂՈՒԼՅԱՆ

Պատմական գիտությունների թեկնածու, դոցենտ

ԱՄՓՈՓՈՒՄ

Ցարական կառավարությունը երկրամասում իր գաղութային ծրագրերի հաջողության տեսակետից վարչական-ադմինիստրատիվ բաժանումներն անց էր կացրել կամայականորեն, որի արդյունքում հայկական տարածքները հայտնվել էին տարբեր վարչական միավորումների կազմում:

Անդրկովկասի սահմանային բաժանման հարցի քննարկումների ընթացքում հենց սկզբից լուրջ տարաձայնություններ ծագեցին հայերի և կովկասյան թուրքերի միջև: Սահմանաբաժանման հարցի քննարկումները ավելի սրեցին հայ-ադրբեջանական հարաբերությունները, իսկ թուրքական 1918թ. ներխուժումն Անդրկովկաս՝ դրանց քննարկումը դարձրեց ավելուրդ:

Բանալի բառեր. Ղույան Յուրա Վազգենի, հայ-ադրբեջանական սահմանային խնդիրներ, հայեր, կովկասյան թուրքեր:

ИЗ ИСТОРИИ ДЕМАРКАЦИОННЫХ ПРОБЛЕМ МЕЖДУ АРМЕНИЕЙ И АЗЕРБАЙДЖАНОМ

ЮРА ВАЗГЕНОВИЧ ГУЛЯН

кандидат исторических наук, доцент

FROM THE HISTORY OF THE ARMENIAN - AZERBAIJAN FRONTIER ISSUES

YURA VAZGEN GHULYAN

*Candidate of historical sciences,
Docent.*

РЕЗЮМЕ

Царское правительство для успешной реализации своих колониальных программ в регионе осуществляло административно-территориальное деление произвольно, в результате чего армянские земли оказались в составе разных административных единиц.

В процессе обсуждения демаркационного деления Закавказья с самого начала возникли серьезные разногласия между армянами и кавказскими турками. Обсуждения вопроса демаркации еще больше обострили армяно-азербайджанские отношения, а турецкая экспансия в 1918г. в Закавказье сделала переговоры бессмысленными.

Ключевые слова: *Гулян Юра Вазгенович, армяно-азербайджанские демаркационные проблемы, армяне, кавказские турки.*

SUMMARY

The tsarist government willfully carried out administrative divisions in the region from the viewpoint of its success in colonial plan. As a result the Armenian territories appeared in different administrative unities. During the discussions of frontier demarcation of Transcaucasia from the very outset serious controversies arose between the Armenians and Caucasian Turks. The discussions of frontier demarcation issues aggravated Armenian Azerbaijan relations and the Turkish invasion of Transcaucasia in 1918 made the negotiations superfluous.

Key words: *Yura Vazgen Ghulyan, Armenian Azerbaijan demarcation issues, Legal Anthropology, Armenians, Caucasian Turks.*

ՀԱՅ-ՖՐԱՆՍԻԱԿԱՆ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆԻՑ

Ֆրանսիայի հանրապետությունը ներկայիս աշխարհի հզորագույն երկրներից է: Այդ մեծ, ժողովրդավար, հայասեր ու հյուրասեր երկրի հետ, ուր կա հայահոծ, շուրջ կես միլիոնի հասնող կազմակերպված գաղթօջախ, հայերս ունենք պատմականորեն ձևավորված ջերմ և առանձնահատուկ հարաբերություններ:

Ժողովրդավարության օրրան Ֆրանսիայի դեկավարներ, Ազգային ժողովի պատգամավորներ, քաղաքական ու մշակութային ստվար կազմով գործիչներ բազմիցս են հանդես եկել արդարության հայանպաստ դիրքերից, աջակցել ու աջակցում են նորաստեղծ հայկական հանրապետությանը: Մյուս կողմից, Դիդրոյի, Սեն-Միմոնի, Հյուգոյի, Արագոնի, Ժան-Շոքրեսի ու Էմիլ Զրլայի երկրում ձևավորված հայ համայնքը ևս շոշափելի ներդրում է ունենում ոչ միայն Ֆրանսիայի տնտեսության ու մշակույթի մեջ, երկու երկրների հարաբերություններին ներդաշնակ բնույթ հաղորդելու գործում, այլև, դրանով իսկ, բարձրացնում է Ֆրանսիայի հանրապետության ու Հայաստանի հանրապետության վարկանիշը միջազգային կառույցներում: Դրսևորելով ազգային փոքրամասնությունների իրավունքները հարգելու, նրանց ինքնության, մշակութային արժեքների հետ հաշվի նստելու ուշագրավ վերաբերմունք, տվյալ դեպքում՝ հանձինս հայ համայնքի նկատմամբ նման միանգամայն ժողովրդավար վերաբերմունքի, Ֆրանսիան օրինակ է ծառայում այլ պետությունների համար: Նշվածից երևում է, թե ներկայիս բարդ ու հակա-

սականորեն զարգացող միաջազգային իրադրության պայմաններում որքան կարևոր են հայ-ֆրանսիական հարաբերությունների պատմության ըստ ամենայնի վերլուծությունը և, հետևաբար, այդ հիմքի վրա համագործակցության նոր եզրերի որոնումները:

Աշխարհագրականորեն Ֆրանսիան Հայաստանից զգալիորեն հեռու է, և, այդուհանդերձ, փաստ է, որ երկու ժողովուրդներին մերձեցնող շատ բան կա: Պատմական հարուստ փաստերը և փաստաթղթերը վկայում են հայ-ֆրանսիական միանգամայն ուշագրավ և բազմաբովանդակ բնույթի առնչությունների մասին ինչպես տնտեսության ու մշակույթի, այնպես էլ՝ գիտական ու մշակութային հարաբերությունների ոլորտներում:

Տարածությունն ու ժամանակների բնույթը քիչ են խանգարել, որ Ֆրանսիայի և հայ ժողովրդի միջև դեռ վաղ անցյալից սկիզբ առնի հոգևոր ամուր կապ: Հայտնի փաստ է, որ հայոց Տրդատ Մեծի III արքայի՝ հոների կողմից Հայաստանից դուրս բերված թագը ժամանակին կրել է ֆրանսիկների արքա Կառլոս Մեծը:

Հայ գիտական և հոգևորական շրջանակներում ևս քաջատեղյակ են եղել ֆրանսիայի ու ֆրանսիացիների մասին: Անանիա Շիրակացին, մասնավորապես, իր հանրահայտ «Աշխարհացուցում» նկարագրել է Գալիան և հիշատակել բնակիչներին՝ «ֆրանկս զհզոր» անունով:

9-10 դդ մեզ է հասել հայերեն-լատիներեն մի զրուցատվություն՝ կցված Հովերոսի նամակին: Այն ցույց է տալիս,

որ գիտական, ուսումնական և դիվանագիտական շրջանակներում հայոց լեզվի նկատմամբ այնքան մեծ է եղել հետաքրքրությունը, որ անհրաժեշտ են համարել հատուկ ձեռնարկ կազմել:

Այսինքն՝ դեռ վաղնջական ժամանակներից հայ-ֆրանսիական կապերը չեն սահմանափակվել սոսկ փոխադարձ տեղեկություններ հավաքելով և առևտրական հարաբերություններով: Կարելի է փաստել, որ մինչ այդ պետականաշինության և միաջազգային հարաբերություններում դիվանագիտական աշխատանքի զգալի փորձ կուտակած Հայաստանը ուսումնասիրության հատուկ օբյեկտ է եղել Ֆրանսիայում: Ֆրանսիացիները առանձնապես տպավորվել են հայ մշակույթի առումով և կրել նկատելի ազդեցություն: Ճարտարապետության պատմության մասնագետներն, օրինակ, իրողություն են համարում Ֆրանսիական ճարտարապետական որոշ հուշարձանների նմանությունը հայկական ճարտարապետությանը, ընդգծում ակնառու ազդեցությունը: Ավստրիայի հայտնի պատմաբան, արվեստաբան Յոզեֆ Մորթիգովսկին իր «Հայերի ճարտարապետությունը և Եվրոպան» երկհատոր կապիտալ աշխատությունում նշում է, որ Ֆրանսիայի Օռլեան քաղաքի մոտ գտնվող Մեն Ժերմենի Դեֆրե 806 թվականին հիմնված եկեղեցին կառուցված է հայկական ոճով⁴⁸:

Հիմնարկվել են նաև քաղաքական կապեր: Պատմագիտական գրականության մեջ հիշատակություններ կան 9-10 դարերում հայ դիվանագետների Ֆրանսիա այցելության մասին: Արաբական խալիֆ Հարուն ալ-Ռաշիդի՝ Կառլոս Մեծի արքունիք 807թ.-ին ուղարկված պատգամավորության մեջ ըստ տեղե-

կությունների եղել են նաև հայեր⁴⁹: Բյուզանդական արքունիքից նույնպես 840թ.-ին Ֆրանսիա է ուղարկվել պատգամավորություն հայ իշխան Թեոդոս Բաբուցիկի գլխավորությամբ⁵⁰:

Անիի Բագրատունյաց թագավորության կործանումից հետո թուրանական ու մոնղոլական ցեղերի ճնշման տակ բավականին մեծ թվով հայեր են Հայաստանից գաղթել Եվրոպա: Պատմաբան Յորդան-Իվանովը կարծում է, որ հենց այդ շրջանում են հիմնվել ֆրանսահայ առաջին գաղթօջախները⁵¹:

Հայ-ֆրանսիական հարաբերություններն ավելի ծավալուն և ակտիվ բնույթ են ստանում Կլիվիայում Ռուբինյանների հայկական պետության ստեղծումից հետո, առանձնապես Խաչակրաց արշավանքների շրջանում:

13-14դդ. ֆրանսիական առևտրային նավերն ավելի հաճախ են կառանվում Կլիվիայի Հայաստանում, Այաշ նավահանգստում: Ֆրանսիացիները մուտք են գործում Տարսոն, Ադանա և մայրաքաղաք Սիս՝ ներկրելով գլխավորապես արդյունաբերական ապրանքներ՝ ածելի, հայելի, փարիզյան գոտի, օձառ, մեղրամոմ, այլ արտադրանք: Ինչ վերաբերում է հայերին, ապա 12-14 դդ. հայ առևտրականներին հաճախ են հանդիպել Պրովանսում, Մարսել, Մոնպելիե, Նարբոն, Նից և այլ նավահանգստային քաղաքներում: Նրանք Ֆրանսիա էին բերում մետաքս և արևելյան համեմունքներ, գորգեր:

Խորացող տնտեսական կապերը նպաստում են նաև լեզվամշակութային առնչությունների աշխուժացմանը:

Ֆրանսիացի արևելագետ Գ.Պոստելը 1537 թվականին Մերձավոր Արևելքում ճանապարհորդելուց և տեղի մի շարք լեզուներին ծանոթանալուց հետո 1538-

2 / 74 2016

ՎԵՍՏԱՆ ԱՐԴՊՈՒԹԵՆՆ

⁴⁸ Գ. Խանամիրյանի հոդվածը («Պայքար», բացառիկ, 1951, էջ 9)
⁴⁹ Ղ. Ալիշան «Սխուտան», էջ 456 (հմմ. Macler, էջ 10, Հրանտ Մամվել, «Ֆրանսահայ տարեգիրք», 1927, էջ 51)
⁵⁰ Սլադոյաջյան, ՊԶԿ, II, էջ 609
⁵¹ «Հայկարան», էջ 50

ին Փարիզում լույս է ընծայել «Բազմալեզվյան քերականություն» լատիներեն աշխատությունը, որտեղ տեղեկություններ են տրված արևելյան 12 լեզվի, այդ թվում հայերենի մասին: Գրքում կա փայտագիր հայատառ տպագրություն՝ մեսրոպյան այբուբենը և հայերենի նմուշը: Դա հայերենի առաջին փայտագիր տիպն է, իսկ հայոց լեզվին նվիրված հատվածը՝ հայագիտական առաջին տպագիր երկը: 1586-ին Փարիզում լույս է տեսել Բլեզ դը Վիժների «Ձեռնարկ գրերի մասին» գիրքը, գրված հին ֆրանսերենով, որտեղ մի հատված (էջ 309-313) նվիրված է Հայաստանին ու հայոց լեզվին, բերված է փայտագիր հայերեն այբուբենի երկու աղյուսակ (ըստ Ի.Բարբարոյի): 17-րդ դարում Փարիզում տպագրված առաջին հայերեն գործը գետեղվել է Կլոդ Դյուրե Բուրբոնուայի «Գանձ աշխարհի լեզուների պատմության» աշխատության մեջ (1613թ.), որում հայոց լեզվին նվիրված հատվածում տեղ է գտել հայերեն փայտագիր այբուբենը (դարձյալ՝ ըստ Ի.Բարբարոյի): 1633 թվականին Փարիզի Կայսերական տպարանում լույս է տեսել Ֆրանցիսկ Ռիվոլայի «Բառագիրք հայոց» (հայերեն-լատիներեն) բառարանի երկրորդ հրատարակությունը, որը Փարիզում հրատարակված առաջին հայերեն գիրքն է, տպագրված շարժական տառերով (շարվածք):

Փարիզի ազգային մատենադարանի մի ձեռագրում հիշատակություն կա այն մասին, որ «Հայաստանի թագավորությունից Ֆլանդրիա են ներմուծել բամբակ և զանազան համեմունքներ»⁵²: Տեղեկություններ կան անգամ Ֆրանսիայում գործող հայ առևտրական ընկերությունների մասին: Հիմնարկվում են նաև ռազմական կապերը:

Կիլիկիայի թագավորները ֆրանսիացիներին էին զիջել Պրովանսալ կղզին (ներկայիս Դանա Ատասը), որը այսուհետև դառնում է ֆրանսիացիների նավատորմի կարևոր կայանը⁵³:

Հարաբերությունների ջերմացումը քրիստոնյա մեծ երկրի հետ հանգեցնում է նրան, որ ավելի են ազատականացվում տնտեսական կապերը, սահմանվում են արտոնյալ ռեժիմներ:

Կիլիկիայի հայկական արքունիքի տված առանձնաշնորհումներով ֆրանսիացի առևտրականներն ավելի պակաս գումարով էին մուծում մաքսը, քան մյուս այլ ազգության պատկանող առևտրականները: Մինչև այժմ Ֆրանսիայի Մոնպելիե քաղաքի դիվանատանը պահվում է Օշին թագավորի կողմից Ֆրանսիայի վաճառականներին 1314թ. հունվարի 7-ին տված արտոնագիրը՝ նրանցից ոչ ավելի քան երկու տոկոս մաքս գանձելու վերաբերյալ:

Ուշագրավ փաստ. 13-14 դարերում Ֆրանսիա եկած հայ վաճառականների միջև այնքան շատ առևտրական գործարքներ էին կնքվում, որ հարավային ֆրանսիական որոշ համալսարանների դռներին փակցնում էին հայկական և ֆրանսիական դրամների փոխարժեքը ցույց տվող սակացանկեր՝ դրանցով առաջնորդվելու նպատակով⁵⁴:

Եվս մեկ հետաքրքիր փաստ է. Ռոն գետի մեկ վտակը (այժմ չորացել է) հնում ունեցել է «Հայկական» անունը⁵⁵: Այդ վտակի շրջապատում ապրելիս են եղել հայեր, որոնք գետին մերձակա վայրերում կազմակերպել են տոնավաճառներ, ինչը և հիմք է դարձել վտակին հայկական «անձնագիր» շնորհելուն:

Ֆրանսիացի ճանապարհորդ Ուիլյամ Ռուբրուքը 1253-1255 թվականներին անցնելով Հայաստանով՝ եղել է հայկա-

⁵² Հրանտ Արմեն, Ֆրանսահայ տարեգիրք, 1927, էջ 54

⁵³ Ալպոյաճյան, ՊԷԳ, II, էջ 613

⁵⁴ «Հայկաշեն», Փարիզ, 1943, էջ 74

⁵⁵ «Բազմալեզվ», 1919թ., էջ 144-149

կան մի շարք քաղաքներում՝ Նախիջևանում, Երևանում, Մանազկերտում, Երզնկայում, Կամախում, Մեքաստիայում, Կեսարիայում և Սիսում: Ռուբրոքին հետաքրքրել են ոչ միայն պատմական անցքերը, այլև ազգագրական առանձին երևույթներ: Նրա հավաստմամբ, բնակիչները քրիստոնյա էին Նախիջևանի գեղեցիկ տեսք ունեցող գյուղերում և քաղաքներում, իրենց տներում պահելիս են եղել «մի փայտյա ձեռք՝ խաչը բռնած, և մի վառվող ճրագ՝ դրված նրա առջև»: Նախիջևան քաղաքում Ռուբրոքը ակնատես է եղել հայ քահանայի հուղարկավորության արարողությունը, լսել հայ եկեղեցու հետ կապված ավանդույթներ և ծիսական երգեր, շարականներ:

Հարավային Ֆրանսիայի Տարասկոն քաղաքի եկեղեցում գտնվել է 1226 թվականի հայերեն արձանագրություն⁵⁶, որն անհերքելիորեն ապացուցում է, որ այնտեղ հայ բնակչություն է գոյություն ունեցել դեռևս 13-րդ դարում:

Հայ գաղթականության նոր հոսանք Ֆրանսիա է եկել 14-րդ դարում Կիլիկիայի հայկական պետականության անկումից հետո: Այնտեղ են եկել ու ապաստանել գլխավորապես Կիլիկիայի արքունիքի ազնվականական ներկայացուցիչներն ու մեծահարուստ հայ վաճառականները: Տեղեկություններ կան, որ պապի նստավայրի Ֆրանսիայի Ավինիոն քաղաքում գտնված ժամանակ, Կղեմես (Կլիմենտ) պապին է ներկայացել հայոց Հեթում պատմիչը և նրան նվիրել «Ծաղիկ արևելքի պատմության» վերնագրով իր աշխատությունը⁵⁷: 1384 թվականին Ֆրանսիայի և Իսպանիայի միջնորդությամբ եգիպտական գերությունից ազատվելով Ֆրանսիայում է ապաստանել Լևոն 6-րդ հայոց թագավորը: Հայկական թագավորական

գահի վերջին պայագատին Ֆրանսիայում ընդունել են բացառիկ սիրալիրությամբ, հատկացրել են դոյակ, նշանակել են կենսաթոշակ: Ի դեպ, Լևոն թագավորը նաև հմուտ դիվանագետ էր: Ֆրանսիայում եղած ժամանակ նա, ցանկանալով վերջ դնել Անգլիայի և Ֆրանսիայի միջև ծագած հարյուրամյա պատերազմին և միացյալ ճակատ կազմել ընդդեմ Արևելքից սպառնացող թուրքական վտանգի, ուղարկվել է Անգլիա և ֆրանսիական արքունիքի անունից բանակցություններ վարել Անգլիայի քաղաքական ղեկավարի շրջանների հետ: Միայն երկու տերությունների միջև հակասությունները թույլ չեն տվել, որ առաջարկված ծրագիրը կյանքի կոչվի: Լևոն Լուսինյանը մահացել է Փարիզում 1393 թվականի նոյեմբերի 29-ին:

Ֆրանսիայում գտնվող հայ գաղթականների մեջ ազնվական դասի ներկայացուցիչներից բացի տեղեկություններ կան նաև հայ արհեստավորների մասին: Հայտնի է, օրինակ, որ Փիլիպոս Հանդուգն ֆրանսիական թագավորի դոյակի շինարարությանը մասնակցել են հայ արհեստավորները⁵⁸:

Հայ գաղթականության մի նոր հոսանք Ֆրանսիա է եկել Պոլսից 1453 թվականին, երբ քաղաքը գրավվել է թուրքերի կողմից: Համաշխարհային պատմության հետագա ընթացքը լրջորեն փոխած այդ աղետալի իրադարձությունը ինչպես հայտնի է խիստ բացասաբար է անդրադարձել նաև հայության ճակատագրի վրա՝ զանգվածային արտագաղթի սկիզբ դնելով: Հաջորդ դարերում առանձնապես մեծանում են ինչպես Փարիզի, այնպես էլ Մարսելի հայկական գաղթօջախները, հիմնվում են նորերը:

Բնույթով արարող և շնորհաշատ հայությունը ինքնադրսևորման լայն հնա-

⁵⁶ Ալպոյաճյան, ՊՀԳ, II, էջ 612 (հմմ. «Բազմավեպ», 1919, էջ 145-146)

⁵⁷ «Բազմավեպ», 1919թ., էջ 148

⁵⁸ Ալպոյաճյան, ՊՀԳ, II, էջ 618

րավորություններ է ստանում Ֆրանսիայում: 16-րդ դարի վերջերից սկսած ֆրանսիական շուկայում արտակարգ հաջողությամբ սկսում են գործել հայ խոջաները, որոնց ձեռքին էր գտնվում, կարելի է ասել, արևելյան ապրանքները Եվրոպայում վաճառքի հանելու մենաշնորհը: Նրանց գործունեությանը նպաստում է կարդինալներ Ռիշելյեի, Սագրահնի և Կոլբերնի քաղաքականությունը, որոնք լայնորեն բաց են անում Ֆրանսիայի դռները օտարերկրյա, այդ թվում և հայ առևտրականների առջև: Սարսելը դառնում է միջազգային առևտրի խոշոր կենտրոն, ուր անարգել իրենց գործունեությունն են ծավալում նաև հայերը:

15-18 դարերում հայկական փոքրիկ նոր գաղթօջախներ են առաջանում նաև Տուլոնում, Սիցոում և արդյունաբերական մյուս կենտրոններում: Ըստ տեղեկությունների, Ֆրանսիայում հայ գաղթականներ են եղել ոչ միայն քաղաքներում, այլև գյուղերում:

Ֆրանսիական ժողովուրդը, պետք է ասել, որ երախտամոռ չի գտնվել երկրի տնտեսության, մշակույթի բնագավառներում և հեղափոխական բարեփոխումների ընթացքում բացառիկ ծայրություն մատուցած հայ գործիչների հիշատակը հավերժացնելու տեսակետից: Հայտնի է, որ Սարսելին մոտիկ Ավինիոն քաղաքում կանգնեցված է հայ գյուղատնտես Ժան Ալթնի արձանը:

Ժան Ալթնը՝ նույն ինքը՝ հայկական ճիշտ անունն է Հովհաննես Ալթունյանը, պարսկահայ էր: Թափառիկ ճակատագիրը նրան նետել է Թուրքիա, ապա Ֆրանսիա: Այստեղ էլ նա ամուսնացել է և հաստատվել է Ավինիոն քաղաքում: Ցանկանալով զարգացնել տորոնի մշակությունը Ֆրանսիայում, նա ի հեճուկս թուրքական պետության դրած արգելքների և վտանգելով իր կյանքը, Ֆրանսիա է տեղափոխել տորոն բույսի սերմը և մշակություն կազմակերպել: Իր գոր-

ծադրած ջանքերը թեպետ սկզբնական շրջանում նյութական մեծ օգուտ չեն բերել և նա մահացել է չքավորության մեջ, սակայն հետագայում տորոնի մշակույթը լայնորեն տարածվել է Ֆրանսիայի մի քանի նահանգներում և շահութաբեր աղբյուր դարձել տեղի բնակչության համար: Վոքյուզ քաղաքի բնակիչները, պատշաճ գնահատելով հայ գյուղատնտեսի վաստակը, արձան են կանգնեցրել ի պատիվ Հովհաննես Ալթունյանի՝ հետևյալ մակագրությամբ՝ «Տորոնի ներմուծող Ժան Ալթնին՝ երախտագետ վոքյուզցիներից»:

Հայերն աչքի են ընկել նաև սննդի մատուցման ծառայությունների ոլորտում: 1672-ին Պասկալ (Հարություն) անունով մի հայ Փարիզի Սեն-Շերմեն թաղամասում բացել է Ֆրանսիայում առաջին արձարանը: Այս կարգի բիզնեսը հետագայում լայն տարածում է ստացել ոչ միայն մայրաքաղաքում, այլև մյուս խոշոր առևտրաարդյունաբերական կենտրոններում:

Ընդհանրացնելով ասենք, որ մինչև 18-րդ դարի վերջը մայրաքաղաք Փարիզում և Լիոնում հայերը փոքրաթիվ ու չկազմակերպված մի համայնք էին, սակայն, ինտեգրվելով հասարակության մեջ, առանձնանում էին ձեռներեցությամբ, վայելում վասատակած համակրանք: Դա ուղղորդում է ֆրանսիական հասարակության համապատասխան կառույցներին ուշադրություն դարձնել հայերեն լեզվին, առհասարակ՝ արևելագիտությանը և այդ շրջանակներում նաև հայագիտությանը:

1798թ. Փարիզում հիմնադրված Արևելյան կենդանի լեզուների դպրոցում կազմակերպում է հայագիտական ամբիոն, որի առաջին վարիչը մինչև 1827թ. Հակոբ Շահան Ջրպետյանն է եղել:

1789-94թթ. բուրժուական հեղափոխությունից սկսած Ֆրանսիան թևակո-

խում է ավարատիրությունից բուրժուական, դրամատիրական հարաբերություններին անցման, հասարակական-տնտեսական ու քաղաքական, մշակութային կյանքի բնագավառներում արմատական նոր փոփոխությունների, սկզբունքորեն նոր կացութաձևին անցման ժամանակաշրջան: Ազատություն, հավասարություն, եղբայրասիրություն հռչակած երկիրը, դառնալով առաջադիմության խորհրդանիշ, բնականաբար ավելի մեծ ուժով սկսում է իրեն ձգել այլ երկրների տարագիրներին:

Դա օգնում է, որ հայերը ևս ֆրանսիական գաղթօջախում դառնան ավելի կազմակերպված, լուսավորության և գրատպության անդաստաններում առաջադիմական քայլեր կատարող համայնք:

1846-ից Սևրում սկսել է գործել Մամուլե Մարատ վարժարանը, նույն թվականից (մինչև 1862 թվականը) Արամյան տպարանը, որտեղ տպագրվել է Մ. Նալբանդյանի «Երկրագործությունը որպես ուղիղ ճանապարհ» աշխատությունը:

1840-ական թվականներից, բուրժուական հարաբերությունների արմատավորման ժամանակներից Փարիզ է սկսում ձգտել ուսումնաստենչ հայ երիտասարդությունը՝ հիմնականում հետևելով բժշկությանը: Միայն 1843-1914 թվականներին այդ բուհն ավարտել են 122 հայ երիտասարդ: Ավելանում են նաև իրավագիտության և փիլիսոփայության ուսանողները:

Ուսյալ հայերը Փարիզում հետ չեն մնացել երկրի հասարակական, քաղաքական և մշակութային կյանքից, աչքի են ընկել և փորձել կազմակերպվել՝ տառապյալ հայրենիքին օգնելու նպատակադրությամբ:

1849-ին Փարզիում հիմնվել է «Արարատյան ընկերությունը» (Ն.Ռոսինյան և ուրիշներ), որը հանրահռչակում էր

հայ ժողովրդի ազգային-ազատագրական պայքարի բարձրանալու գաղափարը: Նրանց հայացքների ձևավորման վրա լուրջ ազդեցություն են ունենում Վոլտերի, Մոնտեքյոյի, Ժան Ժակ Ռուսոյի, Լուսավորության դարաշրջանի մյուս հսկաների աշխատություններն ու գաղափարները, հեղափոխականներ Մարատի, Ռոբեսպիեռի, Դանտոնի հայացքները: Հայ ուսանող մտավորականության կազմակերպման համար հզոր իթանարար են դառնում Հունաստանի, Ռումինիայի, Սերբիայի ազատագրվելը Օսմանյան Թուրքիայի լծից, հզոր ապստամբությունները Բոսնիա-Հերցեգովինայում և այլն: Արտերկրյա այս գաղութում զարգանում է հայ տագրական գործը, սկսում են լույս տեսնել մի շարք պարբերականներ: Ֆրանսիական երեք հեղափոխությունները՝ 1789-94, 1830, 1848 թթ., մաքրելով միջնադարյան Եվրոպայի ավգյան ախտոները, զարգացման նոր հորիզոններ են բացում անհատի և հասարակությունների զարգացման համար, որից և օգտվում է հայ երիտասարդությունը:

1855-ին լույս են տեսել առաջին՝ «Արևելք» և «Մասյաց Աղավնի» պարբերականները: Մինչև օրս Փարիզում լույս է տեսել շուրջ 175 անուն հայալեզու պարբերական:

Հայ քաղաքական միտքը ևս հիմնավոր քայլեր է անում:

19-րդ դարի վերջից Փարզիում ստեղծվել են հայկական հասարակական կազմակերպություններ. 1879-ին՝ «Հայկազեան ընկերությունը», 1904-ին՝ «Աշխատավորական միություն», 1913-ին՝ «Ֆրանսահայ տիկնանց միությունը» և այլն: Դրանց գործունեության առանցքում ինչպես ֆրնասիական հասարակությանը հայ մշակութին ծանոթացումն էր, այնպես էլ՝ հայրենիքին օգնելու միանգամայն անկեղծ ձգտումը:

Այսինքն՝ այս կազմակերպությունները Ֆրանսիայում համախմբվել են՝ նպատակ հետապնդելով ապահովել համայնքի հայապահպան խնդիրները, ինչպես և ուղիներ որոնել՝ նպաստելու Հայաստանի ազատագրությանը:

Ձևավորվել է սկսել գաղութահայ կրոնական կյանքը: 1902-ին հայ ժողովրդի լավագույն զավակներից մեկի՝ Ալ. Մանթաշյանի նախաձեռնությամբ Փարիզի կենտրոնում կառուցվել է Սուրբ Հովհաննես առաջին հայկական եկեղեցին:

Ֆրանսիահայերն սկսել են նաև ռազմական համագործակցության փայլուն օրինակներ դրսևորել: Առաջին աշխարհամարտի տարիներին մարշալ Ալենքիի Արևելքում (Միքիական ճակատում) գործող ֆրանսիական բանակի շարքերում Հայկական լեգեոնը Ջիմ Չանգայանի հրամանատարությամբ վճռական դերակատարում է ունեցել թուրքական Յրլոքքըմ բանակի ջախջախման գործում, առանձնապես փայլել Արարայի պատմական ճակատամարտում:

Փարիզի հայ համայնքը առավել աշխուժացել է առաջին համաշխարհային պատերազմից հետո, մասնավորապես 1920-ական թթ. կեսից, երբ Մեծ Եղեռնից փրկված արևմտահայ գաղթականների մի մասը, հասնելով Մարսել, ապատարածվել է երկրով մեկ՝ սովորացնելով նաև Փարիզում և նրա մերձակայքի հայության կազմը:

Հայության խլյակներից առաջիններից մեկը ֆրանսահայությունն է զգացել համախմբվելու և քաղաքականապես կազմակերպվելու անհրաժեշտությանը: 1849-ին Փարզիում հայերը հիմնել են Արարատյան ընկերությունը, որը պրոպագանդում էր հայ ժողովրդի ազգային ազատագրության գաղափարը: Փարիզում հայերի թվի աճին գուցե ընթաց ավելացել են և՛ հասարակական, և՛ կրթական կազմակերպու-

թյունները, հիմնվել են Մարի Նուպարուսանդական տունը, Հայ Բժշկական միությունը, ֆրանսահայ գրողների ընկերությունը, ՀՄԸՄ Փարիզի մասնաճյուղը (1920-ից), ՀՕԿ-ի մասնաճյուղը (1925-ից), Փարիզ է տեղափոխվել Դպրոցասեր տիկնանց միությունը, 1922-1942-ին Փարիզում էր գտնվում Հայ բարեգործական ընդհանուր միության վարչական կենտրոնը: 1926-ին կազմակերպվել է հայ արվեստագետների «Անի» խմբակցությունը, որի անդամներն էին նկարիչներ Շ. Ադամյանը, Հ. Ալիազյանը, Վ. Մախոխյանը, Էդգար Շահինը, քանդակագործ Հ. Գյուրջյանը: Պատերազմի ավարտին ֆրանսահայ երիտասարդները հիմնադրել են դիմադրության շարժման հայ նախկին մարտիկներից բաղկացած ԺԱՖ՝ ֆրանսահայ երիտասարդական միությունը (1922):

Այս ամենի առկայությամբ Փարիզը դարձել էր արտերկրում հայ մշակույթի կենտրոններից մեկը: Ստրկացված և տարափեղկված հայրենիքում բավարար պայմանների և անվտանգության բացակայությամբ պայմանավորված Փարիզում են ապրել և ստեղծագործել Արշակ Չոպանյանը, Ավետիք Իսահակյանը, Ալեքսանդր Շիրվանզադեն, Հրայր Քոչարը: 1926-28թթ. Փարիզում է ապրել և ստեղծագործել Մարտիրոս Սարյանը, սիրվել ու մեծարվել: 1926-ին Փարիզում բացվել է նրա ստեղծագործությունների ցուցահանդեսը:

Փարիզում են ստեղծագործել մեծանուն գիտնականներ Հարություն Սվաճյանը, պրոֆեսոր Արսեն Տերտերյանը, աշխարհագրագետ, քարտեզագետ Ջ. Խանզադյանը, մեծանուն պատմաբան Նիկողայոս Ադոնցը, գրողներ Զապել Եսայանը, Շահան Շահնուրը, Վ. Շուշանյանը, Վ. Մալեգյանը, Ջ. Որբունին, Բ. Թովաթյանը, քանդակագործ Դ. Կամսարականը, նկարիչ Լ. Թուրունջյանը,

դերասաններ Ա. Շահխաթունին, Մ. Մաքսուտյանը և այլք անվանի հայ մտավորականներ ու արվեստագետներ:

Հայերը գործելով և ապրելով Ֆրանսիայում, մասնավորապես Փարիզում, զգալի նպաստ են բերել այդ հյուրընկալ երկրին: Երկրորդ համաշխարհային պատերազմի տարիներին առանձնապես նրանք ակտիվորեն ներգրավվել են ֆաշիզմի դեմ մարտնչող ֆրանսիական Դիմադրության շարժման մեջ: Բանաստեղծ Միսաք Մանուշյանը գլխավորել է ինտերնացիոնալ պարտիզանական ջոկատներ: Ֆաշիստներին հաջողվել է բացահայտել Մանուշյանի խմբին և մահվան դատապարտել: Մանուշյանին հետմահու շնորհվել է Ֆրնասիայի ազգային հերոսի բարձր կոչում: Ֆրանսիայի ազատագրմանը մեծ նպաստ է բերել հայ հայրենասերների «Հայ ազգային ճակատ» կազմակերպությունը:

Այս ամենի արդյունքում առավել սերտ կապեր են հաստատվել նաև մայր Հայրենիքի հետ: Փարիզահայ կամակերպությունների հրավերով Ֆրանսիայի մայրաքաղաքում և շրջակա բնակավայրերում հանդես են եկել Արամ Խաչատրյանը, Առնո Բաբաջանյանը, Զարուհի Դուլուխանյանը, Գոհար Գասպարյանը, Հայաստանի ակադեմիական երգչախումբը՝ նույն Փարիզում կրթություն ստացած մեծատաղանդ Հովհաննես Զեքիջյանի ղեկավարությամբ, Հայաստանի պարի պետական համույթը, Թաթուլ Ալթունյանի ղեկավարած երգի-պարի համույթը և բազմաթիվ այլ կուլեկտիվներ: Ակտիվացել են ազցելությունները նաև Խորհրդային Հայաստան: Փարիզահայ արվեստագետներից շատերն են սկսել հանդես գալ հայաստանյան բեմերում: Երևանում կազմակերպվել են բազում արվեստագետների անհատական ցուցահանդեսները (Գառգու, Ա. Ղետրոսյան, Ռ. Ժերանյան և շատ ուրիշներ):

Նշեցինք, որ բուրժուական հարաբերությունների խստացմամբ Ֆրանսիայում ավելի ու ավելի մեծ տեղ են տրվել կրթության գործի կազմակերպմանը, ինչպես լուսավորությանը, դպրոցներին, այնպես էլ տպագրությանն ու հրատարակչությանը, թերթ-ամսագրերի լույս ընծայմանը: Կրթական և թարգմանական գործի հնագույն ավանդույթների կրող հայ ժողովուրդի զավակներ նման պայմաններում չէին կարող չդրսևորել իրենց կարողությունները:

Նշանավոր է եղել Կ. Ներսիսյանի տպարանը, որը 1900-1910թթ. լույս է ընծայել հայերեն մի շարք գեղարվեստական գրքեր, նաև Ա. Չոպանյանի «Անահիտ» հանդեսը: Անվանի հրապարակախոս, գրաքննադատ, լրագրող և հրատարակիչ Արշակ Չոպանյանը հայկական սփյուռքի կարկառուն դեմքերից է, ժամանակի վրա իր անհատականությամբ ու հայկականությամբ հզոր ներգործություն ունեցած անձնավորություն: Հայ-ֆրանսիական կապերին առնչվող ակնարկն անհնար է ներկայացնել՝ չանդրադառնալով այսպիսի հզոր անհատականությանը:

Հայ իրականության մեջ Արշակ Չոպանյանի գործունեության փարզիայն շրջանը եղել է հայոց կյանքի լուսաբանման ամենաբեղուն շրջանը, ուր Չոպանյանը գրել է տասնյակ հոդվածներ՝ «Ռեվյու Բլանշ», «Ռեվյու դը Ռեվյու», «Մերքյուր դը ֆրանս», «Ռվյու Էնսիք Ուլեդիք», «Քուրիեր երոփեեն», և այլ պարբերականներում: Անվանի մտավորական գործիչը հանդես է եկել բազմաթիվ հրապարակային դասախոսություններով, հրատարակել մատչելի գրքույկներ և ֆրանսատառ մատյի միջոցով Երոպայում տարածել հայ ժողովրդի պատմությունը, հատկապես հայ մշակույթը: Նրան հենց այդպես էլ անվանում էր ֆրանսահայ մամուլը՝ հայ մշակույթի դեսպանը Եվրոպայում:

Փարիզ ժամանելու առաջին օրերից

(1895-ի աշնանից) Չոպանյանը նախաձեռնել է ֆրանսերեն լեզվով «Հայկական ջարդեր» գրքի հրատարակությունը, թարգմանել է իր հետ բերած մի շարք վավերագրեր և բազմաթիվ թարմ նյութեր: Այդ գիրքը՝ «Հայկական ջարդեր»⁵⁹ խորագրով լույս է տեսել 1896-ի ամռանը ֆրանսիացի հայտնի հասարակական, իսկ հետագայում նաև պետական գործիչ ժորժ Կլեմանսոյի առաջաբանով: Մեկ տարի անց, 1897 թվականի մարտի 9-ին, բացելով հայ մշակույթին նվիրված երեկոն, Անատոլի Ֆրանսը անդրադարձել է այդ ժողովածուին հետևյալ խոսքերով. «Պարոն Չոպանյանը 1896 հունիսին Փարիզ հրատարակեց հավաքածու մը Հայաստանեն գրված նամակներու, պարզ ու ահավոր նկարագրություններ, որոնք պարոն ժորժ Բլեմանսոյի մեկ վեհանձն հողվածով հառաջաբանված, զարհուրանքով ու զայրույթով ցնցեցին հասարակությանը զոր իր կառավարությունը և լրագրերուն մեծագույն մասը դեպքերուն գրեթե անտեղյակ պահած էին»⁶⁰:

1897 թվականին Արշակ Չոպանյանի գործուն մասնակցությամբ է կազմվել ֆրանս-հայկական կոմիտե, որի կազմում են եղել Էմնաթ Լավիսը, Ալպեր Վանդալը, Հայր Քարմթանը, պրոֆեսոր Մարիեն, Պիեռ Քիեառը, Դրնի Քոշենը և ուրիշներ: Այս շրջանում Արշակ Չոպանյանի աշխատանքներին Անատոլի Ֆրանսը մոտիկից ծանոթանալով՝ ընդմիջտ մնաց ոչ միայն Արշակ Չոպանյանի, այլ նաև հայ ժողովրդի ջերմ բարեկամը: Եվ հենց այս ամենի արդյունքն էր, որ Անատոլ Ֆրանսը հետագայում գրել է. «Եվ մենք պիտի հաստատենք ու խոստովանենք, որ այս խելացի ու հերոսական ժողովուրդը, որն ընդունակ է հաղորդակից է լինելու արևմտյան աշխարհի բարձրագույն գա-

ղափարներին, իրավունք ունի որքան իր հանճարով, նույնքան և իր դժբախտություններով, արժանի լինելու բոլոր այն ժողովուրդների համակրանքին, որոնցից ծնունդ են առել արդարության ու ազատության գաղափարները»⁶¹: Երբ Ա. Չոպանյանը կնքել էր իր մահկանացուն, ֆրանսահայ թերթերից մեկը խոր կսկիծով գրել էր. «Փակվեց գիտահետազոտական և մշակութային ամբողջ մի ինստիտուտ»:

Փարիզյան հայերեն պարբերականների մի մասն ուներ իր սեփական տպարանը, մի մասն էլ տպագրվում է ֆրանսիական տարբեր տպարաններում: Հայերեն գրքեր հրատարակող ֆրանսիական տպարաններից են եղել նաև Վ. Ռեմբեի, Ս. Բուրդիեի, Շ. Նոբլեի, «Է. Դյունոյի և ընկ.» և այլ տպարաններ:

Հայ երիտասարդության ուսման կազմակերպման և համախմբման հարցում մեծ նշանակություն է ունեցել 1855-ին Փարիզի Գոնել արվարձանում հիմնադրված «Հայկազյան Վարժարանը»: Մինչև 1857 թվականը կոչվել է «Արևելյան բազմալեզու ճեմարան»: Այս կրթական կառույցի հիմնական նպատակն էր հայորդիներին հաղորդակից դարձնել եվրոպական, մասնավորապես ֆրանսիական մշակույթին և միաժամանակ հայ համայնքների համար պատրաստել կրթված մարդիկ, ուսուցիչներ և համայնքային շարժման գործիչներ: 1856-ին վարժարանն ունեցել է 2 դասարան, 1858-ին՝ չորս: Վարժարանում սովորում էին 10-15 տարեկան երեխաներ, ովքեր վարժարանն ավարտելուց հետո պարտավոր էին երեք տարի աշխատել հայկական դպրոցներում: Հայկազյան վարժարանում դասավանդվել են հայոց պատմություն, Հայաստանի աշխարհագրություն, ազգային մատենագիտություն, կրոն,

⁵⁹ Les massacres d' Armenie, prefake de G. Clemenceau, Paris, 1896

⁶⁰ Նոր կյանք, 1898, թիվ 11, էջ 166

⁶¹ Կարլեն Դավաթյան, Արշակ Չոպանյան, Սովետական գրող, 1987, էջ 9

ֆրանսերեն, անգլերեն լեզուներ և գրականություն:

Հայկազյան վարժարանում ուսուցանում էին նաև թուրքերեն, տաճկերեն, լատիներեն, ընդհանուր ու հին գրականություն, հին ազգերի, միջին դարերի ու Նոր պատմություն, աշխարհագրություն, հաշվապահություն, քիմիա, փիլիսոփայություն, գծագրություն, կենդանաբանություն, հանքաբանություն, իրավագիտություն, նկարչություն, երաժշտություն, մարմնամարզություն և այլն: Հայագիտական առարկաներից ու լեզուներից բացի, բոլոր առարկաները դասավանդվում էին ֆրանսերենով: Առարկաների մեծ մասը դասավանդել են դպրոցի հիմնադիրները, 1857-ից նաև Խ. Գալֆայանը (Նար-Պէլ): Կային նաև այլազգի ուսուցիչներ: Վարժարանի վերատեսուչը Ս. Թեոդորյանն էր, պաշտոնական տեսուչը՝ ֆրանսիացի Դյուֆլտրը: 1856-ին վարժարանը տվել է իր առաջին շրջանավարտները, սովորողների թիվը անցել է 60-ից: Հայկազյան վարժարանում սովորել են նաև ֆրանսիացիներ: Վարժարանը փակվել է 1859-ին՝ միջոցների սղության պատճառով:

Հայկազյան վարժարանի սաներից են եղել Ս. Պալասանյանը, Պ. Քերստեթյա-

նը, Հ. Գալստյանը, Ս. Դրանխուլյանը, Հ. Բյզյանը և ուրիշներ:

Ամփոփենք:

Հայաստան-Արցախ-Սփյուռք եռամիասնության շարքում գաղթօջախների դերն անշուշտ ոչ պակաս կարևոր է: Դրանք կարևորվում են առաջին հերթին հայապահպանության և նաև՝ տվյալ երկրների հետ Հայաստանի հանրապետության կապերի ամրապնդման տեսակետից: Որպես հայ իրականության անբաժանելի մաս և ՀՀ միջազգային հեղինակության բարձրացման խնդրում կարևոր գործոն ֆրանսահայ գաղութը նկատելի դերակատարություն է ստանձնել հայ-ֆրանսիական հարաբերությունների ողջ սպեկտրում: Մա ևս կարևորում է ներկայացվող թեմայի հրատապությունը և հետագա ուսումնասիրությունների խորացման անհրաժեշտությունը: Ներկայացված նյութն ընդհանրացնելով կարող ենք ասել, որ հայ-ֆրանսիական կապերի ջերմությունն ու երկու ժողովուրդների փոխադարձ համակրանքը ունեն պատմական հիմքեր, ելնում են ինչպես արժեքային նույնական կողմնորոշումներից, այնպես էլ աշխարհաքաղաքական իրողություններից:

ՀԱՅ-ՖՐԱՆՍԻԱԿԱՆ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆԻՑ

ՍԱՄՍՈՆ ՄԱՆԹԱՇԻ ՔԱՌՅԱՆ

Պատմական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր

ԱՍՓՈՓՈՒՄ

Հոդվածում վերլուծված են վաղ միջնադարից սկսած հայ-ֆրանսիական առնչությունների կարևոր ուղղությունները: Անդրադարձ կա առավել հիշարժան տարեթվերին, մշակութային ու քաղաքական գործիչներին: Թեման կարևորվում է երկու պետությունների՝ Ֆրանսիայի և Հայաստանի միջև բարեկամական հարաբերությունների հետագա խորացման, համագործակցության նոր եզրեր վեր հանելու, մասնավորապես ֆրանկոֆոնիայի շրջանակներում մշակութային և գիտական համատեղ ծրագրեր կյանքի կոչելու տեսանկյունից:

Բանալի բառեր. հայ-ֆրանսիական առնչություններ, մշակույթ, միջէթնիկական փոխհարաբերություններ, ֆրանկոֆոնիա, պատմություն:

**ИЗ ИСТОРИИ АРМЯНО-
ФРАНЦУЗСКИХ ОТНОШЕНИЙ****САМСОН МАНТАШОВИЧ КАРЯН***Доктор исторических наук, профессор***FROM THE HISTORY OF ARMENIAN-
FRENCH RELATIONS****SAMSON MANTASH QARYAN***Doctor of historical sciences, Professor***РЕЗЮМЕ**

В статье анализированы важные направления армяно-французских отношений начиная со времен раннего средневековья. Автор обращает свое внимание на наиболее значимые даты, а так же на наследии культурных и политических деятелей в исследуемый период. Тема актуальна и имеет важность в ракурсе процесса укрепления и дальнейшего углубления взаимоотношений двух дружественных народов и государств – Франции и Армении, а так же с целью найти новые края для сотрудничества, в рамках, в частности, франкофонии, воззвать к жизни культурные и научные совместные программы.

Ключевые слова: *Армяно-французские связи, культура, взаимоотношения этносов, франкофония, история.*

SUMMARY

The article analyzes important areas of the Armenian-French relations since the early Middle Ages. The author in details refers the most memorable dates, cultural and political figures.

He gives importance to the topic from the point of view of developing good relationships between the two countries - France and Armenia as well as finding new edges for cooperation. In particular, the author shows an opportunity of Francophone to develop and implement cultural and scientific joint projects.

Key words: *Armenian-French ties, culture, ethnic relations, Francophone, history.*

ՀԵՐՔԻՑԻԴՆԵՐԻ ԱՆՎՏԱՆԳ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ԷԿՈԼՈԳԻԱԿԱՆ ԳՆԱՀԱՏՈՒՄԸ

Հերքիցիդները⁶² պեստիցիդների⁶³ խմբի քիմիական պրեպարատներ են: Այդ շարքի քիմիական միացությունների երկարատև և ոչ խելամիտ օգտագործումը լուրջ վնաս հասցրեց մարդու առողջությանը, ինչպես նաև ողջ էկոհամակարգերին ամբողջ աշխարհում: Քանի որ յուրաքանչյուր մարդու առողջությունը 25-30 %-ով կախված է բնական շրջակա միջավայրի վիճակից և կիրառվող պեստիցիդներից ու հերքիցիդներից, անհետաձգելի խնդիր է բարձրացվել բարձրացնել բնակչության իրազեկվածությունը, ավելի լայն հնարավորություններ ստեղծել անվտանգ սննդի արտադրությանը մասնակից սուբյեկտների համար՝ դիտելով թեման որպես անվտանգության կոնցեպցիայի կարևոր բաղադրատարր:

Պատահական չէ, որ ՀՀ նոր Սահմանադրության 12-րդ հոդվածը որպես պետության կարևոր պատահականություն սահմանում է, որ «Պետությունը խթանում է շրջակա միջավայրի պահպանությունը, բարելավումը և վերականգնումը, բնական պաշարների ողջամիտ օգտագործումը՝ ղեկավարվելով կայուն զարգացման սկզբունքով և հաշվի առնելով պատասխանատվությունն ապագա սերունդների առջև»: Այս առումով սննդի անվտանգությունը, ներառելով պեստիցիդների և ցանքատարածու-

թյուններն աղբոսող հակամիջոցների կիրառումը, մեր օրերում և հեռանկարում կարևոր նշանակություն է ստանում: Բերքատվության բարձրացմանն ուղղված միջոցների, անվտանգ և առողջությանը չվնասող նյութերի կիրառման գիտական նորմերի մշակմանը գուցահեռ ոչ պակաս կարևոր են մոլախոտերի դեմ պայքարի անվտանգ հակամիջոցների, հերքիցիդների ճիշտ օգտագործման չափաքանակների նորմավորումը, կիրառման համար նախատեսված նյութերի ընտրությունը: Իսկ սա նաև համապատասխան և հավաստի տեղեկատվության ապահովման, գիտականորեն հիմնավորված երաշխավորությունների տրամադրման խնդիր է:

Հայաստանի Հանրապետությունը ՄԱԿ-ի անդամ 16-դ երկիրն է, որ միացել է (2001թ.-ին) 1998թ.-ին ստորագրված «Շրջակա միջավայրի հարցերի առնչությամբ տեղեկատվության մատչելիության, որոշումներ ընդունելու գործընթացին հասարակայնության մասնակցության և արդարադատության մատչելիության մասին» Օրհուսի Կոնվենցիային: Շատ կարևոր է, որ ՀՀ բնապահպանության նախարարությունը, Մննդի անվտանգության պետական ծառայությունը՝ Կոնվենցիայի դրույթների իրացման հետ կապված նախա-

⁶² Ծանոթություն. *հերքիցիդ* – լատիներեն herba-խոտ և cuedo-ոչնչացնել բառերից, քիմիական պրեպարատներ, որոնք մտնում են պեստիցիդների խմբի մեջ, ներառում են արբորիցիդներ և ալգիցիդներ, ընտրությամբ օգտագործվում են մյուս, ոչ ցանկալի մոլախոտերի ոչնչացման համար:

⁶³ Պեստիցիդ – լատիներեն՝ վարակ և սպանել (cuedo) բառերից, բառացի նշանակում է վարակասպան, աղբոսման դեմ պայքարող:

տեսում են ակտիվ համագործակցություն միջազգային տարածաշրջանային բնապահպանական կազմակերպությունների հետ: Համագործակցության մեծ պոտենցիալ գոյություն ունի տարածաշրջանային բնապահպանական կենտրոնների, Հայաստանի ազգային ագրարային համալսարանի (ՀԱԱՀ) և Եվրամիության անդամ երկրների մի շարք բուհերի, ինչպես նաև Եվրասիական տնտեսական միության անդամ պետությունների միջև: Դա նոր հնարավորություններ է ստեղծում բնապահպանական և մարդու առողջությանը չվնասող գյուղատնտեսական գործունեությունը արդյունավետ հիմքերի վրա փոխադրելու համար:

Սույն հոդվածով անդրադարձ կատարելով հերբիցիդների անվտանգ օգտագործման էկոլոգիական գնահատումներին, ելնում ենք Օրհուսի վերը նշված Կոնվենցիայի պահանջներից:

Բարձր բերքատվության ապահովման համար մեր հանրապետությունում կենսագործվում է պայքարի միջոցառումների պետական համակարգ: Ժամանակակից առավել արդյունավետ պայքարի միջոցը պեստիցիդների օգտագործման զուգակցումն է ագրոտեխնիկական և տնտեսական կազմակերպչական ձևերի հետ, որոնց նշանակությունը ևս անհերքելի է:

Հողի մշակման համակարգերը (հիմնական, նախացանքային, բույսերի աճի վեգետացիայի ընթացքում խնամքի) էապես ազդում են ֆիտոպարոզենների, ֆիտոֆագերի և մոլախոտային բուսականության քանակության և վնասակարության դրսևորման մակարդակի վրա: Մակայն անհերքելի է նաև, որ դրանց ազդեցությունը նվազագույնի չեն հասցնում: Վնասակար օրգանիզմների վրա ներգործումը կարճատև է: Հետևաբար և մարդիկ փնտրում են առավել արդյունավետ և անվտանգ միջոցներ ու եղանակներ:

Վնասակար օրգանիզմների տարածվածության ներկա մակարդակի պատճառները, ոչ միայն առավել արդյունավետ պայքարի եղանակների բացակայությունն է, այլև դարեր շարունակ երկրագործության համակարգերի իրականացման ընթացքում դաշտերի ֆիտոսանիտարիայի սկզբունքները անտեսելը: Երկրագործության համակարգերի ամբողջ պատմության ընթացքում՝ խոպանային, խամային, կրակային, ցելային, խոտադաշտային և նույնիսկ ժամանակակից համակարգերի (հողապաշտպան, ադապտալանդաֆտային, ճշգրիտ, ինքնավերականգնման, և նույնիսկ օրգանական) դրանց իրականացման ընթացքում հաշվի չեն առնվել և այժմ էլ հաշվի չի առնվում ֆիտոսանիտարիայի վիճակը, հենց այդ պատճառով էլ տեղի է ունեցել վնասակար օրգանիզմների մասսայական զարգացումը, որին էլ հետևել է պեստիցիդների լայնածավալ օգտագործումը: Դեռ ավելին՝ բնակչության շրջանում ոչ սակավ դեպքերում այդ ամենի հետևանքով կարող են առաջանալ առողջապահական խնդիրներ:

Գյուղատնտեսական մշակաբույսերի դաշտերում պեստիցիդներով գերծանրաբեռնումն (ինսեկտիցիդ, ֆունդիցիդ, հերբիցիդ և այլն) ու հաճախ արտադրական պայմաններում դրանց ժամանակին և ոչ նպատակային օգտագործումն առաջ է բերել էկոլոգիական խախտումներ, վնասակար օրգանիզմների դիմացկուն տեսակների, էկոտիպերի ու մորֆոլոգիական ձևերի առաջացում:

Վնասակար օրգանիզմների՝ վնասակար միջատների, մոլախոտերի և հիվանդությունների ներկա տարածվածության մակարդակը և վնասակարության բնույթը ստիպում է մշակել և կիրառել պայքարի ինտեգրացված եղանակ՝ այսինքն քիմիական, ագրոտեխնիկական և տվյալ տնտեսության

պայմաններում պայքարի այլ հնարավոր, գիտական չափորոշիչներով փորձարկված և հիմնավորված միջոցների կիրառում, որը վնասակար օրգանների քանակը կհասցնի նվազագույնի: Նշված խնդիրները հաջողությամբ կատարելու համար անհրաժեշտ է կարողանալ ժամանակին հայտնաբերել մոլախոտերը, ճանաչել, լավ իմանալ նրանց կյանքի առանձնահատկությունները և կարողանալ որոշել նրանց դեմ պայքարելու լավագույն ժամկետները ու միջոցները: Դաշտերի մոլախոտավածության արդի վիճակը, վնասակարության բազմաբնույթ դրսևորումները, պահանջում են նորովի մոտեցումներ և լուծումներ:

Հերբիցիդների կիրառման տեխնոլոգիան ոչ միայն պետք է ունենա բարձր կենսաբանական և տնտեսական արդյունավետություն, այլև լինի անվտանգ շրջակա միջավայրի համար ու հիգիենիկ սպասարկողների նկատմամբ: Հանրապետությունում բոլոր ագրոքիմիկատների օգտագործումը կարգավորված է ՀՀ կառավարության 1998թ. «Պեստիցիդների և ագրոքիմիկատների օգտագործման անվտանգության մասին» որոշմամբ:

Քանի որ հերբիցիդների կիրառումը բարդ ագրոտեխնիկական միջոցառում է, այն պահանջում է աշխատանքի ճիշտ կազմակերպում նեղ մասնագետի մասնակցությամբ:

Մեր պայմաններում այժմ պեստիցիդների անվտանգ օգտագործումը դարձել է առավել հրատապ: Դա պայմանավորված է նրանով, որ մեկ հավարելահողերի նկատմամբ պեստիցիդների օգտագործումը կիրառվում է ոչ հավասարապես. կան դաշտեր, որտեղ բոլորովին ոչ մի պատրաստուկ չի օգտագործվում և ընդհակառակը, կան շատ գերբեռնված դաշտեր հերբիցիդներով, ինսեկտիցիդներով և ֆոնգիցիդներով ու հատկապես պարարտանյու-

թերով:

Ըստ բույսերի վրա ազդման բնույթի՝ հերբիցիդները բաժանվում են երկու խմբի.

1. Համատարած ազդեցության հերբիցիդներ, որոնք ոչնչացնում են և մոլախոտերը, և մշակակաբույսերը: Այս կարգի հերբիցիդը պետք է օգտագործել չմշակվող հողերում, խոպաններում և ցելերում: Նման կարգի են դասվում անօրգանական բոլոր հերբիցիդները: Իսկ օրգանականների մեջ մտնում են ռաունդապր, ուրագան ֆոքտեն, ռեզլոնը և այլն:
2. Սելեկտիվ (ընտրական) ազդեցությամբ հերբիցիդներ, օգտագործվում են քիմիական քաղհանի նպատակով: Չազդելով մշակաբույսերի վրա, դրանք ոչնչացնում են որոշակի խմբի մոլախոտերի:

Մեզ մոտ էկոլոգիական հիմնախնդիր է լավագույն սրսկիչների օգտագործումը: Փաստորեն չկան համապատասխան տեխնիկա հատկապես 4-րդ սերնդի հերբիցիդների (10-20գ/հա) օգտագործման համար: Նշված ցածր չափաքանակը շատ դժվար է բաշխել մեկ հա. մակերեսի վրա:

Արտադրության մեջ կիրառվող հերբիցիդները պետք է բավարարեն հետևյալ պահանջները.

1. Մոլախոտերի նկատմամբ ունենան մեծ թունոնակություն,
2. Չվնասեն մշակաբույսերը,
3. Բացասաբար չազդեն շրջակա միջավայրի վրա,
4. Ունենան բարձր կայունություն միջավայրի այլ ազդակների համեմատ,
5. Ազդող սկզբնանյութը պետք է լինի կայուն և չքայքայվի պահեստային պահպանման ընթացքում:

Բարենպաստ էկոլոգիական պայմանները պահպանելու համար, անհրաժեշտ է այսպիսի պեստիցիդի

օգտագործման ժամանակ հարկ է հաշվի առնել միավոր տարածքի վրա օգտագործման ծանրաբեռնվածությունը, օգտագործման ժամկետը ճիշտ պահպանել, հաշվի առնելով հողակլիմայական պայմանները: Այդ նպատակով առաջարկվում է առաջնորդվել ստորև բերված պետիցիդների էկոլոգաթունաբանական վտանգավորության սանդղակով:

Մոլախոտերի դեմ պայքարի նպատակով հերբիցիդը պետք է օգտագործել սահմանված ժամկետում, քիչ միջոցների ու աշխատանքի կիրառմամբ: Դրանց թունունակությունը կախված է մոլախոտերի ներսը թափանցման աստիճանով: Ապացուցված է, որ մոլախոտի վրա ներգործությունն արդյունավետ է դրանց ավելի վաղ աճմի և զարգացման շրջանում: Ուշացնելով սրսկումները հերբիցիդի արդյունավետությունը նվազելու է: Մշակաբույսերը և մոլախոտերը պետք է գտնվեն ակտիվ աճի և զարգացման փուլերում: Խոնավության բավարար պայմաններում մոլախոտերը ազդվում են հերբիցիդից ավելի լավ և մշակաբույսը աճում է արագորեն:

Հերբիցիդի հատկապես թունունակության վրա ազդում է ջերմաստիճանը և օդի հարաբերական խոնավությունը: +15°-ից ցածր ջերմաստիճանի դեպքում նյութափոխանակությունը դժվարա-

նում է: Հատկապես թունունակությունը մեծանում է 22-26°C պայմաններում: Առավել բարձր ջերմաստիճանի դեպքում, հերբիցիդի արդյունավետությունը խիստ ցածրանում է, քանի որ կաթիլն արագորեն գոլորշիանում է մոլախոտերի մակերեսից: Նույն պատկերն է նաև օդի ցածր խոնավության դեպքում:

Շատ կարևոր է աշխատանքային հեղուկի քանակը⁶⁴ և նրա հավասարապես բաշխումը սրսկվող տարածության վրա: Անցանկալի է ինչպես շատ քիչ քանակի, այնպես էլ շատ մեծ քանակի ջրի օգտագործումը: Մեկ դեպքում պատրաստուկի ազդող նյութը միավոր տարածության վրա չի ապահովում, մյուս դեպքում էլ ավելցուկը հեղուկի սրսկումից հետո հեռանում է մոլախոտերի մակերեսից: Հերբիցիդները բոլոր ցանքերում հիմնականում օգտագործվում են ցողման եղանակով: Ցողվող հերբիցիդները կարող են լքել էմիուլսիայի, սուսպենզիայի, կոլլոիդ լուծույթների տեսքերով և այլն: Ցողումը հասկացվում է հերբիցիդային նյութի՝ բույսի կամ հողի վրա ջրակաթիլային ձևով գետեղումը, իրականացվում է հատուկ մեքենաների կամ սարքերի միջոցով: Հերբիցիդի թունունակությունից և կործանիչ չափաքանակից կախված է մոլախոտի ոչնչացման աստիճանը:

⁶⁴ Պատրաստուկի դոզավորված և կիրառման պատրաստ չափաքանակ, - խմբ.

Պեստիցիդների էկոլոգա-թունաբանական վտանգավորության սանդղակը
(ըստ Գ.Բ. Բազդրևի⁶⁵, 2004թ.)

Էկոլոգա-թունաբանական և հիգիենիկ ցուցանիշները	Վտնորոշում -միավորը	Վնասակարության դասի պարամետրերը	Միասույուող Գ (m)
Պահպանումը հողում	1	Մինչև 1 ամիս	2
	2	1 -6 ամիս	4
	3	0,5-2 տարի	6
	4	2 տարուց բարձր	8
Ազդեցությունը հողի ֆերտիլիտետի ընթացքի և բիոտի վրա	1	Չի ազդում	0
	2	Ազդում է եզակի պրոցեսի և	1
	3	պոպուլացիայի վրա	2
Տեղաշարժը ըստ հողի կտրվածքի	1	Չի տեղաշարժվում	0
	2	տեղաշարժվում է մինչև 15 սմ	1
	3	տեղաշարժվում է 15-50 սմ	2
	4	տեղաշարժվում է 50 սմ ավելի	3
Տեղաշարժը Մշակաբույսերում	1	Չի թափանցում բույսի ներսը	0
	2	Թափանցում է բույսի ներսը,	1
	3	Բայց բացասաբար չի ազդում	2
	4	Կուտակվում է բերքի մեջ, Թափանցելով բույսի մեջ, առաջացնում է թունավորում	3

Աղյուսակի շարունակությունը

Արևահարության ներգործումը	1	Ենթարկվում է լուսաքիմիական քայքայման	0
	2	Չի ենթարկվում քայքայման	1
Բուսաբանական մթերքի նկատմամբ նվազագույն թույլատրելի մակարդուկը (ՄԸՄ)	1	>1 մգ/կգ	0
	2	1-0,1 մգ/կգ	1
	3	<0,1 -00,1 մգ/կգ	2
	4	<0,01 - մգ/կգ	3
	5	0 (չի թույլատրվում մթերքում)	4

⁶⁵ Баздырев Г. И. “Защита сельскохозяйственных культур от сорных растений”, М. 2004г.

ՈՒԿ ջրամբարի ջրում	1	> 1 մգ/լ	0
	2	1 - 0,1 մգ/լ	2
	2	<0,1-00,1 մգ/լ	2
	3	<0,01 -մգ/լ	3
	4	0 (չի թույլատրվում ջրամբարի ջրում)	4
Խտության շեմը (սահմանը) խմելու ջրում	1	> 1 մգ/լ	0
	2	<0,1-00,1 մգ/լ	1
	3	<0,01 - 0,001 մգ/լ	2
Ազդեցությունը բուսաբուծական մթերքի օրգանոլեպտիկ ցուցանիշների վրա	1	Չի վատացնում	0
	2	Վատացնում է	1
Ցնդողունակությունը	1	Չցնդող նյութեր	0
	2	Հազեցված խտությունը ցածր է նախատեսված շեմից	
	3	Հազեցված խտությունը հավասար է շեմին	
	4	Հազեցված խտությունը բարձր է շեմից	
Տաքարյունների նկատմամբ թունոնակությունը (ՄԴ50)	1	> 1000 մգ/կգ	1
	2	> 200- 1000 մգ/կգ	2
	3	> 50 - 200 մգ/կգ	3
		< 50մգ/կգ	
Տաքարյունների օրգանիզմում կուտակման ինդեքսը	1	>5	0
	2	>3-5	1
	3	>1-3	2
	4	<1	3

Աշխատանքային հեղուկի ծախսման չափաքանակը հատկապես ճիշտ պետք է սահմանել, երբ իրականացվում է ինտենսիվ մշակության տեխնոլոգիա, այսինքն, երբ միաժամանակ կիրառվում են հերբիցիդ, ինսեկտիցիդ և աճման խթանիչներ:

Աշխատանքային հեղուկի ծախսի (ջճ) չափաքանակը (լ/հա) միավոր ժամանակի համար որոշելիս կարելի է կիրառել հետևյալ բանաձևը.

$$\Omega_{\Sigma} = (U \cdot L \cdot Q) / (60 \cdot 10)$$

որտեղ՝ U-ն սրակիչի աշխատանքային արագություն է (կմ/ժ): L-ն՝ մեքենայի ընդգրկման լայնքն է (մ), ջ-ն՝ պահանջվող ջրի քանակն է (լ/հա): Տրակտորի արագությունը 5կմ/ժ, ընդգծուն շարքը 10 մ, հեղուկի ծախսը 500լ/հա, ջրի ծախսը կկազմի՝

$$\Omega_{\Sigma} = (5 \cdot 10 \cdot 500) / (60 \cdot 10) = 41.5 \text{ ր}$$

Հերբիցիդի չափաքանակը 1 հա. համար կարող է տրվել ըստ ազդող նյութի կամ ըստ պատրաստուկի:

Եթե տրվում է ըստ ազդող նյութի, ապա 1 հա. համար պետք է հաշվարկել հետևյալ բանաձևով.

$$\text{Ծ} = \text{Ա} \cdot 100/\text{պ}$$

որտեղ՝ Ծ - հերբիցիդի չափաքանակն է (կգ/հա)

Ա - ազդող նյութն է, որը պետք է կիրառել - կգ/հա

պ - պատրաստուկում ազդող նյութի քանակն է, %

օրինակ - 2,4 - Դ Ա աղը պահանջում է ... 0,8 կգ/հա, ըստ ազդող նյութի, իսկ հերբիցիդի անձնագրում գրված է, որ պատրաստուկում 50% է:

$$\text{Ծ} = 0,8 \cdot 100/50 = 1,6 \text{ կգ/հա}$$

Ուրեմն 2,4 - Դ աղը 1 հա. համար պետք է վերցնել 1,6 կգ: Ուրեմն, եթե սրակիչի բաքը 1500 լիտր է, եթե կարելի է սրակել 3 հա տարածք: Դրա համար 1500 լ ջրում պետք է լուծել 4,8 կգ նատրիումական աղ և սրակել 3 հա վրա:

Նկատի ունենալով մշակաբույսի ցանքի ձևերը, հերբիցիդների օգտագործումը կարող է լինել.

1. **Համատարած սրակում:** Հատկապես կիրառվում են հացահատիկի և եգիպտացորենի ցանքերում: Սրակվում են բոլոր բույսերը:
2. **Ժապավենաձև սրակում:** Կիրառվում են շարահերկմշակաբույսի դաշտում: Սրակում է միայն ժապավենաձև մշակաբույսի շարքերը, իսկ միջշարային տարածքները մշակվում են մեքենաներով:
3. **Օջախային սրակում:** Սրակվում է օջախներով, տեղ-տեղ, որտեղ օջախներով աճել է տվյալ մոլախոտը: Այն կատարվում է հատկապես կարանտին մոլախոտերի և գաղձի դեմ:

Համատարած սրակում են ոչ միայն բույսերի վերգետնյա մասերը սրակվող-հերբիցիդով, այլև հողային ազդեցության հերբիցիդով, սրակվում է հողի մակերեսը ցանքից առաջ կամ ցանքից հետո՝ ծլումից առաջ:

Տնող հերբիցիդը սրակումից անմիջապես հետո պետք է խառնել հողին:

Հերբիցիդների սրակումը կարելի է կատարել ոչ միայն ձեռքի Ա տրակտորային սրակիչով, այլև անձրևացնող (ДМ-фрегат, Кyбaн) մեքենաների օգնությամբ:

Մեր կողմից եկոլոգիապես անվնաս չափաքանակները և կիրառման առաջարկող եղանակները գործածելի պիտի համարել հանրապետության բոլոր ցանքատարածությունների համար:

ՀԵՐԲԻՑԻԴՆԵՐԻ ԱՆՎՏԱՆԳ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ԷԿՈԼՈԳԻԱԿԱՆ ԳՆԱՀԱՏՈՒՄԸ

ԱՐԿԱԴԻ ԳԵՎՈՐԳԻ ԱՀԱՐՈՆՅԱՆ
Գյուղատնտեսական գիտությունների դոկտոր
ԱԼԵՔՍԱՆԴԻ ԽԱՀԱՏՈՒՐԻ ՀԱԿՈՒԹՅԱՆ
Գյուղատնտեսական գիտությունների դոկտոր

ԱՄՓՈՓՈՒՄ

Հողվածում կարևորվում է հերբիցիդների կիրառման նորմավորումն ու հսկողության ապահովումը՝ որպես բերքատվության բարձրացմանն ուղղված և մարդու առողջության համար անվտանգ դարձնելու բնագավառ: Ռուս գիտնական Գ. Ի Բազդրևի կազմած աղյուսակի հիման վրա տրված են հերբիցիդների ինչպես էկոլոգաթունաբանական և հիգիենիկ ցուցանիշները, այնպես էլ վնասակարության դասի պարամետրերը, որոնք բխում են սննդի էկոլոգիայից մաքրության և անվտանգության վերաբերյալ Օրհուսի 1998թ. համաձայնագրի պահանջներից:

Բանալի բառեր. *Օրհուսի համաձայնագիր, բնապահպանություն, սննդի անվտանգություն, մարդկային առողջություն, հերբիցիդներ, մոլախոտեր:*

ЭКОЛОГИЧЕСКАЯ ОЦЕНКА БЕЗОПАСНОГО ИСПОЛЬЗОВАНИЯ ГЕРБИЦИДОВ

АГАРОНЯН АРКАДИЙ ГЕВОРГОВИЧ

Доктор сельскохозяйственных наук

АКОПЯН АЛЕКСАНДР ХАЧАТУРОВИЧ

Доктор сельскохозяйственных наук

ECOLOGICAL ASSESSMENT OF HERBICIDE SAFETY USE

ARKADI GEVORG AHARONYAN

Doctor of Agricultural Sciences

ALEXANDER KHACHATOUR AKOPYAN

Doctor of Agricultural Sciences

РЕЗЮМЕ

В статье рассматривается важность обеспечения контроля и нормирования применения гербицидов как для повышения производительности сельхоз продукции, так и цель обеспечения безопасности здоровья человека. На основе таблицы российского ученого Г.И. Баздрева показаны не только эколого-токсикологические и гигиенические показатели гербицидов, но и параметры класса вредоносности, в соответствии с требованием Орхусской конвенции (1998 г.) об экологической чистоте и безопасности пищевых продуктов. Назначены примерные режимы использования гербицид-пестицидов и формулы для определения их количеств применения.

Ключевые слова: *Орхусская конвенция, сорняки, экология, гербициды, безопасность пищи, человеческое здоровье.*

SUMMARY

The article highlights the ensuring of control and rationing of herbicides use as a sphere to increase productivity and to secure human health.

Based on the table of Russian scientist G.I. Bazdrev, the eco-toxicological and hygienic characteristics of herbicides, the parameters of their class harmfulness, arising from the provisions of the 1998 Aarhus Convention on environmental cleanliness and food safety are shown.

Key words: *Aarhus Convention, ecology, food safety, human health, herbicides.*

ԹՈՒՐՔԱԿԱՆ ԾԱՎԱԼԱՊԱՇՏՈՒԹՅԱՆ ԵՎ ԷԹՆԻԿ ԶՏՈՒՄՆԵՐԻ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՏՆԵՐԸ, ՎՏԱՆԳԸ ԵՎ ԱՐԴԻ ԸՄԲՈՆՈՒՄՆԵՐԸ

2016թ. ապրիլին ԼՂՀ դեմ Ադրբեջանի ձեռնարկած ագրեսիան, Միբիայում և նրա շուրջ ծավալվող իրադարձությունները, Հալեպի, ինչպես և Կիլիկյան Հայաստանից մնացած վերջին հայկական բնակավայրի՝ Քեսաբի դեպքերը, ոչ միայն քաղաքագետների, այլև պատմաբանների ուշադրության կիզակետ կրկին դարձրել են Թուրքիայի և Ադրբեջանի վարած ներքին և արտաքին քաղաքականության մի շարք ասպեկտներ՝ կապված այդ պետությունների պատմության, նրանց կողմից մի շարք ժողովուրդների դեմ ոթված հանցագործությունների, այդ ժողովուրդների բռնի թուրքացման, տեղահանության, ջարդերի ու գեոցիդի ահասարսուռ փաստերի, բազմադարյան մշակույթ և պատմություն ունեցող էթնոսների տարածքների յուրացման և ծավալապաշտության դրսևորման այլ հիմնահարցերի հետ:

Թեև նշված հարցերի առնչությամբ հրապարակի վրա առկա է ընդարձակ գրականություն, սակայն թեման դեռևս չի սպառված: Եվ դա ոչ միայն այն պատճառով, որ Թուրքիան ու Ադրբեջանը չեն հրաժարվել ծավալապաշտությունից, չեն դադարել դեռևս գեոցիդային պետություններ լինելուց, այլև այն առումով, որ պակասում են և ծավալապաշտությունը որպես թուրքական քաղաքականության բաղկացուցիչ երևույթ դիտարկվող ուսումնասիրությունները:

Հայերս ավելի քան մեկ հազարամյակ գտնվելով թուրքական ծավալապաշտության դեմ դիմակայության մեջ, շատ

լավ ենք հասկանում այդ հանցագործության ողջ ծանրությունն ու այն կանխելու անհրաժեշտությունը՝ որպես միջազգային հանրության խնդիր:

Հարկավոր է նկատի ունենալ, որ էթնիկ մաքրագարումները ունեցել և ունեն ամենատարբեր ձևեր՝ զանգվածային ջարդերից ու հարկադրական վերաբնակեցումներից սկսած մինչև իսպառ բնաջնջման՝ ցեղասպանության հրեշավոր փորձեր: Մակայն դրանք առավել վտանգավոր և հակահումանիստական են, երբ կանխավ ծրագրվում և իրականացվում են քաղաքական ակնհայտ շարժառիթներով, ուղեկցվելով բռնությունների առավել ծայրահեղ և մոլազար դրսևորումներով:

1990-ական թվականներին նախկին Հարավսլավիայի լրատվամիջոցները հենց էթնիկ գտումների եզրն են օգտագործել՝ որակելով վերը նշված հանցագործությունների այն դրսևորումները, որ տեղ էին գտնում սլավոնական այդ երկրում: Ընդգծենք ուղղակի, որ բոլոր այդ հանցագործությունները բառիս բուն իմաստով պատճենել են թուրքական ծավալապաշտությանը ներհատուկ ելույթների զինանոցը:

Ք.Հ. 2-րդ հազարամյակից սկսած իրադրությունն Առաջավոր Ասիայում կտրուկ փոխվել է՝ կապված հենց Չինաստանի հյուսիսային սահմաններում ավարառությամբ զբաղված թյուրքական մի շարք ցեղերի դեպի արևմուտք ներխուժումների հետ: 11-րդ դարի առաջին կեսին սելջուկ թուրքերը գրավում են Իրանն ու Միջագետքը՝ Բաղդադ կենտրոնով, տեղ դառնում

նան Հայաստանին: Բյուզանդական կայսրության հետ տևական հակամարտությունից թուլացած և ավատատիրությանը բնորոշ մասնատվածությունից տառապող Բագրատունյաց Հայաստանը, բացառությամբ առանձին դեպքերի, լուրջ դիմադրություն չի կարողացել ցույց տալ:

Նույն դարի վերջին թուրք օղուզները հիմնել են նաև Իկոնիայի կամ Ռումի սուլթանությունը, գրավել Հալեպն ու Եդեսիան:

Հաջորդ երկու հարյուրամյակում արդեն հսկայածավալ տարածաշրջանում ազդեցիկ ուժ են դառնում Հարավային Միջրի տափաստաններից եկած մոնղոլ-թաթարական ցեղերը: 13-րդ դարի 30-ական թվականներին Չինգիզ խանի հետնորդները գրավում են Ռուսիան և Հյուսիս-Արևելյան Հայաստանը, 1242-43-ին՝ ողջ Հայքը: Մոնղոլ Հուլաուի ստեղծած մոնղոլապարսկական պետության կենտրոնը սկզբում Մարաղան, ապա՝ Թավրիզն էր: Տերության կազմում էին Պարսկաստանը, Ասորպատականը Հայաստանը, Վրաստանը, Ռումը և Իրաքը:

Մոնղոլների ճնշման տակ Միջին Ասիայից և Իրանից թուրքական նորանոր զանգվածներ են թափանցում Փոքր Ասիա և Հայկական բարձրավանդակ, առաջանում են Կարա-Կոյանլու և Ակ-Կոյանլու ցեղային ուժեղ միությունները, որոնք հիմքում ունենալով լեզվական և կրոնական պարտադրանքը լուրջ դեր խաղացին Իրանի Արևմուտքում և Հայաստանում թուրքական տարրի ամրապնդման, բնակչության որոշ հատվածների թուրքացնելու գործում:

Փոքր Ասիայի, Հարավային Կովկասի, Արևմտյան Իրանի թուրքացումը հետագայում ավելի մասշտաբային է դառնում՝ ընդգրկելով նպատակին հասնելու բազմազան գործիքակազմ՝ ընդհուպ մինչև ցեղասպանության իրականացում: Բնակչություն հաստատելով

նշված տարածքներում և դրանք հիմնականում ներառելով իրենց ռազմաքաղաքական ազդեցության ոլորտ, թուրքական ցեղամիավորումները, դրանց հիման վրա ստեղծված պետությունները ձեռնամուխ են եղել առաջին հերթին այնպիսի կառույցների ստեղծման, որոնք կամրապնդեին նրանց ներկայությունը ավտոխթոն ժողովուրդների հողերում և պայմաններ կստեղծեին դրանց թուրքացման համար: Նման ռազմավարական նշանակության քայլ է դառնում Էմիրությունների՝ որպես կառավարման նոր միավորների ստեղծումը: Այդ քաղաքական ինստիտուտի գործարկումը թեև զալիս է արաբներից, սակայն ռեալ ուժ է դառնում թուրքերի ձեռքում: Հայաստանում ստեղծվել են սելջուկթուրքական-քրդական ծագման Շեղադյան Էմիրությունը՝ Դվին, Անի կենտրոններով, Գանձակի Էմիրությունը, Շահարմենների Էմիրությունը՝ Մանազկերտ, Խլաթ կենտրոններով, ինչպես և Կարինի և Կարսի Էմիրությունները: Գանձակի կամ Փախլանյան Էմիրությունը Հայաստանի հյուսիս-արևելքում հայկական դեռևս 12-րդ դարում պահպանվող թագավորությունների վտանգավոր թշնամին էր: Առանձին ժամանակահատվածներում այն տարածվել է նաև Արցախի, Սյունիքի հյուսիսային գավառների, Սևանա լճի արևելյան ափերի վրա:

Որպես կարևոր հանգամանք ընդգծենք, որ նշված Էմիրություններում չնայած քաղաքական իշխանությունն օտարների ձեռքին էր՝ հենված սելջուկթուրքերի ռազմական ուժի վրա, սակայն բնակչության հիմնական զանգվածը մնում էր հայկական:

Վրաստանի հզորացումը և Զաքարյանների իշխանապետությունը փոքրինչ շտկեցին իրավիճակը՝ թույլ տալով հայ ժողովրդի մի զգալի հատվածին զերծ մնալ նվաճողների ասիմիլատորական նկրտումներից, սակայն հետա-

զա մոնոլոգական զավթումները, հատկապես 16-17դդ. թուրք-պարսկական պատերազմները լրջորեն թուլացրեցին Հայաստանը, պակասեց բնակչության թիվը, ծայր առավ անկանգ արտագաղթ, ամայացած տարածքներում վերաբնակվել սկսեցին նոր, քոչվոր տարրեր: Ինչպես վկայում է Առաքել Դավրիժեցին, «Այնտեղ, որտեղ ոտք էին դնում թուրք և պարսիկ զավթիչները, այդ վայրերը վեր էին անծվում անապատի»⁶⁶: Այս շրջանում է սկսվում արդեն 20-21 դարերում լրջագույն գործոն դարձած քրդերի զանգվածային տեղափոխությունը Հայկական լեռնաշխարհ, հատկապես բռնագաղթերի հետևանքով ամայացած հայոց տարածքներ: Մա կանխամտածված, նենգ ու հեռահար նպատակներ հետապնդող քաղաքականություն էր, որ լրջորեն սկսում է փոխել տարածաշրջանի էթնիկ քարտեզը:

Ստեղծված իրավիճակը դիպուկ բնութագրելով, պատմաբան Մամսոն Քառյանն իր «Նախիջևան» հիմնարար աշխատության մեջ ընդգծել է. «Ռազմական թատերաբեմ Հայաստանը կորցրեց իր վաղեմի տնտեսական, քաղաքական, մշակութային դեմքը և ամայացավ: Միայն փոքր օազիսների նման հայկական հետքեր էին երևում խիստ լեռնային բարձրադիր տարածքներում (Մյունիք, Արցախ, Լոռի, Գեղարքունիք, Զեյթուն, Մասուն), և որ ամենավտանգավորն էր, այս տարածքների միջև ոչ մի կապ և եղածը միավորող ուժ չկար»⁶⁷: Չնայած տիրողների դաժան հալածանքներին ու բռնի մահմեդականացման քաղաքականությանը Հայկական լեռնաշխարհի բնիկներ հայերը շարունակում էին ապրել նաև Տարոնում, Վասպուրականում, Ախալքալաք-Ախալցխալում, Քուռ-արաքսյան միջագետքում: Միանգամայն ճիշտ է այն դիտարկումը, որ էթնիկ առումով հայե-

րի բնօրրանն ավելի խայտաբղետ տեսք էր ստանում, իսկ կրոնական տեսակետից երկփեղկվում երկու բնեռների քրիստոնեական և մահմեդական:

19-րդ դարից սկսած, աստիճանաբար Թուրան հասկացությունը թուրք-թաթարական ժողովուրդների համար սկսում է ստանալ աշխարհակալ ընկալումներ ունեցող հայրենիքի հասկացություն և իմաստ, որը արդեն ձգվում էր Չինաստանի խորքերից, Միջին Ասիայի տափաստաններից մինչև Միջերկրական ծով: Էթնիկ էքսպանսիայի դրսևորման անբաժանելի բաղադրատարր են դառնում էթնիկ գտումներն ու ուծացման-ձուլման քաղաքականությունը:

Կիրառվող մեթոդները հղկվում և պետական քաղաքականության կերպարանք են ստանում 1299-ից հիմնադրված օսմանյան պետությունում: Դրանց շարքում կարելի է առանձնացնել.

ա) 2-5 տարեկան տղաների կտրելը հայրական օջախից (հիմնականում քրիստոնյա ընտանիքներից) և ռազմական դաստիարակության կազմակերպումը ենիչերիական զորանոցներում: Դա բանակը, որը պերմանենտ պատերազմներ էր մղում, համալրելու եղանակ էր, միաժամանակ թուլացնում էր քրիստոնյաների դիմադրությունը,

բ) մահմեդականացում՝ բռնի ճնշումների և տնտեսական լծակների կիրառմամբ. (Մահմեդականություն ընդունած քրիստոնյան մինչև 3/4-ի չափով ազատվում էր հարկերից),

գ) ազգամիջյան կոնֆլիկտների հրահրումը և մահմեդականներին բացահայտ հովանավորելը:

դ) դատական համակարգի կենտրոնացումը մահմեդական հոգևորականների ձեռքում և քրիստոնյաների նկատմամբ խտրական վերաբերմունքը,

⁶⁶ Առաքել Դավրիժեցի «Պատմություն», էջ 53

⁶⁷ Ս. Քառյան «Նախիջևան. Դարերի խորքից մինչև մեր օրերը», Ե. 2011, էջ 130

(վերջիններին ըստ էության օրենքից դուրս դնելը և դատական գործերում հիմնականում շարիաթի դոգմաներով ղեկավարվելը):

ե) Քրիստոնյաների ռայասցումը և մահմեդականների համար, որպես իշխող խավի, արտոնյալ պայմանների ապահովումը: Այդ նկատառումներով նաև հոգեբանական ճնշման այլ լծակների կիրառումը (բողոքի իրավունքից և մահմեդականի դեմ վկայություն տալու իրավունքից զրկում, արգելումը զենք կրելուց և բանակում ծառայելուց, արգելելն անգամ անձրևից հետո փողոց դուրս գալուց, մահմեդականի անցնելուց ոտքի կանգնելն և այլն),

զ) Մահմեդականների մշտական վերաբնակեցումները ոչ մահմեդական շրջաններում՝ վերջիններին համախմբում թույլ չտալու նպատակով և այլն;

է) մահմեդականների շրջանում բազմակնության խրախուսումը, քրիստոնյաների կանանց և աղջիկների առևանգումները:

Ծավալապաշտությանն սպասարկող իսլամը, որպես կրոն՝ նպաստում էր մարտավարական խնդիրներ դիտարկվող վերը նշված քայլերի հաջողությանը: Սուլթանը համարվում էր սուննի մահմեդականների աշխարհիկ և հոգևոր առաջնորդը, ռազմական ուժի գլխավոր հրամանատարը, որը պետք է սրբազան պատերազմի միջոցով հպատակեցներ ոչ մահմեդականներին՝ «անհավատներին» և նվաճեր նրանց հողերը: Քրիստոնյաների հողերը թուրքերն այլաբանորեն անվանում էին «ոսկե խնձոր», ինչն արդեն շատ բան էր ասում:

Եվ պաշտոնյաների, և՛ հոգևորականների կողմից ներդրվում էր այլատյացության քարոզչություն: Ասենք, որ այս երևույթը «ծաղկում» է ապրում նաև մեր օրերում հարևան Ադրբեջանի հանրապետությունում: Ատելությունն այլ, ոչ մահմեդական ազգերի նկատմամբ

դրվում էր պետական քաղաքականության մակարդակի վրա: Թուրք ուսուցիչներն ազատ էին գորակոչվելուց, իսկ հայերը, արական սեռին պատկանող բոլորը, սկսած օրորոցի կաթնակեր նորածնից մինչև վերջին ծերերը, հաշմանդամը, կաղը, կույրը, ինչպես նաև ուսուցիչները, հարկ էին վճարում: Հայկական դպրոցների վրա պետությունը երբեք որևէ գումար չէր ծախսում, իսկ ուսման տուրք գանձում էր: Հայ գյուղացին տուրքեր ու հարկեր մուծելուց բացի պարտավոր էր մշակել թուրք ու քուրդ աղաների հողը, խնամել նրանց անասունները, կատարել տան ծառայի պարտականություններ:

Թուրքական դժոխքից ազատվելու համար իշխանությունները երկու դուռ էին բացթողնում՝ արտագաղթ կամ մահմեդականացում, այլընտրանքը կոտորածն էր:

Պանիսլամիզմի վրա հենվելով, թուրքերը, որ բնականաբար փոքրամասնություն էին, խրախուսում էին այդ գաղափարախոսությունը մահմեդականների համար, ոչ միայն սահմանում հարկային արտոնություններ, այլև կիրառում բռնի մահմեդականացում: Այնտեղ, որտեղ գերիշխում էին ոչ մահմեդական, հիմնականում հայ կամ հույն ազգաբնակչությունը, թուրքերն աշխատում էին մահմեդական, հիմնականում քուրդ վերաբնակիչների միջոցով «ուղղել» դրությունը: Ահմեդ բեկ Ջեվանշիր հեղինակը, որից մեջբերում է անում պատմաբան Լեոն, գրել է. «... Սևանա լճի մոտ լեզգիները պատահեցին քյուլանի անունով քուրդ թափառական ցեղին, որ գաղթում էր Արարատյան երկրից Ղարաբաղի հյուսիսային մասերը: Այդ գաղթականությունը կատարվում էր Շուշու Իբրահիմ խանի ջանքերով: Ղարաբաղի նորահաստատ խանության համար կարևոր քաղաքական հարց էր մահմեդական ազգաբնակչության կազմելը երկրի այն կողմերում,

ուր չկար այնպիսի տարր, որը պիտի խանական իշխանության նեցուկը դառնար: Փանահ խանը, դավաճանությամբ սողակելով հայաբնակ Խամսայի երկրի սիրտը, շուտ զգաց, որ Շուշու ժայռերը դեռ բավարար հիմք չեն տիրապետություն հաստատելու համար, և նա շտապեց թուրք թափառական ցեղեր գրավել դրսից՝ հարևան խանություններից՝ խոստանալով նրանց զանազան արտոնություններ: ...Վրաստանից և այլ ցեղերից Ղարաբաղ փոխադրվեցին փյուսյան, կարաչառի, ջինլի, դամիրչի-հասանլի, դրզըլ-հալլիլի, սուֆի-քյուրդ, քենդերլի և այլ թափառական ցեղեր»⁶⁸:

11-րդ դարի կեսերից սկսած տարածաշրջանում էթնիկ քարտեզը ավելի լուրջ փոփոխություններ է սկսում կրել. արոտային անասնապահության համար Կուր-Արաքսյան դաշտավայր են սկսում թափանցել վերը նշված քոչվոր անասնապահները՝ թուրք-սելջուկներն ու մոնղոլ-թաթարները: Ինչպես վկայում են պատմական փաստերը, դաշտային Ղարաբաղում քոչվորներին հաջողվում է գերակշռություն ստանալ, սակայն լեռնային տեղանքներում, Արցախի արևմտյան հատվածներում, հետագայում Իրանական պետության կողմից ճանաչված Խամսայի (խամսա-հինգ (արաբերեն) մեխքություններում հայերը բացառիկ քաջություն և անընկճելի հաստատականություն են ցուցաբերում հայրենիքը արաբների, սելջուկների, թաթար-մոնղոլների, թուրքերի շուրջ մեկ հազարամյակ տևած անդադար հարձակումներից պաշտպանվելու գործում:

18-րդ դարից սկսած տարածաշրջանի էթնոքաղաքական իրադրության վրա, ինչպես նշեցինք, սկսում են լուրջ ազդեցություն գործել նաև Քրդստանից և

Միջին Ասիայից, ինչպես և Փոքր Ասիայից քոչած մահմեդական ցեղերը: Երևույթը սկիզբ էր առել դեռ թուրքպարսկական պատերազմի շրջանում (16-րդ դար): Շարաֆ-Խան Բիթլիսիի (15-րդ դար) վկայությամբ. «Առանի Ղարաբաղում բնակվող քասնչորս քրդական տոհմեր, որ հայտնի էին «իգիր-միդյորթ» ընդհանուր անունով», ինչպես և «Օրթուգ-իքի» ցեղային միությունը (թուրքերեն 31 թվի անվանումից) գրադեցնում են Արցախի դաշտային տարածքները՝ Մուղանի հարթավայրը: Այս կոնգլոմերատում առանձնանում էր Ջեվանշիր ցեղը, որ գլխավորում էր ողջ ցեղային միավորումը⁶⁹:

1722 թվականին հայ գորավար Դավիթ Բեկին հաջողվել է ջախջախել ջեվանշիրներին և նրանց դուրս քշել Սյունիքից: Դրանից քիչ անց պարսից Նադիր շահը վերաբնակեցրել է ջեվանշիրներին, սարքջալու և օթուգ-իքի ցեղերին Խորասանում⁷⁰: Շահ Նադիրի սպանությունից հետո վերը նշված ցեղերը վերադարձել են դաշտային Ղարաբաղ: Նրանց են միացել նաև Վրաստանից դեմուրչի-հասանլի, ջինլի, կենդերլի ցեղերը:

Հետագայում, արդեն խորհրդային իշխանության տարիներին, Ադրբեջանի տարածքում այլ էթնոսների թուրքացումը նոր, կարծես թե ավարտական փուլ է մտել, «սովետական մարդու» օրինակով «հայտնագործվել էր» «ադրբեջանցի» կեղծ էթնոնիմը, և 1926թ.-ի մարդահամարով, ի բացառյալ քրիստոնյա և հուդայականություն դավանող ժողովուրդների, մյուս բոլորին՝ մահմեդական քրդերին, լեզգիներին, թաթարներին, թալիշներին և այլն, բոլորին գրանցում են որպես «ադրբեջանցի»:

Քանի որ իշխողների հիմնական

⁶⁸ Ахмед Бек Джеваншир “О политическом существовании Карабахского ханства с 1747 по 1805 год” Шуша, 1901г, стр. 11.Տե՛ս նաև Լեռ, Երկերի ժողովածու, Հ.3, էջ 303

⁶⁹ Լեռ, Երկերի ժողովածու, Հ.3, էջ 264

⁷⁰ Լեռ, Երկերի ժողովածու, Հ.3, էջ 264

զբաղմունքը պատերազմներն ու ավարառություններն էր, թուրքական հասարակության վերին և միջին խավերը սերնդեսերունդ հենց նման լայնածավալ թեոկրատական ռազմամուկ կայսրության իսկ տրամաբանությամբ արհամարհելի բան էին համարում ստեղծագործ աշխատանքը, արհեստներով և առևտրով զբաղվելը: «Նրանք, - նշում է պատմաբան Հրաչիկ Միմոնյանը, - դարեր շարունակ ապրում էին ոչ միայն կայսրության թուրք և այլազգի ներքնախավերի դաժան շահագործման հաշվին, այլև ուրիշ երկրներ ասպատակելով, թալանի, հողերի և գերիների զավթման միջոցով»⁷¹: Նման կենսակերպին անդրադարձել է նաև Ֆ.Էնգելսը, նշելով, որ նրանց առևտրական գործառնությունը սահմանափակվում էր քարավաններ թալանելով:

Հայերը բոլոր ոլորտներում, և՛ տնտեսական, և՛ կառավարման, և՛ գիտական ու մշակութային, կատարում էին պետության հանդեպ իրենց պարտքը և նույնիսկ իշխանությունների կողմից արժանանում «միլլեթ-ի-սասկա» (հավատարիմ ազգ) անվան ու այդուհանդերձ, պոտենցիալ թշնամի էին համարվում: Մեծ փիլիսոփա Հեգելը քաղաքակիրթ մարդուն վայել զարմանքով էր գնահատում թուրքերի, որոնց 90%-ից ավելին անգրագետ էր, կուլտուրական ցածր աստիճանը⁷²: Արդեն 19-րդ դարում կայսրության մեջ ստեղծվել էր այնպիսի դրություն, երբ չնայած պետությունը թուրքական էր, բայց տնտեսության ու մշակութային գերիշխող բարձրունքները գտնվում էին այլազգիների՝ «ցյավուրների» ձեռքին: Եվ արդեն նոր ժամանակներում «պատմության և հասարակական հարաբերությունների ընթացքից հետ մնացած թուրք բուրժուազիան գտնում էր, որ ինքն անիրա-

վահավասար պայմանների մեջ է, ուստի ավելի ու ավելի բացահայտ էր արտահայտում դժգոհությունը ստեղծված իրավիճակից»⁷³:

19-րդ դարում ավելի ակնհայտ էր դառնում ժամանակակից քաղաքակրթության նվաճումներից Թուրքիայի ետ մնալը: Ջրկվելով պատերազմների միջոցով պետական գանձարանը լցնելու հնարավորություններից, թե՛ տնտեսության և թե՛ կառավարման ոլորտներում խոր ճգնաժամ ապրող կայսրությունը ձգտում էր իր գոյությունը երկարաձգել բռնազավթված տարածքներում բազմաթիվ ժողովուրդների լուծը ծանրացնելով, կեղեքումն ու շահագործումը սաստկացնելով: 19-րդ դարում արդեն շուրջ 400 տարի գոյատևած կայսրությունն արգելակում էր իր տիրապետության տակ գտնվող ժողովուրդների զարգացումը: Դա բնականաբար չէր կարող չառաջացնել ազգային-ազատագրական շարժում կայսրության հատկապես եվրոպական տարածքներում, ինչպես՝ Հունաստանում, Բուլղարիայում, Ռումինիայում: Դա նկատում էին նաև ասպարեզ մտած թուրքական բուրժուազիան և մտավորականությունը: Բռնությամբ, սրի ուժով, արյունով ու կեղտով կառուցվածը փլվում էր, պայթում բոլոր կարկաստաններից:

Եվրոպական երկրների, մասնավորապես Ռուսական կայսրության գործուն աջակցությամբ 1830-ին անկախություն է ստանում Հունաստանը, 1861-ին Ռումինիան, 1862-ին Սերբիան: Իսկ 1875-ին Բոսնիայում և Հերցեգովինայում բռնկված հուժկու ապստամբությունը մինչև հիմքերը ցնցում է ռազմավատատիրական, թեոկրատական տերությունը:

Այս պայմաններում է պատմական

⁷¹ Միմոնյան Հր. Ռ. «Թուրք-հայկական հարաբերությունների պատմությունից», Եր. 1991, էջ 13

⁷² Միմոնյան Հր. Ռ. «Թուրք-հայկական հարաբերությունների պատմությունից», Եր. 1991, էջ 18

⁷³ Միմոնյան Հր. Ռ. «Թուրք-հայկական հարաբերությունների պատմությունից», Եր. 1991, էջ 21

ասպարեզ իջնում երիտասարդ թուրքական ազգային բուրժուազիան: 1865-ին նրանք հիմնում են «Նոր օսմանների ընկերակցությունը» և ձգտում բարեփոխումներով փրկել փլուզվող կայսրությունը: «Նա կովի մեջ էր մտնում երկու ճակատով՝ ընդդեմ այլազգի բուրժուազիայի, որն իր ձեռքն էր գցել տնտեսության հիմնական լծակները, և ընդդեմ արտասահմանյան կապիտալի»⁷⁴: Առաջարկվող կոսմետիկ շարժումը բնույթ կրող փոփոխությունների հետ միաժամանակ, նոր օսմանները մտում էին կայսրության պահպանման երդվյալ ջատագովները և մյուս ժողովուրդների իրավունքների թշնամին: Աֆրիկայի հյուսիսային ափերից մինչև Փոքր Ասիա ու Արևմտյան Իրան, մինչև Կովկաս ընդգրկող հսկայածավալ տարածքների զավթումները, բազմաթիվ ժողովուրդների ստրկացնելն ու նրանց ինչպես նյութական, այնպես էլ հոգևոր-մշակութային արժեքների յուրացումն ու ոչնչացումը, քոչվոր թուրքերի մոտ առաջ էին բերում. «Մա Թուրանն է, սա իմն է, ես եմ այս ամենի տերը» մտայնություն, այդ հոգեբանության վրա բարձրացած նոր գաղափարախոսություն՝ պանօսմանիզմ: Եվ հիմա, երբ կայսրությունը մահվան ճիրաններում գալարվում էր, թուրքական ոչ միայն ավատատիրական վերնախավն ու սուլթանականությունը, այլև՝ երիտասարդ ազգային բուրժուազիան խուճապի էին մատնվում ու վիճակից փրկության ելք որոնում:

Եվրոպայում տարածքային կորուստներ կրելով, տերության պահպանման մոլուցքով լցված նոր օսմանները գտնում էին, որ հայացքներն ու տերության պահպանման քաղաքական ուղղությունը պիտի դառնա Արևելքը, դեպի Թուրանը (այսինքն՝ Միջին Ասիան), այնտեղ, ուր իրենց

արմատներն են: Եվ սա դառնում է թուրքական քաղաքական էլիտաների համար հիմնապուն հետագա բոլոր ժամանակներում: Դեռ ավելին՝ թուրքերենը առանցքային ու հիմնարար է համարվում հետագա ժամանակներում, նաև մեր օրերում:

Անհուսության հասնող զայրույթի մեջ, այլ ժողովուրդների ազգային ազատագրական շարժումները, բնականաբար, «բալկանյան սլավոնների, հույների, հայերի, արաբների, քրդերի և կայսրության մյուս ոչ թուրք ժողովուրդների ազատագրական շարժումները, որակվում էին իբրև եվրոպական տերությունների կողմից հրահրվող խռովություններ, իսկ դրանց դաժան ճնշումը համարվում՝ արդարացած»⁷⁵: Նոր օսմանների առաջնորդներից Միդհատ փաշան 1878թ-ին հռչակում է. «Միասնական երկիր՝ միասնական ժողովրդով» կարգախոսը: Ինչպես տեսնում ենք, նա համատեղում է երկու անհամատեղելի խնդիր. ա) կարկատանված, սոցիալ-տնտեսական տարբեր մակարդակների վրա գտնվող, բռնազավթված, էթնիկ առումով օտար տարածքների պահպանում, և բ) կայսրությունում ներկայված էթնիկ տարբեր խմբերի, ժողովուրդների թուրքացում:

Թուրքիայի պատմության մեջ նոր օսմանները առաջ են քաշում հատկապես Արևելքում ռուսական ազդեցության ուժեղացման դեմ վճռական պայքարի խնդիրը: Այս պահանջը հետագայում դառնում է բոլոր պանթուրքիստների հավատո հանգանակը: Խնդիրը միանգամայն բացահայտ ու պարզորոշ է շարադրում Հայկական հարցի միջազգայնացումից հետո, Բեռլինի կոնգրեսից քիչ անց, Քյամիլ փաշան.

«Եթե Եվրոպայում մեր ծոցում օձ տաքացրեցինք, ապա պետք չէ, որ նույն

⁷⁴ Միմոնյան Հր. Ռ. «Թուրք-հայկական հարաբերությունների պատմությունից», Եր. 1991, էջ 22

⁷⁵ Միմոնյան Հր. Ռ. «Թուրք-հայկական հարաբերությունների պատմությունից», Եր. 1991, էջ 35

հիմարությունն անենք մեր ասիական Տաճկաստանում. խելոքությունն այն է, որ ջնջենք ու վերացնենք այն բոլոր տարրերը, որոնք մի օր կարող են մեզ համար նույն վտանգը ծնել և օտարների միջամտության համար առիթ ու նրաց ձեռքին գործիք լինել»⁷⁶:

Այսպես էթնիկ գոտումն իր ամենավայրագ եղանակով մղվում է առաջին պլան, որպես պետական քաղաքականություն և զենքի ուժով բռնաստեղծ կայսրությունը փրկելու միջոց: Ընդ որում, դեռ 1869թ-ին Հաթթը Հումայունը⁷⁷ հղացող Ֆուադ փաշան սուլթան Աբդուլ Ազիզին էր ուղարկել իր «քաղաքական կտակը», ուր հիմնավորում էր հենց այդ խնդիրը: Զարգացնելով Ֆուադին, Քյամիլ փաշան կայսրության ներսում բնակվող առավել ընդունակ և քաղաքակիրթ տարրին՝ հայությանը, բնաջնջելու ռեալ, պետական հանցագործության բոլոր ախտանիշները պարունակող ծրագիր էր առաջարկում. «... Հայ կոչված ազգը պետք է վերացնենք, անհետացնենք, ճզմենք, - գրում էր նա: - այդ բանը գլուխ բերելու համար մեզ որևէ բան չի պակասում. պատրաստի ունենք ամեն գործիք՝ քուրդ, չերքեզ, կուսակալ, դատավոր, հարկահան, ոստիկան, վերջապես ամեն ինչ. կրոնական պատերազմ կհայտարարենք, և դա հեշտ պատերազմ կլինի մի ազգի դեմ, որը ոչ զենք ունի, ոչ զինվորություն և ոչ պաշտպան: Ընդհակառակը, մենք զենք էլ ունենք, զինվորություն էլ, և, բացի այդ, աշխարհիս ամենամեծ ու ամենահարուստ պետություններից մեկը մեր զինակիցն է, մեր ասիական աշխարհի երաշխավորը»⁷⁸: Այս ծրագիրը մեկընդմիջտ որդեգրելով որպես պետական քաղաքականություն, թուրքերն այդուհետ այն չեն հանել իրենց քաղաքական զինանոցից: Հետագա բոլոր փորձերը՝

20-րդ դարում կազմակերպված Արմենոցիդի համար մեղադրել հենց հայերին՝ քաղաքական դեմագոգիայի և լկտիության հասնող կեղծարարության, զոհի և դահձի տեղերը փոխելու նենգ քաղաքականություն է:

Ուշադրություն դարձրեք, որ սա որպես պետական ծրագիր առաջարկվում էր Հայոց Մեծ Եղեռնից շուրջ 40 տարի առաջ: Ուստի ևս մեկ անգամ ընդգծենք միանգամայն անհեթեթ ու զրպարտչական բնույթ ունեն թուրք կեղծարար պատմաբանների, ինչպես քաղաքական գործիչների այն պնդումները, թե հայերն իբր հավատարիմ չեն եղել «օսմանյան հայրենիքին» և պատժվել են՝ պատերազմի պայմաններից ելնելով: Հանցագործությունը տասնամյակների ընթացքում մշակված պետական ծրագիր էր և իրականություն է դարձվել երիտթուրքական կառավարության գլխավորների՝ Էնվեր –Թալեթ, Ջեմալ, Նազըմ, Բեհաեդդին Շաքիր փաշաների հրահանգներով: Նրանց իսկ կուսակցության Մալոնիկում կայացած (1911թ.) ժողովի որոշմամբ:

Ոչ պակաս կարևոր է Քյամիլ փաշայի ծրագրի վերջին դրույթը՝ հովանավոր տերության վերաբերյալ. խոսքն, անշուշտ, Անգլիայի մասին է, որ ստանալով Կիպրոս կղզին, դարձել էր Օսմանյան տերության պաշտպանը: Անդրովկիանոսային այնպիսի տերություն, որ 20-րդ դարի սկզբին կենտրոնացրել էր իր կազմում երկրագնդի ցամաքային մասի 1/4-ը և գերիշխում էր ծովերում, ինչպիսին Մեծ Բրիտանիան էր, պաշտոնաթող վարչապետը՝ Լլոյդ Ջորջն իր հուշերում պիտի խոստովաներ այդ առիթով՝ «Հայաստանը ողջակիզվեց բրիտանական քաղաքականության զոհասեղանին»: Թուրքերն իրենց հայաջինջ ծրագիրը առաջին աշ-

⁷⁶ Տես «Փորձ» հանդես 1979, էջ 104

⁷⁷ 1856թ. փետրվարի 18-ի հրովարտակը ոչ մահմեդականների վերաբերյալ:

⁷⁸ Տես «Փորձ» 1979, էջ 204-205

խարհամարտի տարիներին վայրենի մոլուցքով իրականություն դարձնելով, հետագայում արդեն, մեր օրերում անցան նոր մարտավարության՝ կեղծելով պատմությունն ու հերոսացնելով մարդասպաններին: 1927թ. հոկտեմբերին Թուրքիայի հանրապետության հիմնադիր Մուստաֆա Քեմալը, արևելահայերի դահիճը, մոռանալով թուրքական տրիբունալի կողմից երիտթուրքերի հասցեին ուղղված մեղադրական եզրակացությունները, տրիբունալի վճիռը, ավելի քան ցինիկ ձևով հայտարարել է.

«Այս վայրագությունը, որի նմանը պատմություն չի տեսել, հայերն են իրականացրել: (ընդգծումն իմն է Ռ.Պ.) Մուսուլմանները զուտ իրենց պատիվն ու կյանքը պաշտպանելու համար հայերի դեմ դուրս եկան և ինքնապաշտպանության դիմեցին»: Ճիզվիտները խղճուկ աշակերտներ կարող են դիտվել նման կեղծավոր առաջնորդի հանդեպ: Իսկ Ջելալ Բայարը՝ Թալեաթի դին Թուրքիա բերելու նախաձեռնողը, հայերի, հույների ու ասորիների դահիճի մասին ասել է. «Շատ հայրենասեր, հզոր և յուրահատուկ անձնավորություն էր: Հայտնի է, որ նահատակվեց արտերկրում մի դավաճան հայի գնդակից»: Ահա թե ինչի մասին պետք է խորհեն և եզրակացություն անեն միջազգային իրավապաշտպան կազմակերպություններն ու պետությունների արտաքին քաղաքականությունը կազմակերպող գերատեսչությունները մեր օրերում, երբ պանթուրքիզմը ոչ միայն չի մեռել և չի թաղվել, այլ փորձում էր կրկին իր շոշափուկները տարածել Մերձավոր Արևելքում՝ Միբիայում ու Բալկաններում: Քոչվորն եկել նստել էր հայի տանը և ոչ միայն քամում էր նրա քրտինքը, այլ ստորացնում ամեն կերպ ու արտամղման կամ ոչնչացման ուղղում: Իրենց պատիվն ու ունեցվածքը գիշատիչ քոչվորներից պաշտպանելու

համար հայերն անշուշտ պիտի դիմեին հակադարձման միջոցների: Ծայր էր առել ֆիդայական շարժումը, հրացանը գալիս էր փոխարինելու աղաչանքին ու հուսահատությանը: Ծավալվել է հայ ժողովրդի սրբազան դատի համար պայքարի ազգային-ազատագրական շարժման ժամանակաշրջանը: Ստեղծված էր ճիշակ խայտաբղետության, ցրվածության և տարանջատվածության պայմաններում հայերի դիմադրությունը սոսկ լոկալ և ֆիդայական-պարտիզանական պայքարի բնույթ է ունեցել, և ամենևին էլ որպես ապստամբություն որակվել չի կարող: Միջազգայնորեն ճանաչված, այդ թվում և ՄԱԿ-ի հաստատած փաստաթղթերում կյանքի իրավունքը գերակա է բոլոր քաղաքական պահանջների համեմատ:

«Պետք է մերժել այլացեղ ազգություններու իրենք իրենց մեջ կազմակերպելու իրավունքը: ...Թուրք լեզուի տարածումը գերազանց միջոց մըն է հաստատելու մահմեդական գերիշխանությունը և յուրացնելով ձուլելու մյուս տարրերը», - գրել է Ջարեվանդը՝ մերկացնելով թուրքական ասիմիլատորների քաղաքականության իրական բնույթը: Այսպիսով դեռ Սալոնիկում վերջնականապես ձևավորվել է Միդիատ փաշայից եկող «Թուրքիան՝ միայն թուրքերի համար» նշանաբանը կրող հայաջինջ քաղաքականությունը, այստեղ էլ որոշվել է սրի միջոցով դիմադրողներին ոչնչացնելու ծրագիրը:

19-րդ դարի կեսերից սկսած ավտոխթոն ժողովուրդների տարածքները հասկապես կայսրության արևելքում, որ արդեն Արևելյան Անատոլիա անհեթեթ բառերով էր հորջորջվում, վերջնականապես թուրքացնելուն է ուղղվում նաև վերաբնակեցումների նոր, հզոր ալիքը: Օսմանյան լուծը թոթափած Բուլղարիայից և եվրոպական մյուս երկրներից մուսուլման բնակչությունը

2 / 74 2016

ՎԵՍՏ
ԱՐԳՎՈՒԹԵԼՆ

զանգվածաբար գաղթեցվում և բնակեցվում էր հիմնականում Արևմտյան Հայաստանում: Միայն 1879-82թթ. այստեղ բնակություն են հաստատում ավելի քան 78 հազար թուրք: Այսպես կոչված մուհաջիրների (ներգաղթողների կամ հայրենադարձների) այդ հոսքը տեղի է ունենում նաև Ռուսաստանից: Շամիրի լեռնականների կոիվների ընթացքում և հետո Թուրքիա են գաղթում 418 հազար մահմեդականներ՝ չերքեզներ, աբխազներ, օսեր, կաբարդիներ, բալկարներ, ինգուշներ, չեչեններ, լեզգիներ, կարաչայներ, ավարներ, որոնցից 200 հազարը տեղավորվում են հայերի հողերի վրա՝ Սեբաստիայի վիլայեթում, Բիթլիսում և Վանի վիլայեթում:

Անհաշիվ վկայություններ կան առ այն, որ այն վայրերում, ուր ոտք էին դնում վերաբնակվողները, որոնց բուրբին անվանում էին չերքեզներ, ծայր էին առնում ամենավայրենի բռնությունները, թալանն ու սպանությունները: Թուրքական կառավարությունը նրանց ապրելու որևէ միջոց չէր տրամադրել, բայց բուրբին զինում էր:

Անզլիական դիվանագետների խորհրդով սուլթանական ռեժիմը գնացել է նաև հայերի գլխին պատուհասող ևս մեկ հրեշավոր ուժի կազմակերպման՝ ստեղծել են «Համիդիե» հեծելազորային գնդերը ջարդարար Ջեփի փաշայի հրամանատարությամբ: Ներկայիս տերմինաբանությամբ նրանք առաջին հատուկ ջոկատային զինված խմբերն էին: 19-րդ դարի վերջին այս գնդերի թիվը 63 էր, սրանցից 50-ը կազմված էին գերագանցապես քրդերից, և ընդգրկում էր շուրջ 100 հազար բաշիբազուկ: Համիդիեի շարքերում «ձառայողներին» տալիս էին հայերի հողերը, զիջում պարտքերը, ազատում հարկերից: Նրանց խնդիրն էր. «Հսկել հայերին և

մյուս քրիստոնյաներին, խեղդել նրանց շարժումները, քայքայել տնտեսապես, հալածել, կոտորել և փախցնել իրենց բնակավայրերից»: Ահա այսպես էլ կատարվում էր էթնիկ գտման ծրագիրը⁷⁹:

Համիդիե գունդը սովորաբար գլխավորում էր ցեղապետը, այն ապրում և սնվում էր քրիստոնյաների ավարի ու թալանի հաշվին: Ցեղապետերի երեխաները պահվում էին Կ.Պոլսում հատուկ դպրոց հաճախում: Մա արդեն վայրագ խմբավորումը կառավարելի դարձնելու գործիք էր:

Այդպիսով, սուլթանությունը վճռել էր Հայաստանը դատարկել հայերից և այդ նպատակին հասնելու ճանապարհին միջոցների խնայողություն չէր անում:

16-19-րդ դարերի ընթացքում, 300 տարի հետևողականորեն ստեղծելով հայ տարրի ապրելու համար անտանելի և ձուլման համար նպաստավոր պայմաններ, ու, այդուհանդերձ, չհասնելով շոշափելի արդյունքների, օսմանյան տերության նոր տեղերը՝ երիտասարդ թուրքերի կազմակերպությունը հանգել էր հայերի ոչնչացման հրեշավոր գաղափարին:

Անդրադատնալով Հայոց Մեծ Եղեռնի պետականորեն ծրագրված լինելու հանգամանքին, Մեծ Բրիտանիայի ականավոր պետական գործիչ, նախկին վարչապետ Ուինսթոն Չերչիլը գրել է.

«Տրամաբանական ոչ մի կասկած չկա, որ ոճիրը ծրագրված ու գործադրված էր քաղաքական պատճառներով: Առիթը ներկայացած էր թուրքական հողն ազատելու մի քրիստոնյա ցեղից, որը ...աշխարհագրականորեն գտնվում էր թուրքական ու կովկասյան իսլամական ժողովուրդների միջև...»⁸⁰

Ա. Մանդելշտամի դիպուկ գնահատմամբ Բալկանյան պատերազմում

⁷⁹ Պոդոյան Ա. Կ. «Ալկարկներ Արևմտյան Հայաստանի պատմության», Ե.1990. էջ 33

⁸⁰ Հուշամատյան Մեծ Եղեռնին (1915-1965)Բեյրութ 1965, էջ 1072

Թուրքիայի պարտությունը վերջին խթանն էր թուրքական բուրժուազիայի ու ազգայնական մտավորականության և զինվորության՝ պանթուրքիզմին վերջնականապես հարելու համար: Հենց այս գաղափարախոսության կրողներն էին դառնում հայերին ոչնչացնելու ծրագրի հեղինակներ:

Կ. Պոլսի հայ պատրիարքին 1913թ.ին նույեմբերի 16-ին ուղղված իրենց նամակում նրանք բացեիբաց գրել են. «...այսօր թուրքերը հանձն են առել և ուխտել են հայ գյավուրներին, որոնք Թուրքիայի միկրոբներն են, նվաճել ու նրանցից մաքրվել»⁸¹:

Պատմության կեղծարարներին ևս մեկ անգամ հարց ուղղենք: Ինչու՞ էք անամոթաբար խեղաթյուրում պատմությունը և սայլը կապում ձիուց առաջ. հայերի հետագա ընդվզումները պատճառ չեն, ինչպես Վանի 1915թ. ինքնապաշտպանությունը, այլ ցեղասպան ծրագրին հակազդելու տրամաբանական հետևանք, համամարդկային կյանքի իրավունքի դրսևորում:

Հայերին ցեղասպանության ենթարկելու գաղափարը մշակվում էր Համիդի ջարդարարական քաղաքականության արդյունքների հիման վրա և դառնում համաշխարհային պատմության մեջ երիտթուրքերի պանթուրքական ծրագրով կյանքի կոչվող առաջին մեծածավալ հանցագործությունը: Այս իրողությունը ժխտելն անհնար է:

Ադրբեջանում ձևավորված հասարակությունը ևս վարակված է պանթուրքիզմի թույնով. ջևանշիրների, կարակոյունլուների ու սելջուկների հետնողները, տեղայնացնելով ու յուրացնելով, ոչնչացնելով պարսկական, հայկական, պարսկական ու արաբական քաղաքակրթությունների նվաճումները, չեն ուզում հաշվի նստել

տեղաբնակ ժողովուրդների իրավունքների հետ և իրենց հայտարարում են Հարավկովկասյան տարածաշրջանի տերեր՝ փորձելով վերաձևել կրկին տարածաշրջանի քարտեզը: Փորձում են խեղդել ոչ միայն բնիկ, իր պայքարով այդուհանդերձ անկախություն նվաճած արցախահայերի, այլև լեզգիների, թաթարների ու թալիշների ինքնորոշման իրավունքը: Դեռ 1920-ին Արևելքի ժողովուրդների առաջին համագումարում երիտթուրք պարագլուխներից Էնվերը հռչակել էր, որ «Մենք գտնում ենք, որ Ադրբեջանը պատկանում է ադրբեջանցիներին» և այսօր այն ինչ կատարվում է այդ հարևան երկրում դրա վկայությունն է, Դրա փաստացի արտահայտությունն է նաև Նախիջևանի հայկական ինքնավար մարզի հայաթափումը: Մինչ այդ մահմեդականները հայաթափել էին Լենքորանը, Մայլանը, Մուղանը, Քուռ գետի առափնյա հայկական և ուցիական բնակավայրերը: «Բաքվի նահանգը քրիստոնյաների համար դարձել էր դանթեական դժոխք՝ ամեն տեղից ծուխ էր բարձրանում... ամեն քաղաքից ու շրջանից օգնություն էին խնդրում...», - 1918թ-ի դեպքերի մասին գրել է Ս. Մելիք-Յուլյանը: - Կոտորելով բոլոր կայարաններում եղած հայերին և քշելով ռուսներին, մուսավաթի կողմից կազմակերպված խմբերը որսկան շների պես մտնում էին բոլոր անցնող գնացքերը, խուզարկում զարմանալի եռանդով և գտնելով «որսը» դուրս էին բերում կայարանների կառամատույցները և խելագար հրճվանքով բռնված ամբոխի առաջ կոտորում էին նրանց»⁸²:

Անվիճելի է, այսպիսով, որ Շուշիի, Մումգայիթի ու Բաքվի կոտորածները մշակված սցենարների կրկնություններ

⁸¹ «Ազդակ», 1989թ.

⁸² Ս. Մելիք-Յուլյան «Բաքուի հերոսամարտը», «Հյարենիք» 1955, N 8

Էին, «Թեշքիլաթը Մահսուսեի» ձեռագրի շարունակություն: Այն, որ Ադրբեջան պետությունը էթնիկ գոումների արդյունք է, վկայում է և այն փաստը, որ նրա պատմաբանները և կառավարող էլիտան քաջատեղյակ «ադրբեջանցի» ժողովրդի կայացման «քիմիային», - դեռևս չեն որոշակիացել իրենց էթնիկ պատկանելիության հարցերում. Ադրբեջանում հինգ անգամ փոխել և շարունակում են փոխել իրենց նախնիներին: Էթնիկ գոման, ասել է թե գենոցիդի օրինակ են որակվում հայկական ջարդերը Ադրբեջանի Սումգայիթում և հայաթափումը Նախիջևանի տարածքում: «Не так уж оторваны от реальности предположения, что первые армянские погромы в Азербайджане были инспирированы местной мафией, управляемой бывшим руководителем КГБ Азербайджана Г.А. Алиевым, с тем, чтобы создать безвыигриашную ситуацию для Горбачева», - писал Джордж Сорос⁸³.

Պանթուրքիզմի ծավալապաշտության վտանգի մասին կոչնակ են հնչեցնում ոչ միայն Հայաստանում, հակամարդկային և ճիվաղային այդ գաղափարախոսությունն ու պրակտիկան նշավակում ու այն անտեսելու վտանգավոր հետևանքների մասին զգուշացնում են Բուլղարիայում, Ռուսաստանում, Չեխիայում, Ֆրանսիայում, Գերմանիայում, հայերի ցեղասպանությունը դատապարտած մի շարք երկրներում: «Պանթուրքիստների ռևանշիզմի ու էքսպանսիսիզմի հարաճուն վտանգը գնալով ավելի ակնհայտ է դառնում ու անհանգստացնում համաշխարհային հասարակայնությանը», - բուլղարական «Ռաբոտնիչեսկոդելո» թերթից մեջբերում է արել Ստ. Պողոսյանը⁸⁴: Մեր հայրենակից պատ-

մաբան Ստեփան Պողոսյանը ևս պանթուրքիզմը դիտարկել է որպես տարածքային զավթումների նպատակով հոգեբանական պատերազմ, որում կենտրոնական տեղը գրավում են կեղծիքը, նենգափոխումը, զրպարտությունը: Նշված հակամարդկային դրսևորումներում մեծ եղբորից հետ չի մնում նաև կրտսերը՝ Ադրբեջանը: Արցախահայության և Հայաստանի հասցեի ահաբեկչական ռազմամոլ հոետորաբանությունն ու պրակտիկան, պերմանենտ դիվերսիոն գործողությունները դրա վկայությունն են:

Սույն հոդվածը թուրքերին սևացնելու նպատակ չի հետապնդում: Պանթուրքիզմը ցեղասպանության, էթնիկ գոման քաղաքականություն է և նրա մետաստազները մենք տեսնում ենք ժամանակակից Թուրքիայում ու Ադրբեջանում, դա մենք տեսնում ենք շուրջ կես միլիոն հայերի նկատմամբ բռնություններով ու նրանց դուրս մղմամբ Ադրբեջանից, ինչպես նաև Էրդողանի քաղաքականության դրսևորմամբ Սիրիայում ու Իրաքում, ահաբեկչական խմբավորումներին Թուրքիան կառավարող շրջանների կողմից ցույց տրվող դրսևորումներում:

Բացի թուրքերից Թուրքիայում այսօր բնակվում են քրդեր, արաբներ, թուրքմեններ, կարափափախներ, թաթարներ, գազաուզներ, հայեր, հրեաներ, լազեր, վրացիներ, չերքեզներ, օսեթներ, լեզգիներ, աբազիներ, սերբեր, ալբանացիներ, բասնիացիներ, իսպանացիներ, ֆրանսիացիներ, իտալացիներ, ասորիներ, որոնց գլխին կախված է դեպորտացիայի վտանգը: Հայերի՝ Ստամբուլից դեպորտացիա անելու մասին մի քանի անգամ սպառնալիքով հանդես է եկել նախագահ Էրդողանը: Միայն 1926-27թթ. Արևելքից բռնագաղթվել և

⁸³ Дж. Сорос «Коцепция Горбачева», Журнал знамя, 1989, N 6
⁸⁴ Պողոսյան Ս.Վ. «Պանթուրքիզմը երկ և այսօր», Եր. 1990, էջ 75
⁸⁵ /թերթ.am/am/news/2016/22/turkey/2200455 haberdar.com

Թուրքիայի արևմուտքն են տեղափոխվել շուրջ 1 մլն քրդեր, որոնք այսօր արդեն լուրջ «գլխացավանք են դարձել պանթուրքիստների համար»:

Թուրք սյունակագիր Էրգյուն Բաբահունը haberdar.com կայքի իր սյունակում «Քրդական հարցին հայկական լուծում» հոդվածում գրել է. «... փորձում են քրդերին արմատախիլ անել ճիշտ այնպես, ինչպես արմատախիլ են արել հույներին, հայերին, եզդիներին, ասորիներին»:

Որոշ հեղինակներ, չխորանալով օսմանյան արհեստածին կայսրության կառավարման ներքին տրամաբանության, հայոց ցեղասպանության պատճառների մեջ, փորձել և փորձում են երևույթի մեջ տեսնել հրեական գործոն, որ անընդունելի է: Անընդունելի է, քանի որ չի կառուցվում որևէ տրամաբանության վրա, ելնում է գիտակցված կամ չգիտակցված հակասեմիտիզմի դիրքերից, որ հայ իրականության հետ ընդհանրության եզրեր չի կարող ունենալ: Դեռ ավելին, այն կարող է հարվածել նաև հայ ժողովրդի շահերին, շեղել պայքարի գլխավոր ճանապարհից՝ այն է բացահայտելու և դատապարտելու պանթուրքիզմի հակահումանիստական և հակահայ բնույթը: Ցեղասպան պետությունը Թուրքիան է, թուրանականության ռեակցիան գաղափարախոսությունը, որի կրողները, ի դեմս հայ ժողովրդի տեսնում են Մեծ թուրանի ճանապարհի խոչընդոտի: Չլինել ներքին պահանջմունքը, չէր կենսագործվելու և արմենոցիդը:

Մեկ ոչ երկրորդական փաստ ևս. Ռաֆայել Լեմկինը, որ իրավագիտություն էր ուսանել Լվովում և քաջ ծանոթ էր հայ մշակույթին ու հայ ժողովրդի գրկանքներին, շփվելով տեղի հայ համայնքի ներկայացուցիչների հետ, անձամբ ներկա է գտնվել Սողոմոն Թեհլիրյանի դատավարությանը: Հենց

դատական այս պրոցեսն ու նրա նյութերն են ուղղորդել հրեա Լեմկինին հանգելու ցեղասպանության հիմնական դրույթներին: Հարստացնելով դրանք Հոլոքոստի վերաբերյալ փաստերով, Լեմկինը հայտնագործել է ցեղասպանության գիտական եզրը⁸⁶:

Ծավալապաշտությունը այլ էթնոսների տարածքի բռնի յուրացումն է և ձուլման քաղաքականության հիմք, այն ռասայական խտրականություն է ստեղծում: Ռասայական խտրականության բոլոր ձևերի վերացման մասին 1965թ. դեկտեմբերի 21-ին ընդունված Միջազգային կոնվենցիայի 4-րդ հոդվածով այն ստորագրած պետությունները դատապարտել են ցանկացած քարոզչություն և բոլոր այն կազմակերպություններին, որոնք հիմնված են մի ռասայի կամ մաշկի որոշակի գույն կամ էթնիկական ծագում ունեցող անձանց խմբի գերազանցության գաղափարների կամ տեսությունների վրա կամ որոնք փորձում են արդարացնել կամ խրախուսել ռասայական ատելությունն ու խտրականությունը, ինչ ձևով էլ որ դրանք դրսևորվելիս լինեն:

Պետությունները օրենքով պատժելի հանցանք են համարել ռասայական գերազանցության կամ ռասայական ատելության վրա հիմնված գաղափարների տարածումը, ռասայական խտրականության հրահրումը, այլ էթնիկ խմբերի դեմ ուղղված բռնության, դրանց վրա կառուցվող ծավալապաշտական գործողությունները, հատկապես էթնիկ գտումները:

Նման խտրականության դրսևորման ակնհայտ փաստեր արդեն առկա էին Օսմանյան կայսրությունում արդեն Առաջին աշխարհամարտի տարիներին, ինչը և նպաստավոր միջավայր ստեղծեց 20-րդ դարի առաջին ցեղասպանության համար: Արմենաֆոբիան, որպես ռասայական խտրականության

⁸⁶ Հովհաննիսյան Նիկոլայ «Արմենոցիդը ճանաչված ցեղասպանություն է», Ե. 2010, էջ 228

ձև մեր օրերում անգուսպ չափեր է ընդունել թուրքերի երկրորդ՝ Ադրբեջան պետությունում, որի հետագա ծավալումը ներքին և արտաքին համապատասխան բարենպաստ պայմանների դեպքում կարող է հանգեցնել մարդու և մարդկության դեմ ուղղված նոր հանցագործությունների: Պատահական չէ միջազգային գիտական շրջանակներում բարձր հեղինակություն վայելող հայ արևելագետ պրոֆեսոր Նիկոլայ Հովհաննիսյանի այն դիտարկումը, որ «Ցեղասպան պետության ձևավորման համար կարևոր է, որ տվյալ հասարակությունը ոչ միայն չընդվզի էթնիկա-

կան մաքրման դեմ, այլև ընդունի և պաշտպանի այդ քաղաքականությունն ակտիվ կամ պասիվ կերպով Այլ կերպ ասած, - հավելում է գիտնականը, - խիստ կարևոր է, որ տվյալ պետության ներսում չլինեն ցեղասպանությանը խոչընդոտող ռազմական, քաղաքական, կրոնական և հասարակական շատ թեքիչ կազմակերպված ուժեր»⁸⁷.

Պանթուրքիզմը և ծավալապաշտությունը ոչ միայն էթնիկ գտման դատապարտելի քաղաքականություն է, այլև ձևավորում է ցեղասպան պետություն և հանրույթ:

**ԹՈՒՐՔԱԿԱՆ ԾԱՎԱԼԱՊԱՇՏՈՒԹՅԱՆ
ԵՎ ԷԹՆԻԿ ԶՏՈՒՄՆԵՐԻ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՏՆԵՐԸ,
ՎՏԱՆԳԸ ԵՎ ԱՐԴԻ ԸՄԲՈՒՆՈՒՄՆԵՐԸ**

ՌՈՒԲԵՆ ՎԱՉԱԳԱՆԻ ՊԱՐՄԱՍՅԱՆ

ՀՀ Ժուռնալիստների միության անդամ, պատմաբան

ԱՍՓՈՓՈՒՄ

Հոդվածում վերլուծվում են ռասսայական խտրականության հանցագործություններ ծնող ազդեցիվ գաղափարախոսություններից մեկի, պանթուրքիզմի որպես ծավալապաշտության դրսևորման պատմական արմատները և պրակտիկան: Անդրադարձ է կատարվում էթնիկ գտումների քաղաքականության արմատներին և արդի ըմբռումներին:

Հեղինակը պատմագիտական աղբյուրներով հիմնավորում է թեզը, որ նման գաղափարախոսություններն են ձևավորում ցեղասպանությունների և էթնիկ գտումների համար համապատասխան միջավայր, ինչը, ի դեմս Արմենոցիդի ունի փորձարկված նախադեպ և, հաղթահարված չլինելով՝ վտանգավոր մարտահրավեր է համաշխարհային հանրությանը:

Բանալի բառեր. Թուրքական ծավալապաշտություն, էթնիկ գտումներ, ցեղասպանություն, Արմենոցիդ, պանթուրքիզմի քաղաքականություն:

⁸⁷ Հովհաննիսյան Նիկոլայ «Արմենոցիդը ճանաչված ցեղասպանություն է», Ե. 2010, էջ 130

**ИСТОРИЧЕСКИЕ КОРНИ,
ОПАСНОСТЬ И СОВРЕМЕННОЕ
ВОСПРИЯТИЕ ТУРЕЦКОГО
ЭКСПАНСИОНИЗМА
И ЭТНИЧЕСКИХ ЧИСТОК**

РУБЕН ВАЧАГАНОВИЧ ПАРСАМЯН

Историк

**THE TURKISH EXPANSIONISM
AND ETHNIC CLEANING
POLICY ROOTS,
RISKS AND CURRENT PERCEPTIONS**

RUBEN VACHAGAN PARSAMYAN

Historian

РЕЗЮМЕ

В статье рассматриваются исторические корни и практика пантюркизма как одного из опасных идеологий породившей и способной еще породить расовую сегрегацию, этническую чистку, геноцид, другие формы преступления против человечества. На основе достижений исторической науки, автор обосновывает тезис, согласно которой именно подобные идеологии образуют ту среду, где и находят свои проявления преступления на этнической почве. Подтверждается вывод академика Николая Оганисяна о том, что Арменокцид – есть прецедент в формировании геноцидальной среды, результат государственной политики этнической чистки.

Ключевые слова: *турецкий экспансионизм, этнические чистки, геноцид, преступление, автохтонный народ, младотурецкая политика.*

SUMMARY

The article analyzes the historical roots and practice of aggressive ideology of the Pan-Turkism as an expression of racial discrimination and crimes. A reference is made to the roots and the modern interpretation of the ethnic cleansing policy.

Using historical sources the author confirms the thesis that such ideologies form an appropriate environment for genocide and ethnic cleanings. And that in the face of Armenocide such environment has an “experienced” precedent and remains a serious threat to the international community.

Key words: *Turkish expansionism, ethnic cleansing, genocide, humanity, crime, autochthonous people, Young Turk policy.*

ԱՊԱՑՈՒՅՑՆԵՐԻ ԹՈՒՅԼԱՏՐԵԼԻՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐԸ ՔՐԵԱԿԱՆ ԴԱՏԱՎԱՐՈՒԹՅՈՒՆՈՒՄ

Ապացուցումը (ապացույցների հավաքումը, ստուգումը, օգտագործումը և գնահատումը) քրեադատավարական գործունեության կարևորագույն բաղկացուցիչ մասն է: Այն ճանաչողական գործունեություն է, որն ուղղված է նախկինում տեղի ունեցած դեպքի հանգամանքների հետազոտմանը և վերականգնմանը: Ապացուցման, մասնավորապես ապացույցների ներկայացման և թույլատրելիության հիմնախնդիրներն առավել հաճախ դիտարկվում են արդար դատաքննության իրավունքն ապահովող երաշխիքների լույսի ներքո: Արդար դատաքննության պահանջներն իրագործելու համար անհրաժեշտ է, որպեսզի դատարանն անդրադառնա ապացուցման խնդիրներին և անթույլատրելի ճանաչի օրենքի խախտմամբ ձեռք բերված ապացույցները⁸⁹: Քրեական դատավարության օրենսգրքի 105-րդ հոդվածը թվարկում է որպես ապացույց չթույլատրվող նյութերը, 107-րդ հոդվածը սահմանում է ապացուցման ենթակա հանգամանքները, իսկ 10-րդ գլուխն ամբողջությամբ նվիրված է ապացույցների տեսակներին, որոնք սպառիչ թվարկված են: Օրենսդիրը փորձել է հնարավորինս մանրամասն կարգավորել ապացուցման ինստիտուտը: Այնուամենայնիվ, որոշ բացթողումներ կան, որոնք շատ հաճախ հակասությունների ու սխալ որակումների տեղիք են տալիս:

Թույլատրելիությունն՝ ապացույցի պիտանի լինելն է աղբյուրների, տվյալների ստացման մեթոդների և հնարքների օրինականության տեսակետից⁸⁹:

Այն որոշվում է, առաջին հերթին, ֆորմալ իրավունքների պահպանությամբ, որոնք ուղղակիորեն նշված են Օրենսգրքում⁹⁰: Ապացույցի թույլատրելիությունը որոշելիս պետք է պահպանել չորս «պատշաճ»-ի կանոնները՝

1. ապացույցի ձեռքբերման պատշաճ դատավարական կարգ,
2. ապացույցի ձեռքբերման պատշաճ աղբյուր,
3. ապացույցը ձեռք բերող պատշաճ սուբյեկտ,
4. ապացույցի ձեռքբերման պատշաճ եղանակ⁹¹:

Օրենսգրքի 105-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ քրեական գործով վարություն մեղադրանքի հիմքում չեն կարող դրվել և որպես ապացույց օգտագործվել այն նյութերը, որոնք ձեռք են բերվել՝

- 1) բռնությամբ, սպառնալիքով, խաբեությամբ, անձին ծաղրի ենթարկելով, ինչպես նաև այլ անօրինական գործողություններով.
- 2) կասկածյալի և մեղադրյալի պաշտպանության իրավունքի, դատավարության լեզվին չտիրապետող անձանց իրավունքների՝ սույն օրենսգրքով նախատեսված լրացուցիչ երաշխիքների էական խախտմամբ.
- 2¹) վկայի՝ սույն օրենսգրքի 86-րդ հոդվածի հինգերորդ մասով նախատեսված իրավունքների խախտմամբ.
- 3) տվյալ քրեական գործով քրեական դատավարություն իրականացնելու, համապատասխան քննչական

կամ այլ դատավարական գործողություն կատարելու իրավունք չունեցող անձի կողմից.

- 4) բացարկյալ անձի մասնակցությամբ, եթե նա իմացել է կամ պետք է իմանար քրեական գործով վարույթին իր մասնակցությունը բացառող հանգամանքների առկայության մասին.
- 5) քննչական կամ այլ դատավարական գործողության կատարման կարգի էական խախտմամբ.
- 6) այն անձից, որն ունակ չէ ճանաչել փաստաթուղթը կամ այլ առարկան, հաստատել դրա իսկությունը, հայտնել դրա առաջացման և ստացման հանգամանքների մասին.
- 7) անհայտ կամ դատական նիստում չբացահայտվող աղբյուրից.
- 8) ժամանակակից գիտական պատկերացումներին հակասող մեթոդների կիրառման արդյունքում:

ՀՀ Քրեական դատավարության օրենսգրքի նոր նախագծի 120-րդ հոդվածը որպես ապացույց չթույլատրվող նյութերի շարքին է դասում նաև այն տվյալները, որոնք ձեռք են բերվել մեղադրյալից պաշտպանի բացակայությամբ կատարված հարցաքննության ընթացքում, եթե մեղադրյալը դատարանում չի հաստատել դրա հավաստիությունը և մեղադրյալի կարգավիճակ չունեցող անձից, ում նկատմամբ փաստացի իրականացվել է քրեական հետապնդում: Այսինքն նախագծով որպես ապացույց չթույլատրվող նյութերի շրջանակից դուրս են բերվել վկայի գործող օրենսգրքի 86-րդ հոդվածի հինգերորդ մասով նախատեսված իրա-

վունքների խախտմամբ և բռնությամբ, սպառնալիքով, խաբեությամբ, անձին ծաղրի ենթարկելով, ինչպես նաև այլ անօրինական գործողություններով ձեռք բերված տվյալները:

ՌԴ քրեական դատավարության օրենսգրքի 75-րդ հոդվածը անթույլատրելի ճանաչվող ապացույցները 3 կատեգորիայի է բաժանել. 1-ին խմբում այն տվյալներն են, որոնք ձեռք են բերվել ապացույցների ձեռքբերման դատավարական կարգի խախտմամբ, 2-րդ խմբի մեջ մտնում են այն տվյալները, որոնք լուրերի ու ենթադրությունների վրա են հիմնված, իսկ 3-րդ խումբն են կազմում այն ցուցմունքները, որոնք մեղադրյալը տվել է պաշտպանի բացակայությամբ:

Քննարկենք ապացույցների թույլատրելիությանը վերաբերող որոշ իրավիճակներ.

1. Քրեական դատավարության օրենսգրքի նախագծի 46-րդ գլխով նախատեսվում է մեր քրեադատավարական համակարգ ներդնել ցուցմունքների դատական դեպոնացման ինստիտուտը: Մրա էությունը հետևյալն է. այն հնարավորություն է տալիս մեղադրյալին հարցաքննել դատավորի ներկայությամբ նրա խոստովանական ցուցմունքի արժանահավատությունն ապահովելու համար, ինչպես նաև պաշտպանության կողմի համար երաշխավորում է հակընդդեմ հարցման իրավունքն այն դեպքում, երբ առկա է հիմնավոր ենթադրություն, որ հարցաքննության ենթակա անձը չի կարող ներկայանալ դատաքննության կամ դրա ընթացքում կարող է իրավաչափորեն հրաժարվել ցուցմունք տալուց⁹²: Առաջին հայացքից թվում է,

2 / 74 2016

ՎԵՍՏ
ԱՐԳՄԵՆԻԱ

⁸⁸ Տե՛ս ՀՀ վճռարկելի դատարանի որոշումների գիտագործնական մեկնաբանություններ. Հատոր 2, Երևան, 2013թ., էջ 404:
⁸⁹ Տե՛ս Հայաստանի Հանրապետության քրեական դատավարություն. Ընդհանուր մաս, Երևան, 2006թ., էջ 281:
⁹⁰ Տե՛ս Проблемы допустимости доказательств в уголовном судопроизводстве, 2012 թ., էջ 325:
⁹¹ Տե՛ս ՀՀ քրեական դատավարություն, Մաս 1, Հեղինակային խումբ: Գիտ. խմբ. Արթուր Դամբարյան, Երևան, 2016թ., էջ 372:
⁹² Տե՛ս Զ. Ղուկասյան, ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի նախագծի հիմնախնդիրներին նվիրված գիտական հոդվածների ժողովածու. Երևան, 2014թ., էջ 73:

թե գրոյի է հավասարեցված մեղադրյալից ոչ իրավաչափ միջոցներով խոստովանական ցուցմունք կորզելու հնարավորությունը: Մինչդեռ ճիշտ հակառակն է: Պարտադիր չէ, որ վերոնշյալ ոչ իրավաչափ միջոցները կիրառվեն հենց դատավորի աչքի առաջ, որպէսզի մենք ասենք, որ այդ ճանապարհով ստացված ապացույցն անթույլատրելի է: Եթե վարույթն իրականացնող մարմինն ի սկզբանէ մտադրված է մեղադրյալից խոստովանական ցուցմունք ստանալ և պատրաստ է դրա համար վերջինիս սպառնալ, ծեծել, մարմնական վնասվածք հասցնել կամ այլ կերպ խոշտանգել, ապա ապացույցների դատական դէպոնացման ինստիտուտի կիրառման պայմաններում նա դա կանի մինչև մեղադրյալին դատավորի մոտ տանելը: Եվ այս դէպքում էլ գրոյի կհավասարեցվի արդեն այս ինստիտուտն ամբողջությամբ: Հետևաբար, կարծում ենք, անհրաժեշտ է նախատեսել մեխանիզմ, որով *դատավորի առջև խոստովանական ցուցմունքը տալուց առաջ մեղադրյալը պարտադիր բուժզննում պետք է անցնի*: Այս դէպքում կարծում ենք, հնարավոր կլինի բացառել մեղադրյալից ոչ իրավաչափ միջոցներով խոստովանական ցուցմունք կորզելու հնարավորությունը:

2. Ապացույցի օգտագործման թույլատրելիության քննարկվող հիմքի հետ կապված՝ նշենք, որ Մարդու իրավունքների եվրոպական դատարանն իր բազմաթիվ նախադեպային որոշումներում անդրադարձել է այս խնդրին: Այսպէս, ապացույցները գնահատելիս, երբ հատկապէս հարցը վերաբերում է խոշտանգմանը, դատարանը սովորա-

բար կիրառում է «ողջամիտ կասկածից վեր» ապացուցման չափորոշիչը⁹³: Խոշտանգման (վատ վերաբերմունքի) վերաբերյալ տեղեկությունը և ապացույցները պետք է ձեռք բերվեն ամբողջական, հետևողական և օբյեկտիվ կերպով, քննությունը պետք է լինի բազմակողմանի⁹⁴: Երբ անձը կալանավորվելիս առողջ է եղել, սակայն ազատ արձակվելիս նա ունենում է վնասվածքներ, ապա պետությունը պարտավոր է համոզիչ բացատրություն տալ, թե ինչպէս են առաջացել այդ վնասվածքները⁹⁵: Խոշտանգման հարցերով քննությունը պետք է լինի անկախ, անկողմնակալ և հրապարակային, և որ իրավասու մարմինները պետք է գործեն օրինակելի ջանասիրությամբ և բարեխղճությամբ⁹⁶: Մեղադրող ապացույցը, լինի դա խոստովանության կամ իրեղեն ապացույցի տեսքով, որը ձեռք է բերվել բռնությունների գործադրման միջոցով կամ դաժանությունների կամ այլ վերաբերմունքի, որը կարելի է բնութագրել որպէս խոշտանգում, երբեք չպետք է դրվի տուժողի մեղքի ապացույցի հիմքում, անկախ նրա ապացուցողական նշանակությունից⁹⁷: Իսկ «Սևթափ Վեզնեդարոյուն ընդդէմ Թուրքիայի»⁹⁸ նախադեպային որոշման մեջ Մարդու իրավունքների եվրոպական դատարանն (ՄԻԵԴ) այն իրավական դիրքորոշումն է հայտնել, որ եթե կալանքի տակ եղած անձը բողոք է ներկայացնում առ այն, որ իրեն խոշտանգել են, և բողոքը քննության չի առնվում, ապա գործում է այն կանխավարկածը, որ նա իրոք ենթարկվել է խոշտանգման: Կարծում ենք, վերոշարադրյալ դրույթները անհրաժեշտ է ամրագրել օրենքում և

⁹³ St' u Ireland v. United Kingdom, 1978, թիվ 25, էջ 64-65, կետ 161:

⁹⁴ St' u Էրիկ Սվանիձե, Վատ վերաբերմունքի արդյունավետ քննություն, Եվրոպական չափանիշներ, 2011թ., էջ 20:

⁹⁵ St' u Tomasi v. France, 1992, էջ 40-41, Selmouni v. France, թիվ 25803/94, կետ 87, ECHR 1999- V:

⁹⁶ St' u Isayeva and Others v. Russia, 24 February of 2005թ., թիվ 57947/00, կետ 208-213:

⁹⁷ St' u Հարությունյան ընդդէմ Հայաստանի, գանգատ թիվ 36549/03, 2007թ., էջ 22, կետ 63:

⁹⁸ St' u Sevrap Veznedarogly v. Turkey, Judgment of 11 April of 2000:

ապահովել դրանց կիրառումը գործնականում: Մասնավորապես, քրեական դատավարության օրենսգրքում հարկ է ավելացնել 105.1 հոդված հետևյալ բովանդակությամբ. «1. Եթե անձը կալանավորվելիս առողջ է եղել, սակայն ազատ արձակվելիս վնասվածքներ ունի, ապա վարույթն իրականացնող մարմինը պարտավոր է պատշաճ բացատրություն ներկայացնել, թե դրանք ինչպես են առաջացել՝ այն կցելով քրեական գործին: 2. Եթե կալանքի տակ եղած անձը բողոք է ներկայացնում առ այն, որ իրեն խոշտանգել են, և բողոքը քննության չի առնվում, ապա գործում է այն կանխավարկածը, որ նա իրոք ենթարկվել է խոշտանգման»:

3. Քրեական դատավարության օրենսգրքի հոդված 284-ի 1-ին մասի համաձայն՝ անձանց նամակագրության, հեռախոսային խոսակցությունների, փոստային, հեռագրական և այլ հաղորդումների գաղտնիության իրավունքի սահմանափակում նախատեսող օպերատիվ-հետախուզական միջոցառումները, բացառությամբ այն դեպքերի, երբ խոսակցության մասնակիցներից կամ հաղորդակցվողներից մեկը նախապես դրանք լսելու կամ վերահսկելու համաձայնություն է տվել, կարող են իրականացվել միայն դատարանի որոշմամբ: Այս դրույթը գործում էր, քանի դեռ ՀՀ Սահմանադրական դատարանն իր 2010թ. ՄԴՈ-926 որոշմամբ այն հակասահմանադրական չէր ճանաչել: Այսինքն՝ հաղորդակցվողներից մեկի համաձայնությամբ նրանց խոսակցությունը լսելը հանգեցնում էր մյուս խոսակցի սահմանադրական իրավունքների խախտման: Այս պարագայում խոսք լինել չի կարող առանց անձանց գիտության նրանց խոսակցության գաղտնալսման մասին. այն միանշա-

նակ ոչ իրավաչափ արարք է: Հետևաբար, այդ ճանապարհով ձեռք բերված ապացույցներն էլ կլինեն անթույլատրելի: Տիպիկ իրավիճակ է նկարագրված ՄԻԵԴ-ի «Կանն ընդդեմ Սիացյալ Թագավորության», ինչպես նաև «Շենկն ընդդեմ Շվեյցարիայի» գործերում⁹⁹, որտեղ դիմողի նկատմամբ կայացված մեղադրական դատավճռի հիմքում դրված միակ ապացույցը եղել է օրենքի խախտմամբ ձեռք բերված ձայնագրությունը: Դատարանի դիրքորոշումն այն է, որ եթե դիմողը հնարավորություն է ունեցել վիճարկելու այդ ապացույցի օրինականությունը, բայց չի վիճարկել, հետևաբար առանց թույլտվության ձեռք բերված ձայնագրությունը կհամարվի թույլատրելի ապացույց: Մենք չենք կիսում այս տեսակետը: Այս երկու պայմանների միջև բացակայում է պատճառական կապը: Մեր համոզմամբ, *սպորինի ճանապարհով ձեռք բերված ձայնագրությունը չի կարող թույլատրելի ապացույց ճանաչվել անկախ այն հանգամանքից՝ անձը վիճարկել է դրա վավերականությունը (օրինականությունը), թե ոչ:*

4. Նախագծի համաձայն, գործելու է ապացույցների թույլատրելիության կանխավարկածը, այսինքն՝ վարույթի ընթացքում ձեռք բերված ապացույցները, ներառյալ վարույթի մասնավոր մասնակիցների ներկայացրած ապացույցները, համարվում են թույլատրելի, քանի դեռ պատշաճ իրավական ընթացակարգով հակառակը չի ապացուցվել¹⁰⁰: Ընդ որում, փորձագետի կարծիքն ու ցուցմունքը ևս ապացույցի ինքնուրույն տեսակ են համարվելու:

5. Ապացույցների թույլատրելիությունը կարգավորող նորմերից հետևում է, որ որպես ապացույց չեն կարող օգտագործվել քննչական կամ այլ դատա-

⁹⁹ St u Khan v. United Kingdom, 2000թ., թիվ 52207/99: St u Schenk v. Switzerland, 1988, թիվ 140.:

¹⁰⁰ St u Դ. Մելքոնյան, ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի նախագծի հիմնախնդիրներին նվիրված գիտական հոդվածների ժողովածու, Երևան, 2014թ, էջ 100:

վարական գործողության կատարման կարգի էական խախտմամբ ձեռք բերված փաստական տվյալները, հատկապես երբ դրանք իրենց հերթին հանգեցրել են դատավարության մասնակիցների իրավունքների էական խախտման: Ապացույցներ ձեռք բերելիս էական են այն խախտումները, որոնք, դրսևորվելով մարդու և քաղաքացու սահմանադրական իրավունքների և ազատությունների կամ սույն օրենսգրքի որևէ պահանջի խախտմամբ, դատավարության մասնակիցներին՝ օրենքով երաշխավորված իրավունքների զրկմամբ կամ սահմանափակմամբ կամ որևէ այլ կերպ ազդել են կամ կարող էին ազդել ստացված փաստական տվյալների հավաստիության վրա¹⁰¹: Այդ քննչական գործողություններից է խուզարկությունը: Քրեական դատավարության օրենսգրքի հոդված 225-ի համաձայն՝ քննիչը, բավարար հիմքեր ունենալով ենթադրելու, որ որևէ շենքում կամ այլ վայրում կամ որևէ անձի մոտ գտնվում են հանցագործության գործիքներ, հանցավոր ճանապարհով ձեռք բերված առարկաներ ու արժեքներ, ինչպես նաև այլ առարկաներ և փաստաթղթեր, որոնք կարող են նշանակություն ունենալ գործի համար, խուզարկություն է կատարում դրանք գտնելու և վերցնելու համար: Նույն հոդվածի 3-րդ մասի համաձայն, բնակարանի խուզարկությունը կատարվում է միայն դատարանի որոշմամբ: Խուզարկության կատարման կարգի համաձայն՝ քննիչն առաջարկում է կամովին հանձնել առգրավման ենթակա առարկաները և փաստաթղթերը, իսկ առաջարկը մերժվելու դեպքում առգրավումը կատարում է հարկադիր կարգով: Վճռաբեկ դատարանը Հուսիկ Բաղդասարյանի վերաբերյալ գործում¹⁰² մեկնաբանել է օրենսդրական այս նորմը և փաստել, որ հանձնումը համարվում է կամովին, եթե անձը, գիտակցելով, որ այդ պահին իրեն բացահայտելու իրական սպառնալիք չկա, իր հայեցողությամբ հանձնում է ՀՀ քրեական օրենսգրքի 235-րդ հոդվածում նշված առարկաները, այսինքն՝ անձի ընդունած այդ որոշումը պետք է լինի ազատ և գիտակցված: Բացահայտման իրական սպառնալիքի առկայությունը և դրանից դրդված հանձնումը չի կարող համարվել կամովին: Խնդիրներ առաջանում են հիմնականում խուզարկության կատարման հիմքերի հետ: Սեպուհ Թաղևոսյանի գործում¹⁰³ վճռաբեկ դատարանն այն իրավական դիրքորոշումն է հայտնել, ըստ որի խուզարկության կատարման փաստական հիմք կարող է հանդես գալ ցանկացած տվյալ, որը հնարավոր է գնահատման ենթարկել: Իսկ գնահատումը պետք է հանգեցնի այն ողջամիտ եզրահանգման, որ խուզարկության արդյունքում կարող են ձեռք բերվել փնտրվող առարկաները: Դատարանի որոշման համար առիթ է հանդիսանում խուզարկություն կատարելու թույլտվություն ստանալու միջնորդություն հարուցելու մասին նախաքննական մարմնի որոշումը: Խուզարկության կատարման որոշման մեջ դատարանը կոնկրետ նշում է, թե ինչ առարկա գտնելու համար է այն տրվում: Նման իրավակարգավորման պայմաններում ստեղծվում է մի իրավիճակ, երբ քննիչը խուզարկության ընթացքում հայտնաբերում է խուզարկության մասին որոշման մեջ չմատնանշված առարկա (օրինակ թմրանյութ), և դրանց թույլատրելիության հարցն է վիճարկվում: Ստացվում

¹⁰¹ Տե՛ս Հայաստանի Հանրապետության քրեական դատավարություն. Ընդհանուր մաս, Երևան, 2006թ., էջ 282:

¹⁰² Տե՛ս Վճռաբեկ դատարանի Հուսիկ Բաղդասարյանի վերաբերյալ թիվ ԱՎԴ2/0059/01/08 գործ, <http://www.arlis.am/DocumentView.aspx?docid=48886> :

¹⁰³ Տե՛ս Վճռաբեկ դատարանի Սեպուհ Թաղևոսյանի վերաբերյալ թիվ ԵՇԳ/0073/07/15 գործ, http://datalex.am/?app=AppCaseSearch&case_id=13229323905402019:

է, որ այդ թմրանյութը ձեռք է բերվել առանց համապատասխան որոշման կատարված խուզարկության ընթացքում: Այս խնդրին լուծում է առաջարկել քրեական դատավարության օրենսգրքի նախագիծը: Մասնավորապես, 243-րդ հոդվածի 5-րդ մասի համաձայն՝ բացի խուզարկության որոշման մեջ նշվածից, քննիչը վերցնում է նաև խուզարկության ընթացքում հայտնաբերված այն բոլոր օբյեկտները, որոնք օրենսդրությամբ հանված են շրջանառությունից կամ որոնք իրենց բնույթով, տարբերակիչ նշաններով կամ իրենց վրա առկա հետքերով կարող են կապված լինել մեկ այլ ենթադրյալ հանցագործության հետ: Ողջունելի է նաև մոտեցումը: Բայց, որպեսզի առհասարակ խուզարկության արդյունքում ձեռք բերված առարկաների որպես իրեղեն ապացույցների թույլատրելիության ճանաչման խնդիր չառաջանա, առաջարկում ենք օրենսդրորեն ամրագրել հետևյալը. դատավորը խուզարկության մասին որոշման մեջ չի սահմանափակում հայտնաբերման ենթակա օբյեկտների թվարկումը: Կարող է նաև սահմանվել, որ եթե վարույթն իրականացնող մարմնի բարեխիղճ գործելու պայմաններում են ի հայտ գալիս տվյալ անձի կողմից այնպիսի հանցանք կատարած լինելու վերաբերյալ տվյալներ, ռոնց կապացությամբ նախատեսված չէ գաղտնի քննչական գործողություն կատարելու հնարավորություն, ապա դրանք դատարանի թույլտվությամբ կարող են օգտագործվել:

6. Դատավարագետները միասնական մոտեցում չունեն դիակը կամ նրա մասերը իրեղեն ապացույց ճանաչելու վերաբերյալ: Յու. Օրլովը նշում է, որ իրեղեն ապացույցներից բացի գոյություն ունեն նյութական օբյեկտներ,

որոնք իմացաբանական տեսանկյունից ապացուցման գործընթացում ունեն նույն դերը, ինչ որ իրեղեն ապացույցները, բայց դատավարական իմաստով քրեական գործին չեն կցվում՝ ելնելով բարոյաէթիկական նկատառումներից (օրինակ՝ դիակը)¹⁰⁴: Ա. Բարիզինան նշում է, որ թեև մարդու դիակը համարվում է հանցավոր ոսնձգության օբյեկտ, սակայն այն էթիկական նորմերի տեսանկյունից չի կարող հանդիսանալ իրեղեն ապացույց: Քանզի եթե դիակը ճանաչվի իրեղեն ապացույց, ապա այն, ընդհանուր կանոնի համաձայն, պետք է նաև հետազոտվի դատական լուսմների ընթացքում¹⁰⁵: Այս կապակցությամբ Բ. Բեզլիպկինը նշում է, որ դատական նիստի ժամանակ հնարավոր չէ հետազոտել մարդու մարմնի մասերը¹⁰⁶:

Դիակը իրեղեն ապացույց ճանաչելը կարող է որոշ հակասությունների լուծում դառնալ: Նախ հասկանանք, թե ինչ հակասությունների ու թերությունների մասին է խոսքը: Պատկերացնենք իրավիճակ, երբ մեղադրյալը խոշտանգման արդյունքում ցուցմունքներում նշում է դիակի գտնվելու վայրը: Խոշտանգման արդյունքում ձեռք բերված տվյալների հիման վրա վարույթն իրականացնող մարմինը կատարում է դեպքի վայրի զննություն և հայտնաբերում դիակը: Դիակից վերցված նմուշների հիման վրա նշանակվում է փորձաքննություն, որի եզրակացությամբ հաստատվում է խոշտանգման ենթարկված անձի մեղավորությունը: Արդյո՞ք դեպքի վայրի զննության, փորձաքննության եզրակացության նկատմամբ կիրառելի է «թունավոր ծառի պտուղները թունավոր են» սկզբունքը: Նմանատիպ իրավիճակ է առկա Մարդու իրավունքների եվրոպական դատարանի՝ «Գաֆգենն ընդդեմ Գերմանիայի» գործում: Եվրո-

¹⁰⁴ Орлов Ю. К. Основы теории доказательств в уголовном процессе. Науч. Прак. Пособие М, 2000, Стр. 114 :

¹⁰⁵ Барыгина А. А. Особенности оценки отдельных видов доказательств в уголовном судопроизводстве, Монография М., Юрлитинформ, 2013, Стр. 212:

¹⁰⁶ Безлипкин. Б.Т. Настольная книга следователя и дознавателя. М., Проспект, 2011, Стр. 131-132:

պական դատարանը գտել է, որ իրեղեն ապացույցը, որը ձեռք է բերվել բռնության գործադրման արդյունքում, առնվազն այն դեպքերում, երբ այդ բռնությունը կարելի է որակել որպես խոշտանգում, երբեք չի կարող մեղադրյալի մեղքի ապացույց հանդիսանալ, անկախ նրա իրական արժեքից: Ցանկացած այլ կարծիք ծառայելու է հոգուտ բարոյապես անթույլատրելի վարքագծի անուղղակի օրինականացմանը: Խոշտանգման արդյունքում ստացված խոստովանության շնորհիվ ձեռք բերված իրեղեն ապացույցների օգտագործումը նույնքան մեծ կասկածի տակ է դնում դատավարության ընդհանուր անաչառության կանխավարկածը, որքան ստացված խոստովանության օգտագործումը: Դատարանը «Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների մասին» Եվրոպական համաձայնագրի 6-րդ հոդվածի 1-ին և 3-րդ կետերի խախտում չի արձանագրել¹⁰⁷:

«Թունավոր ծառի պտուղները թունավոր են» տեսության համաձայն օրենքի խախտմամբ ձեռք բերված փաստական տվյալների հիման վրա ստացված ապացույցները նույնպես անթույլատրելի են¹⁰⁸: ՀՀ վճռաբեկ դատարանն այս կանոնին անդրադարձել է Արմեն Սարգսյանի¹⁰⁹, Մելինե Սարգսյանի¹¹⁰, Գագիկ Միքայելյանի¹¹¹ և այլոց վերաբերյալ իր նախադեպային որոշումներում: Սակայն այս տեսությունը չպետք է բացարձակ ընկալել: Հնարավոր են դեպքեր, երբ «թունավոր ծառի պտուղները թունավոր են» կանոնը չգործի: Չափանիշը հետևյալն է.

անօրինական ճանապարհով ստացված տվյալի վրա ամբողջությամբ հիմնված ապացույցն անթույլատրելի ճանաչելու համար անհրաժեշտ է, որ բացակայի ողջամիտ ջանքերով այդ ապացույցը ստանալու հնարավորությունը: Ինչպես, օրինակ «Նիքան ընդդեմ Ուիլյամսի» ամերիկյան գործով դատարանը չի կիրառել «թունավոր ծառի պտուղների» կանոնը պարզաբանելով, որ ապացույցները մեծ ջանքերի գնով, բայց վաղ թե ուշ ձեռք էին բերվելու¹¹²: Այս բացառությանը վճռաբեկ դատարանն անդրադարձել է Ժ. Մեֆիլյանի վերաբերյալ գործով¹¹³:

Անդրադառնալով դիակը իրեղեն ապացույց ճանաչելու հիմնահարցին՝ փորձենք հիմնավորել դրա անհրաժեշտությունը: Եթե դիակն իրեղեն ապացույց չճանաչվի, ապա քննիչը կարող է ցանկացած անօրինական ճանապարհով այն ձեռք բերել: Չէ՞ որ քննիչն այս դեպքում կաշկանդված չի լինի ապացույցների թույլատրելիության կանոններով: Եթե հետևենք այն մոտեցմանը, որ դիակն իրեղեն ապացույց չէ, ապա նշված օրինակում փորձաքննության եզրակացությունը պետք է ճանաչել որպես թույլատրելի ապացույց, քանի որ փորձաքննությունը կատարվել է ոչ թե ապօրինի ձեռք բերված ապացույցի, այլ ապացույց չհանդիսացող դիակի հիման վրա: Այսինքն, մենք քրեական գործում ունենք մի փաստ, որը դատավարական կարգավիճակ չունի, ձեռք է բերվել քննչական գործողության արդյունքում, բայց ապացույց չէ: Այսինքն, եթե դիակն իրեղեն ապացույց չի ճանաչվում, ապա

¹⁰⁷ St' u Gäfgen v. Germany, 2010 թ., գործ թիվ 22978/05:

¹⁰⁸ ՀՀ քրեական դատավարություն, Մաս 1, Հեղինակային խումբ: Գիտ. խմբ. Արթուր Ղամբարյան, Երևան, 2016թ., էջ 391:

¹⁰⁹ St' u Վճռաբեկ դատարանի՝ Արմեն Մելյանի Սարգսյանի վերաբերյալ թիվ ԵՔԸԳ/0295/01/08 գործը:

¹¹⁰ St' u Վճռաբեկ դատարանի՝ Մելինե Միշայի Սարգսյանի վերաբերյալ թիվ ԵԳԴ/0081/01/11 գործը:

¹¹¹ St' u Վճռաբեկ դատարանի՝ Գագիկ Գառնիկի Միքայելյանի վերաբերյալ թիվ ԵԱԴԴ/0085/06/09 գործը:

¹¹² St' u U.S. Supreme Court, N-82-1651, decision of 11 June 1984, 467 U.S. 431 (1984), p. 441:

¹¹³ St' u Վճռաբեկ դատարանի՝ Ժիրայր Սիմոնի Սեֆիլյանի վերաբերյալ թիվ ՎԲ-07/13 գործը, <http://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=92907> :

անձը զրկվում է փորձաքննությունը վիճարկելու հնարավորությունից, իսկ այդպիսի հնարավորությունից անձին զրկելը հավասար է նրա իրավունքների անհիմն սահմանափակման:

Բացի այդ, եթե դիակն իրեղեն ապացույց ճանաչվի, ապա պարտադիր չէ, որ այն կցվի քրեական գործին, բերվի դատարան ու նիստի ընթացքում գնվի: Քրեական դատավարության օրենսգիրքը հատուկ մեխանիզմներ է նախատեսում շուտ փչացող օբյեկտների և դրանց դատարան ներկայացնելու անհնարինության դեպքերի համար: Եթե առարկան շուտ փչացող կամ մեծ ծավալի է, վարույթ իրականացնող մարմինը այն լուսանկարում է և քրեական գործին կցում է տվյալ առարկայի, այս դեպքում դիակի լուսանկարը: Դիակն իրեղեն ապացույց ճանաչելու հրամայականը մեկ նպատակի է ծառայում. բացառել այն իրավիճակները, երբ անձին կատարմամբ կայացված մեղադրական դատավճռի հիմքում դրվում են նրա խոշտանգման արդյունքում ձեռք բերված ապացույցները:

7. ՀՀ քրեադատավարական օրենսդրության տեսանկյունից օպերատիվ-հետախուզական միջոցառումներն ինքնին ապացույց հավաքելու միջոց չեն: Վարույթն իրականացնող մարմինը քննչական գործողության կատարման հիմքում կարող է դնել օպերատիվ-հետախուզական տվյալները: Այս դեպքում քննչական գործողությունների արդյունքների թույլատրելիությունն ապահովելու համար նա պետք է ստուգի՝

1. արդյո՞ք օպերատիվ-հետախուզական տվյալները ստացվել են «Օպերատիվ-հետախուզական գործունեության մասին» ՀՀ օրենքով թվարկված օպերատիվ-հետախուզական միջոցառումներ կատարելու ճանապարհով.

2. արդյո՞ք օպերատիվ-հետախուզական միջոցառումներն իրականացվել են իրավասու մարմինների կողմից.

3. արդյո՞ք պահպանվել են օպերատիվ-հետախուզական միջոցառումների իրականացման համար օրենքով նախատեսված հիմքերը, պայմաններն ու կարգը, հատկապես օպերատիվ-հետախուզական միջոցառումների արդյունքներն արձանագրելու վերաբերյալ օրենքի պահանջները¹¹⁴:

Նախագծի 6-րդ հոդվածի 5-րդ կետը նախատեսում է. «Հետաքննությունը հետաքննության մարմնի կողմից նախաքննության շրջանակներում իրականացվող և դրան օժանդակող գործունեություն է, որը ներառում է օպերատիվ-հետախուզական միջոցառումների և գաղտնի քննչական գործողությունների կատարումը»: Գաղտնի քննչական գործողություններ են անվանվել այն օպերատիվ-հետախուզական միջոցառումները, որոնք ինկորպորացվել են Նախագծում և ստացել քրեադատավարական կարգավորում: Այստեղ խոսքն այն օպերատիվ-հետախուզական միջոցառումների մասին է, որոնք իրականացվում են հարուցված քրեական վարույթի պայմաններում, քրեական վարույթի շրջանակներում և դրա կապակցությամբ, իսկ այն օպերատիվ-հետախուզական միջոցառումները, որոնք ունեն հանցագործությունները նախականիսելու, կանխելու կամ խափանելու նպատակ, համապատասխանաբար շարունակում են կարգավորվել «Օպերատիվ-հետախուզական միջոցառումների մասին» ՀՀ օրենքով: Նախագիծն այս գործողությունների արդյունքը չի համարում ապացույց, ուստի բացակայում է Նախագծով դրանց իրականացման կարգը մանրամասն սահմանելու անհրաժեշտությունը:

¹¹⁴ Տե՛ս ՀՀ քրեական դատավարություն, Մաս 1, հեղինակային խումբ: Գիտ. խմբ. Արթուր Ղամբարյան, Երևան, 2016թ, էջ 386:

Վերոնշյալ իրավիճակների շարքը կարելի է շարունակել: Դրանք բազմաթիվ են և, բնականաբար, հնարավոր չէ այդ բոլորը օրենքով կարգավորել: Պարզապես յուրաքանչյուր դեպքում, երբ վիճարկվում է ապացույցի թույլատրելիությունը, պետք է պարզել, թե

1. Արդյո՞ք այն ձեռք է բերվել քրեական դատավարության օրենսգրքով սահմանված կարգի պահպանմամբ,
2. Այն ձեռք բերվելիս խախտվել է

անձանց իրավունքները, թե՞ ոչ, և եթե այո, ապա հնարավոր չէ՞ր այլ ճանապարհով այն ձեռք բերել, այնպես, որ անձանց իրավունքների խախտումը նվազագույնի հասցվեր,

3. Արդյո՞ք ձեռնարկվել են պատշաճ միջոցներ, որպեսզի ձեռք բերված ապացույցները զերծ մնան կորստից, վնասվելուց, փչանալուց, այլ առարկաների հետ շփվելուց կամ խառնվելուց:

ԱՊԱՑՈՒՅՑՆԵՐԻ ԹՈՒՅԼԱՏՐԵԼԻՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐԸ ՔՐԵԱԿԱՆ ԴԱՏԱՎԱՐՈՒԹՅՈՒՆՈՒՄ

ԱՆԻ ԼԵՎՈՆԻ ԽՈՒԲՇՈՒԴՅԱՆ

ԵՊՀ իրավագիտության ֆակուլտետի բակալավրիատի ուսանող

ԱՍՓՈՓՈՒՄ

Հոդվածը վերաբերում է քրեական դատավարությունում ապացույցի թույլատրելի ճանաչելու հիմնախնդրին: Վեր են հանվել ցուցմունքների դատական դեպոնացման ինստիտուտի որոշ թերություններ, առաջարկներ են կատարվել դրանց որոշ դրույթների օրենսդրական բարեփոխման և ՀՀ օրենսդրության մեջ ամրագրելու վերաբերյալ: Անդրադարձ է կատարվել խուզարկության ընթացքում հայտնաբերված այլ հանցագործության մասին վկայող առարկաների ապացուցողական նշանակությանը, առաջարկվել են որոշակի լուծումներ: Հիմնավորվել է դիակն իրեդեն ապացույց ճանաչելու անհրաժեշտությունը, որը հնարավորություն կտա վիճարկելու ապօրինի ճանապարհով հայտնաբերված դիակի նկատմամբ նշանակված դատաբժշկական փորձաքննության թույլատրելիությունը:

Բանալի բառեր՝ ապացույցի թույլատրելիություն, խուզարկում, ցուցմունքների դատական դեպոնացում, խոշտանգում, ցուցմունք:

ОСНОВНЫЕ ПРОБЛЕМЫ ДОПУСТИМОСТИ ДОКАЗАТЕЛЬСТВ В УГОЛОВНОМ ПРОЦЕССЕ

ХУРШУДЯН АНИ ЛЕВОНОВНА

*Студентка факультета правового
бакалавриата ЕГУ*

РЕЗЮМЕ

Статья относится к проблеме допустимости доказательства в уголовном процессе. Были выявлены некоторые недостатки института судебного депонирования, сделаны предложения по улучшению некоторых положений законодательства и скреплению их в законодательстве РА. Было уделено внимание к доказательному значению предметов, относящихся к другому преступлению и обнаруженных во время обыска, предложены некоторые решения. Была обоснована необходимость признания трупа как вещественное доказательство, что даст возможность оспорить допустимость назначенной судебно-медицинской экспертизы в отношении незаконно обнаруженного трупа.

Ключевые слова: *допустимость доказательства, обыск, судебное депонирование показаний, пытки, показание.*

THE PROBLEMS OF ADMISSIBILITY OF EVIDENCES IN CRIMINAL LAW PROCEDURE

ANI LEVON KHURSHUDYAN

Student of Bachelor Jurisprudence Faculty of YSU

SUMMARY

The article refers to the problem of admissibility of evidence in criminal law procedure. Some shortcomings of the Institute of judicial deposit were identified, suggestions were made to improve certain provisions of the law and to bind them in the RA legislation. Attention was given to the probative value of the items related to another crime, that were found during the search. Some solutions have been proposed. It was justified the necessity to recognize the corpse as evidence, that may enable to dispute the admissibility of forensic medical examination of the corpse found illegally.

Key words: *admissibility of evidence, judicial deposit, search, torture, indication.*

ՄԻԱՎՈՐՎԱԾ ԱԶԳԵՐԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ԳԼԽԱՎՈՐ ՔԱՐՏՈՒՂԱՐ ԲԱՆ ԿԻ ՄՈՒՆԻ ՈՒՂԵՐԶԸ ՄԱԿ-Ի ՕՐԿԱ ԱՌԹԻՎ

Այս տարի ՄԱԿ-ի օրը նշվում է թե՛ աշխարհի, թե՛ ՄԱԿ-ի համար անցումային ժամանակահատվածում:

Մարդկությունը թևակոխել է կայունության դարաշրջանի «Կայուն զարգացման օրակարգ - 2030»-ի մեծ պարտավորությունն իրականացնելու համաշխարհային հանձնառությամբ: Եվ ահա, կազմակերպության 71-րդ տարում մենք ունենք 17 նպատակներ, որոնք մեզ մղելու են դեպի ավելի լավ ապագա բոլորի համար՝ առողջ մոլորակի վրա:



Աշխարհն, ի վերջո, հաղթահարում է այն մտակերտվածքը, որի համաձայն բարգավաճման տանող ուղին էներգակիրների այրումն է: Ռեկորդային բարձր ջերմաստիճանի պայմաններում ՄԱԿ-ի անդամ երկրները ռեկորդային ժամանակահատվածում ընդունել են կլիմայի փոփոխության վերաբերյալ Փարիզի համաձայնագիրը: Այս շրջադարձային միջոցն ուժի մեջ կմտնի նոյեմբերի 4-ին: Այդ պատմական մեկնակետն ամփոփում է ավելի կանաչ, մաքուր և սակավ ածխածնային զարգացման մեր լավագույն հնարավորությունը:

Միավորված ազգերի կազմակերպությունը ևս անցումային փուլում է. ութերորդ գլխավոր քարտուղարին փոխարինելու է գալիս իններորդը: Ես պատիվ եմ ունեցել վերջին 10 տարիներին ծառայելու ՄԱԿ-ի ժողովուրդներին: Մենք միասին դրել ենք համատեղ առաջընթացի լուրջ հիմք: Եվ այդ հիմքի վրա պետք է կառուցենք ավելի ջանասիրաբար աշխատելով կանանց գորացման, երիտասարդների ներգրավման ու բոլորի մարդկային իրավունքները պաշտպանելու ուղղությամբ:



Բայց մենք նաև ահռելի հիասթափություններ ենք ունեցել, այդ թվում՝ չլուծված հակամարտությունները, որոնք անսահման տառապանքների պատճառ են փոթորկված Մերձավոր Արևելքում, Հարավային Սուդանում, Մահելում և այլուր: Բռնության ու աղետի այս և այլ առաջնագծերում ՄԱԿ-ի խիզախ անձնակազմը շարունակում է լինել իրավիճակի կիզակետում ու արձագանքել խոցելի վիճակում գտնվողների ծանր կացությանը:

Շնորհակալ եմ աշխարհի բոլոր մարդկանց իրենց աջակցության համար և հորդորում եմ անմնացորդ սատարել նորանշանակ գլխավոր քարտուղար ԱՆՏՈՆԻՌՈ ԳՈՒՏԵՐԵՇԻՆՆԵՐԻՆ՝ շարունակելու համաշխարհային խաղաղությանը, կայուն զարգացմանն ու մարդու իրավունքների պաշտպանությանն ուղղված մեր առաքելությունը:

<http://www.un.am/hy/news/510#sthash.q5ayhFb1.dpuf>

2/74 2016

For the Sake of
JUSTICE

ՀԱՍՑԵՆ՝ ՀՀ, ք. Վանաձոր, Շիրակացու 1-ին նրբ., թիվ 2
Հեռ. +374 (322) 2-29-67,
Էլ. փոստ acrpc@acrpc.am
URL www.acrpc.am

ADDRESS: 1 Shirakatsi Lane, Building 2, Vanadzor, RA
Tel. (+374 322) 2-29-67
E-mail: acrpc@acrpc.am
URL: www.acrpc.am

**ՀԻՄՆԱԳԻՐՎԵԼ Է 1989թ.
FOUNDED IN 1989**

*Գրանցված է ՀՀ Արդարադատության նախարարությունում:
Գրանցման վկայական՝ թիվ 1016*

ISSN 1829-4871

**Հիմնադիր և հրատարակիչ՝ Հայկական սահմանադրական
իրավապաշտպան կենտրոն (ՀՄԻԿ) հասարակական կազմակերպություն**

Ստորագրված է տպագրության 2016թ. դեկտեմբերի ????
Ծավալը՝ 4,5 տպագր. մամուլ, տպաքանակը՝ 100

Տպագրվել է «ՎԱՆ ԱՐՅԱՆ» հրատարակչատան տպարանում